

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետեւ ոչինչ եկեղեցական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել դիտումեան միայնակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ Հինեական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետեւ լոյս և ճշմարտութիւն և աղատութիւն խաւարի բարեբանեան գերութենից:

Ս. Նալաբեանց:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻԳՆԱՑՔ.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱԳԵՏՐԱԿ 9.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ՐՆԹԵՍԻՐԱՏՆԵՐ·

ԹՇՈՒԱՌ ԵՂԻՍԱԲԷԹԸ·

(Թարգմանութիւն Ռուսերէնէ.)

Կարծեմ թէ ոչ ոք Մոսկվայի բնակիչներից, չունի այնքան տեղեկութիւն նորա շրջակայ տեղերի վերայ, որքան ես· պատճառ, հաղիւ կը գտանվի այնպիսի մարդ, որ իմ չափ տեսած կամ պատահած լինի նորա շրջակայքումը: Ես միշտ էի գալիս անկարգ և անխորհուրդ, ինչպես պատահումէր, և առ հասարակ գնումէի այն անտառները, ձորերը և հովիտները, որ պատումեն Մոսկվա քաղաքը:

Ամենայն տարի նորանոր տեղեր էի գտանում, կամ հինների մէջ նոր գեղեցկութիւններ: Բայց ամենից առաւել ինձ ախորժ է գալիս այն տեղը, ուր բարձրանումեն տխուր, գոթիական Սիմէոնեան վանքի աշտարակները: Կանգնելով այս լեռան վերայ, համարեա թէ տեսանումես աչ կողմից ամբողջ Մոսկվան· այն տների, եկեղեցիների սարսափելի բազմութիւնը, որոնք իբրև մի փառահեղ ամփիթէատրոն ընկնումեն մարդու աչքերին, հիանալի տեսարան է, մանաւանդ, երբ արեգակը իւր անհամար ճառագայթներով լուսաւորումէ, երբ նորա երեկոյեան ճառագայթքը վառվռումեն անհամար ոսկեզօծ գմբէթներ դէպ ի երկինքը դարձուցած ոսկի խաչերով: Ցածումը երևումեն թանձր ծաղիկներով

ծածկած մարգեր· իսկ նոցա միւս կողմումը, մաքուր և դեղին աւազնեւրի միջով վաղումէ Հանդարտ գետը, որի ալիքները խաղումեն ձկնորսական նաւակների թիերի և ծանր լաստափայտերի ղեկերի հետ, որ Ռուսաստանի պտղաբեր սահմաններից հաց են բերում անյագելի Մոսկվային։ Ջրի միւս կողմը երևումէ մի կաղնի անտառ, որի մօտ արածումեն հօտեր, ուր երիտասարդ հովիւները, ծառերի ստուերների տակ հանգստացած, երգումեն վշատ տաղեր, որոնցով կարճեցնումեն ամառնային օրերը, որ իւրեանց միօրինակութեամբ ձանձրալի էին։ Փոքր ինչ հեռի սորանից, կանաչ ծառերի միջից փայլումէ ոսկեգագաթ Դանիէլեան վանքը· առաւել հեռուից, համարեա թէ Հորիզոնի ծայրումը, երևումեն վերջալոյսի սարերը։ Ձախ կողմումը, կան լայնատարած ցորենով ծածկած դաշտեր, անտառներ, երեք կամ չորս գիւղեր, որոնցից շատ հեռի չէ կալոմենոք անունով գիւղը իւր բարձր պալատովը։

Ստէպ գալիս եմ այս տեղ, գրեթէ միշտ գարնան առաջը դուրս գալու և ընդունելու նորան.— գալիս եմ նոյնպէս և աշնան տխուր օրերումը ողբալու բնութեան հետ միասին։ Սարսափելի է միւռում քամին աւերացած վանքի պատերի, բարձր խոտով ծածկած գերեզմանների միջով և ծերի խաւար անցքերումը։

Այն տեղ քանդված գերեզմանաքարերի վերայ թիկն տուած, ականջ եմ դնում անհուն ժամանակների մէջ կորուսած, անցած ու գնացած խուլ հառաչանքին, որով իմ սիրտը դղրդվումէ և դողում։ Երբեմն մտանումեմ այն խցերի մէջ, երևակայումեմ նորանց, որոնք այն տեղ բնակվումէին... ողբալի՞ տեսարաններ... Տեսանումեմ այս տեղ մի ծերունի, որ ծունր իջած Քրիստոսի խաչափայտի առաջևում, աղաչումէ Աստուած, որ նորան շուտով քակէ և աղատէ երկրային կապանքներից· պատճառ, կեանքի ամենայն զուարճութիւնը անհետացած է նորա համար, բայց ի տկարութեան և թուլութեան դգացողութիւններից։ Այն տեղ պատանի աբեղայն գունատ երեսով, տխուր հայեցուածով դուրս է նայում պատուհանի վանդակից, տեսանումէ ուրախ թըռչնակները, որ աղատ լողումէին օդեղէն ծովի մէջ.— տեսանումէ և թափումէ աչքերից դառն արտասուք։ Նա տրտմումէ, թառամումէ, չորանումէ և վանգակի վշատ ձայնը իմաց է տալիս ինձ նորա վաղահաս մահը։ Երբեմն տաճարի դուռերի վերայ, տեսանումեմ այս վանքումը պատահած հրաշագործութիւնների պատկերները· այն տեղ ձկներ են թափում երկնքից թշնամիներից շրջապատած վանքի բնակիչները կերակրելու համար· այս տեղ Աստուածամօր պատկերը փախցնումեն թշնամիքը։ Սոքա բոլորը նորոգումեն իմ մտքումը Ռուսաստանի պատմութիւնը— այն տխուր պատմութիւնը և այն ժամանակների, երբ բարբա-

րոս Թաթարները և Լիտովցիքը կրակով ու սրով ամայացնումէին Ռուսաստանի մայրաքաղաքի շրջակայքը· երբ Թշուառ Մոսկվայն, իրրև անպաշտպան այրի, մի միայն Աստուծուց էր օգնութիւն խնդրում իւր դառն անբաղդութիւնների մէջ· Բայց ամենից առաւել քարշում էին դէպ ի Սիմէօնեան վանքի պատերը — այն ողորմելի Եղիսաբէթի ողբալի յիշատակը: Ա՛խ· ես սիրում եմ այն առարկաները, որոնք դրդդումն են իմ սիրտը և հարկադրումն ինձ թափել քնքուշ վշտերի արտասուք:

Իբր երկու հարիւր կանգուն վանքի պատերից հեռի, թխտենիների անտառի մօտ, կանաչ մարգերի մէջ կայ մի ամայի, խրճիթ, անդուռն, անպատուհան և անյատակ· որի ծածկոցը վաղուց է արդէն փտել և փլել: Սորանից շատ ժամանակ յառաջ, այս խրճիթի մէջ բնակվում էր գեղեցիկ և սիրելի Եղիսաբէթը իւր ծեր մօր հետ:

Եղիսաբէթի հայրը ըստ բաւականին հարուստ գիւղացի էր, որովհետև շատ աշխատասէր մարդ էր· վարում, ցանում և ապրում էր առ հասարակ բարեխառն: Բայց շուտով նորա մահից յետոյ կինը և աղջիկը տնանկացան: Վարձկանի ծոյլ ձեռքերը վատ էին մշակում երկիրը, և հացը դադարեց պտղաւորելուց: Նոքա չարկադրվեցան իրանց գետինը վարձու տալ շատ փոքր արծաթով: Բայ ի սորանից ողորմելի այրին արտասուք թափելով ամուսնու մահի վերայ, ըստ որում և գիւղացի կանայքը գիտեն սէր, — օր ըստ օրէ թուլանում էր և միանգամայն տկարանում գործ կատարելու: Մի միայն Եղիսաբէթը, որ տասնեւհինգ տարեկան մնացել էր հօրից — մի միայն նա չխնայելով իւր հաղուագիւտ գեղեցկութիւնը, աշխատում դիշեր և ցերեկ, գործում կտաւ, հիւսում գուլպաներ, հաւաքում գարնան ծաղիկներ, ամառը պտուղներ էր քաղում և վաճառում իւր աշխատանքը Մոսկվայում: Զգացող և բարի ծեր մայրը, տեսանելով իւր աղջկայ անվաստակելի ջանքը, ստէպ սեղմում նորան իւր թոյլ ղարկող սրտին և անուանում նորան Աստուծու ողորմութիւն, ուրախութիւն իւր ծերութեան. և Աստուած էր աղաչում որ նա վարձատրէ նորան, այն ամենայն բաների փոխանակ, ինչ որ առնում նա իւր մօրը: — «Աստուած տուել է ինձ ձեռքեր, որ ես աշխատեմ,» — ասում Եղիսաբէթը, — «դու կերակրեցիր ինձ քո կաթովը և նայեցիր ինձ, երբ ես երեխայ էի· այժմ իմ կարգն է քեզ դարմանել: Դադարի՛ր միայն տրտմելուց, դադարի՛ր լալուց· մեր արտասուքը չեն կարող յարուցանել իմ Հայրը:» Բայց ստէպ քնքուշ Եղիսաբէթը չէր կարող և իւր արտասուքը պահել, ա՛խ· նա յիշում որ նա Հայր ունէր, այլ այժմ չկայ նա· բայց մօրը հանդարտեցնելու համար աշխատում թագուցանել և իւր (արտասուքը) սրտի ցաւը, և երեխի հանդարտ և ուրախ: — «Միւս աշխարհում,

սիրելիդ իմ Եղիսաբէթ,» — պատասխանումէր վշտացած ծերը, — «միւս աշխարհումը կը դադարիմ ես լալուց։ Այն տեղ ասումեն, թէ ամենեքեան ուրախ կը լինին, ես էս Հաւատի ուրախ կը լինիմ, երբ կը տեսանեմ քո Հայրը։ Բայց այժմ չկամիմ մեռանել. ինչ կը լինի քո վիճակը առանց ինձ։ Քեզ ո՛ւմ յանձնեմ... Ո՛չ. Աստուած տայ, որ քո համար յարաջ տեղ գտանեմ. կարելի է շուտով գտանվի մի բարի մարդ։ Այն ժամանակ, օրհնելով ձեզ, իմ սիրելի զաւակներդ, կը խաչակնքեմ և հանգիստ կը մտանեմ գէջ գերեզմանի մէջ։»

Երկու տարի անցաւ Եղիսաբէթի հօր մահից յետոյ. բոլոր մարգերը ծածկվեցան ծաղիկներով, և Եղիսաբէթը եկաւ Մոսկվա ծաղիկներ վաճառելու։ Մի երիտասարդ և լաւ հագնված մարդ, գեղեցիկ դէմքով, պատահեցաւ նորան փողոցումը։ Եղիսաբէթը ցոյց տուեց նորան ծաղիկները և կարմրեց։ «Աղջիկ, դու վաճառո՞ւմես ծաղիկներդ.» — հարցրեց երիտասարդը ժպտելով։ «Վաճառումեմ,» — պատասխանեց աղջիկը. «Ո՞րքան ես ինդրուր,» — ասաց։ «Հինգ կոպէկ» — պատասխանեց։ — «Այդ շատ դիւրագին է. ահա քեզ մի ռուբլի։» Եղիսաբէթը զարմացաւ և համարձակվեցաւ նայել մատաղահաս մարդի վերայ, և առաւել կարմրած դէպ ի գետինը կորացնելով իւր աչքերը, ասաց. «Ես չկամիմ առնուլ ռուբլի։» — «Ի՛նչ պատճառով» — «Ինձ աւելի արծաթ հարկաւոր չէ։» — «Ես կարծումեմ, որ գեղեցիկ ձեռքերով քաղած գեղեցիկ ծաղիկները կ՚արժեն ռուբլի։ Եթէ դու չես առնում ռուբլին, ահա քեզ հինգ կոպէկ։ Ես կը ցանկայի միշտ քեզանից գնել ծաղիկներ. կը ցանկայի, որ դու միշտ իմ համար հաւաքէիր դոցանից։» Եղիսաբէթը տուեց ծաղիկները, առաւ հինգ կոպէկը, գլուխ տուեց և կամենումէր երթալ, բայց անծանօթ մարդը չթողեց, բռնելով նորա ձեռքից. — «Այժմ ո՞ւր կ՚երթաս.» — «Տուն.» — «Ո՞ր տեղ է քո տունը։» Եղիսաբէթը ասաց իւր բնակութիւնը և գնաց։ Երիտասարդը չկամեցաւ աւելի բռնել աղջիկը, գուցէ այն պատճառով, որ մօտից անց կացողները սկսումէին կանգնել, և նայելով նոցա վերայ, խորամանկութեամբ ծիծաղումէին։ Եղիսաբէթը տուն եկած, իւր մօրը պատմեց բոլոր պատահած անցքը։ — «Դու շատ լաւ ես արել, որ չես առել ռուբլին.» — ասաց նորա մայրը. — «կարելի է նա մի վատ մարդ էր։» — «Ա՛խ. մայրիկ, չէ. ես այդպէս չեմ կարծումե. նա այնպէս բարի սիրտ և լաւ ձայն ունէր։» — «Այսու ամենայնիւ, Եղիսաբէթ, լաւ է իւր աշխատանքով ապրել և ոչինչ ձրի չստանալ։ Դու դեռ ես չգիտես, սիրելիս, թէ ի՛նչպէս վատ մարդիկ կարող են վշտացնել մի խեղճ աղջիկ։ Իմ սիրտը միշտ անհանգիստ է լինում, երբ դու քաղաք ես գնում, ես ամենայն անգամ մամ եմ վառում պատկերին և աղաչումեմ Աստուած, որ նա

պահէ քեզ ամենայն չարից և փորձանքից։» Եղիսաբէթի աչքերում երևեցան արտասուք, և մի որդիական ջերմ համբոյր տուեց իւր մօրը։ Միւս օր Եղիսաբէթը քաղեց ամենալաւ ծաղիկները և գնաց քաղաք։ Նորա աչքերը կարծես թէ ծածուկ մի բան էին որոնում։ Շատերը կամեցան գնել նորանից ծաղիկները, բայց նա պատասխանում էր—թէ վաճառելի չեն, և նայում էր երբեմն այս կամ այն կողմը։ Օրը երեկոյացաւ և հասաւ տուն դառնալու ժամանակ։ Ծաղիկները ձգվեցան Մոսկվա գետը։ «Ո՛չ ոք չտիրէ ձեզ,» — ասաց Եղիսաբէթը, ղգալով իւր սրտում մի ծանր տրտմութիւն։

Միւս օրը նստած պատուհանի տակ, գործում էր նա և մեղմիկ ձայնով երգում էր տխուր երգեր։ բայց յանկարծ վեր թռաւ տեղից ու սրտի խորքից ՝ֆս դանչեց։ Այս միջոցին անծանօթ երիտասարդը կանգնել էր պատուհանի տակ։

—«Ի՛նչ պատահեց քեզ։» —հարցրեց մայրը վախեցած, որ մոտումը նստած էր։ «Ո՛չինչ մայրիկ,» — պատասխանեց Եղիսաբէթը երկչոտ ձայնով, — «ես միայն նորան տեսայ։» — «Ովի՛ն։» — «Այն պարոնին, որ ծաղիկները գնել էր։» Մայրը նայեցաւ պատուհանից։ Երիտասարդը այնպիսի քաղաքավարի կերպով և քաղցր դէմքով ողջոյն տուեց նորան, որ նա չկարողացաւ բաց ի լաւից, այլ կարծիք ունենալ երիտասարդի վերայ։ «Ողջոյն քեզ, բարի տիկին։» —ասաց երիտասարդը։ —«ես շատ վաստակած եմ, չունե՞ս արդեօք թարմ կաթ։» Կամկատար Եղիսաբէթը առանց սպասելու մօր պատասխանին, կարելի է այն պատճառով, որ նա չգիտէր, յառաջուց վաղեց դեռնատունը և բերեց մի յստակ կճոյճ, ծածկած փայտեայ մաքուր բաժակով, որ լուաց, սրբեց սպիտակ սրբիչով, լցրեց կաթը և տուեց պատուհանից երիտասարդին, բայց ինքը նայումէր դէպ ի գետին։

Անծանօթը խմեց, և հեռէի ձեռքից խմած նեկտարը ևս այնքան համ չէր ունենալու։

Մենայն մարդ կարող է իմանալ, որ անծանօթը նորանից յետոյ շնորհակալ եղաւ Եղիսաբէթից և շնորհակալ եղաւ ոչ այնքան լուսքերով, որքան նայուածքով։ Այս միջոցին բարեհոգի պառաւը, կարողացաւ պատմել երիտասարդին իւր վիշտը և միխիթարութիւնը, ամուսնու մահը և աղջկայ գեղեցիկ յատկութիւնները, նորա աշխատասիրութիւնը, քնքշութիւնը և այլն և այլն։

Երիտասարդը լսեց պառաւին ուշադրութեամբ. բայց պէ՞տք է արդեօք հարցանել, թէ այդ ժամանակը նորա աչքերը դէպ ի ո՞ւր էին դարձուցած։ Եւ Եղիսաբէթը, երկչոտ Եղիսաբէթը, երբեմն երբեմն

նայումէր երիտասարդի վերայ։ Բայց ոչ այնքան շուտ փայլակը փայլումէ և ամպերի մէջ անյայտանումէ, որքան Եղիսաբէթի արագ և կապոյտ աչքերը նայումէին դէպ ի գետին, պատահելով երիտասարդի տեսուէթեանը։ «Ես կը ցանկայի, — ասաց պառաւին երիտասարդը, — որ քո աղջիկը, ուրիշ այլ մարդու չվաճառէր իւր ծաղիկները, այլ ինձ միայն։ Այս կերպով նորան հարկաւոր չէր լինելու քաղաք գնալ, և դու չես հարկադրվելու երբէք բաժանվիլ աղջկանիցդ։ Ես ինքս կարող եմ ժամանակ առ ժամանակ գալ ձեր մօտ։» Այս տեղ Եղիսաբէթի աչքերում փայլեցաւ ուրախութիւն, որ նա ի զուր աշխատումէր թագուցանել։ Նորա թշերը վառվումէին ինչպէս ամառնային արշալոյս։ Ծեր տիկինը յօժարութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, ամենևին չկասկածելով մի վատ մտադրութիւն նորա մէջ, և հաւատացնումէր նորան, թէ Եղիսաբէթի գործած կամ հիւսած բանները շատ պինդ և դիմացկոտ էին քան թէ ուրիշինը։

Մթնումէր, և երիտասարդը կամեցաւ երթալ։ «Բարի և պատուական մարդ, — դանչեց պառաւը, — քո անունը ի՞նչ է։» — «Ինձ Էրաստ են ասում,» — պատասխանեց նա։ Ասաց Եղիսաբէթը, «Էրաստ, ... նա մի քանի անգամ կրկնեց այս անունը, աշխատելով, որ միտքը պահէ։ Էրաստը բարեաւ ճեա արեց նոցա հետ և գնաց։ Եղիսաբէթը ճանապարհ ձգեց նորան միայն աչքերի նայուածքովը։ իսկ մայրը նստած էր մտածութեան մէջ ընկղմած, և, բռնելով աղջկայ ձեռքը, ասաց։ — «Ա՛խ, Եղիսաբէթ, ի՛նչպէս լաւ և բարի մարդ է նա. եթէ քո փեսան էս այդպէս լիներ .... Այս խօսքի վերայ Եղիսաբէթի սիրտը զարկեց։ — «Մայրիկ, մայրիկ, ի՛նչպէս այդ կարելի է. նա պարոն է, իսկ ես դիւղացիների մէջ ....

Եղիսաբէթը չաւարտեց իւր սկսած խօսքը։ Այժմ կարդացողը պիտոյ է իմանայ, որ այս երիտասարդը, այս Էրաստ անունով բաւական հարուստ աշնուականը էր չափաւոր խելքով և բաւական բարեսիրտ մարդ, բարի բնաւորութենով, բայց թոյլ և թեթև։ Եւ նա վարումէր մի զբօսական կեանք և մտածումէր ամբողջ օրը իւր զուարճութեան և բերկրութեան վերայ, որ աշխատումէր գտանել ամենայն տեղ, բայց ստէպ չէր գտանում, ձանձրանումէր և դանգատումէր իւր բաղդից։

Եղիսաբէթի դեղեցկութիւնը առաջին անգամ պատահելով Էրաստին, խոր տպաւորութիւն արեց նորա սրտի մէջ։ Նա կարդումէր զանազան բանաստեղծութիւններ, ունէր կենդանի երևակայութիւն և ստէպ վերանումէր դէպ ի այն ժամանակները (եղած կամ չեղած), եթէ արժանի էր հաւատալ բանաստեղծներին, այն ժամանակները երբ բոլոր մարդիկ անհոգաբար զբօսնումէին գեղեցիկ դաշտերում, լողա-

նուէրին մաքուր աղբիւրների մէջ, համբուրումին միմեանց իբրև աղաւնիք, հանգստութիւն էին առնում մրտենիների կամ վարդերի տակերում, և երջանիկ պարապորդութենով անցուցանումէին իւրեանց բոլոր կեանքը։ Էրաստին թուեց, թէ նա Եղիսաբէթի մէջ գտաւ այն, ինչ որ նորա սիրտը վաղուց ահա որոնումէր։

«Ինութիւնը գանչումէ ինձ իւր գիրկը, իւր խառն ուրախութեան մէջ,» — մտածեց նա, և որոշեց գոնէ առ ժամանակ հեռանալ մարդաշատ ընկերութենից։ —

Դառնանք այժմ դէպ ի Եղիսաբէթը։ Դիշերը վերայ հասաւ, և մայրը ողջունելով իւր դուստրը, բարի գիշեր ցանկացաւ նորան։ Բայց այս անգամ մօր ցանկութիւնը չկատարվեցաւ. Եղիսաբէթը շատ վատ քնեց։ Նորա հոգու նոր հիւրը — Էրաստի պատկերը երևումէր ամենայն րոպէ այնպէս, որ նա ամենայն վայրկեան զարթնումէր, զարթնումէր և հառաչումէր։

Դեռ արևը չծագած, Եղիսաբէթը վեր կացաւ անկողնից, իջաւ գնաց Մոսկվա գետը, նստեց արօտների վերայ և խոր մտածութեան մէջ, տխուր աչքերով նայումէր սպիտակ ամպերի վերայ, որ ծովի ալիքների պէս, օդի մէջ տատանելով խաղումէին դէպի երկինք, թողնելով ցոլուն կաթիլները կանաչով հասած բնութեան վերայ։ Թագաւորումէր լռութիւն։ Բայց շուտով արեգակի ծագումը զարդարեց բոլոր էակները. անտառները և թուփերը կենդանացան, թռչունք ոստոստելով թռան և երգեցին, բոյսերը բացեցին իւրեանց ծաղիկները, որ իւրեանց մէջ առնուն արեգակի ճառագայթքը։

Եղիսաբէթը դեռ նստած էր գետափի մօտ մեծ տխրութենով, և առումէր մեղմիկ ինքն իւրեան. — «Ա՛խ, Եղիսաբէթ — Եղիսաբէթ. ի՛նչ պատահեց քեզ։ Մինչև այժմ դու զարթնելով թռչունների հետ, միասին ուրախանումէիր առաւօտը, և մաքուր ու վուարճ հոգուդ շառաւիղը փայլումէր աչքերումդ, ինչպէս արեգակի շառաւիղը փայլումէն երկնքի ցօղերի մէջ։ Բայց այժմ դու մտածմունքի մէջ ես, և ընութեան ընդհանուր բերկրութիւնը օտար է քո սրտի համար։» —

Այս միջոցին երիտասարդ հովիւը գետի ափերով արածեցնումէր իւր հօտը, սրինգը հնչեցնելով։ Եղիսաբէթը ձգելով աչքերը նորա վերայ, մտածումէր, — «Եթէ նա, որի հետ պարապած է իմ սիրտը, ծրնած լինէր հասարակ գիւղացի, լինէր հովիւ, և եթէ նա անցուցանէր իւր հօտը իմ մօտից. ախ, ես նորան ժպիտը բերանիս գլուխ կը տայի, և քաղցրութեամբ հանդիպելով, կ՚ասէի. — Ողջոյն քեզ, սիրական հովիւ, ահա ես քշում դու քո հօտը։ Եւ այս տեղ աճումէ կանաչ խոտ քո ոչխարների համար, այս տեղ կարմրումեն ծաղիկներ, որոնցից կա-

րելը է պսակ հիւսել քո գլխարկի համար: Նա այն ժամանակին փաղաքշելով կը նայէր իմ վերայ և գուցէ կը լռներ և ձեռքից . . . . երևակայութիւն . . . .

Հովիւը սրինգը հնչելով անցաւ աղջկայ մօտից և իւր պիսակ հօտովը անյայտացաւ սարի քամակում: Ցանկարծ Եղիսաբէթը լսեց թիակների աղաղակ, նայեցաւ գետի վերայ և տեսաւ մի նաւակ, իսկ նաւակի մէջ Էրաստը: Նորա բոլոր ջլերը զարկեցին, ի հարկէ երկիւղից չէր այդ: Նա վեր կացաւ, կամենում էր թռնել, բայց չկարողացաւ: Էրաստը թռաւ նաւակից և մօտեցաւ Եղիսաբէթին, և նորա յոյսը մի մանով իրագործվեցաւ. պատճառ, Էրաստը նայեց նորա վերայ փաղաքշելով և լռնեց ձեռքից. — «Ա՜, Եղիսաբէթ.» Եղիսաբէթը կանգնած էր կորացուցած հայեացքով, կարմրած թուշերով և դողդոջուն սրտով — չկարողացաւ խլել Էրաստի ձեռքից իւր ձեռքը, երբ նա մօտեցաւ ձեռքին իւր վարգագոյն շրթունքովը . . . Ա՛խ, —նա համբուրեց նորան, այնպիսի ջերմութեամբ համբուրեց, որ Եղիսաբէթը կարծեց, թէ բոլոր տիեզերքը վառվում է կրակի մէջ: — «Սիրելի՛դ իմ Եղիսաբէթ,» — ասաց Էրաստը, — «Հոգի՛ իմ Եղիսաբէթ, ես սիրում եմ քեզ:» Եւ այս խօսքերը լսվեցան Եղիսաբէթի սրտի խորքերումը որպէս մի երկնային և ջմայլեցուցիչ երաժշտութիւն. նա հալւում համբակվում էր հաւատալ իւր ականջներին և . . . . . Բայց ես թողում եմ գրիչը: Կ՚ասեմ միայն, որ այս ուրախութեան րոպէին անյայտացաւ Եղիսաբէթի երկչոտութիւնը: Էրաստը խնայեաւ, որ Եղիսաբէթը սիրում նորան, այո՛, սիրում էր նոր մաքուր և պարզ սրտով:

Լուռ նստած էին խոտերի վերայ և այնպէս, որ նոցա մէջ տեղումը շատ փոքր տարածութիւն էր մնացած. նայում էին միմեանց աչքի մէջ, ասում էին միմեանց «սիրի՛ր ինձ.» և երկու ժամը թվեցաւ նոցա որպէս՝ մի ակնթարթ: Վերջապէս Եղիսաբէթը յիշեց, որ իւր մայրը կարող է անհանգիստ լինել: Հարկաւոր էր բաժանվիլ: — «Ա՛խ, Էրաստ,» —հարցրեց աղջիկը — «դու մի՞շտ ինձ կը սիրես:» — «Մի՛շտ սիրելիդ իմ, մի՛շտ.» — պատասխանեց Էրաստը:» — «Եւ դու կարո՞ղ ես խոստմունք տալ ինձ.» — «կարող եմ, սիրական. կարող եմ:» — «Չէ, Էրաստ. ինձ հարկաւոր չէ քո խոստմունքը, ես հաւատում եմ քեզ, հաւատում եմ: Մի՛ թէ դու կը խաբես խեղճ Եղիսաբէթը. չէ՛, այդ անկարելի է,» — ասաց աղջիկը: «Անկարելի՛ է, անկարելի. գեղեցիկդ իմ Եղիսաբէթ.» — ասաց Էրաստը . . . . . «Ա՛խ, ի՛նչպէս բաղդաւոր եմ ես. և ի՛նչպէս կ՚ուրախանայ իմ մայրը, երբ կը լսէ, որ դու ինձ սիրում . . . . «Ախ. չէ, Եղիսաբէթ, քո մօրը հարկաւոր չէ իմանց տալ այդ բանը:» — «Ինչո՞ւ» —հարցրեց աղջիկը: «Ծեր մարդիկը

կասկածոտ են լինում։ Նա մի վատ բան կը կարծէ դորանից։ Այսու ամենայնիւ խնդրում ոչինչ չասես Նորան այս մասին։» — «Լաւ, հարկաւոր է ինձ քեզ լսել, թէպետև չէի կամենում մօրիցս մի բան ևս թագուցանել։» Նոքա բարեաւ մնա արեցին միմեանց հետ և վերջին անգամ համբուրելով, խոստացան ամենայն երեկոյ տեսանվիլ, կամ դետի ափերում կամ թխտենիների անտառում և կամ ուր և իցէ Եղիսաբէթի խրճիթի մօտ, միայն թէ այդ տեսութիւնը լինի անպատճառ։

Եղիսաբէթը գնաց, բայց Նորա աչքերը մի հարիւր անգամ դարձան դէպ ի Էրաստը, որ դեռ կանգնած գետի ափի մօտ, նայումէր Նորա քամակից։ Եղիսաբէթը վերադարձաւ իւր խրճիթը բոլորովին այլ հոգով քան թէ դուրս էր եկել Նորանից։ Նորա երեսի և ամենայն շարժմունքների մէջ երևումէր սրտի ուրախութիւնը։ «Նա ինձ սիրումէ» — մտածումէր նա, — և ցնծումէր այս մտքով։ «Ա՛խ, մայրիկ։» — ասաց Նա իւր մօրը, որ դեռ նոր էր վարթել քնից։ — «Ախ, մայրիկ։ ինչ գեղեցիկ առաւօտ է։ Երբէք ծիծեռնակները այսպէս գեղեցիկ երգած չէին, երբէք արեգակը այսպէս պայծառ չէր վայլած։ երբէք ծաղիկները այսպէս անոյշ բուրած չէին։» Ծերուհի կինը գաւազանի օգնութեամբ դուրս գնաց դաշտ, որ տոքր ինչ վայելէ առաւօտեան քաղցրութիւնը, որ Եղիսաբէթը այդպէս գեղեցիկ նկարագրումէր։ Արդարև, շատ լաւ թուեցաւ Նորան այդ առաւօտը։ Նորա սիրական աղջիկը իւր ուրախութեամբը, ուրախացնումէր իւր մօր համար բոլոր բնութիւնը։ — «Ախ, Եղիսաբէթ։ ի՛նչպէս ամենայն բան գեղեցիկ է Տիրոջ ձեռքում։ Վաթսուներորդ տարին է որ ապրումեմ աշխարհիս երեսին, բայց դեռ չեմ կշտանում Արարչի գործերից։ չեմ կարող կշտանալ նայելով յստակ երկնքի վերայ, որ նման է բարձր վրանի։ և երկրի վերայ, որ ամենայն տարի արօտներով և նոր ծաղիկներով է ծածկվում։ Պէտք է որ երկնաւոր թագաւորը շատ սիրէ մարդը, որ այսպէս զարդարել է Նորա համար այս աշխարհը։ Ա՛խ Եղիսաբէթ։ ով կը յանկանար մեռանել, եթէ երբեմն չունենայինք մեք վիշտ։ • • • Երևի թէ այդպէս հարկաւոր էր։ կարելի է մեք կը մոռանայինք մեր Հոգին, եթէ երբէք մեր աչքերից արտասուք չթափվէր։» Իսկ Եղիսաբէթը մտածումէր, — «Ա՛խ, նա շուտով կը մոռանամ իմ Հոգին, քան թէ իմ սիրական ընկերը։»

Սորանից յետոյ Էրաստը և Եղիսաբէթը, վախենալով չկատարել իւրեանց խօսքը, ամենայն երեկոյ տեսանուէին միմեանց (այն ժամանակ, երբ Եղիսաբէթի մայրը ննջումէր) կամ գետի ափի մօտ կամ անտառում, բայց ամենից շատ հարիւրամեայ կաղնիների շուաքի տակում, (խրճիթից ուրտուն գրկաչափ հեռի) այն կաղնիների, որոնք շրջապատումէին հին ժամանակներում փորած խոր և յստակ լիճը։ Այն

տեղ ստէպ, հանդարտ լուսինը, կանաչ ճիւղերի միջից, իւր ճառագայթներովը արծաթաջրումէր Եղիսաբէթի պայծառ մազերը, որոնց հետ խաղ էին բռնում զեփիւռքը և սիրական ընկերի ձեռքը, ստէպ այս ճառագայթքը Եղիսաբէթի աչքումը լուսաւորումէին սիրու փայլուն արտասուքը, որ չորացնումէր միշտ Էրաստը իւր համբուրներով։ Նոքա զրկախառնումէին իրեար, բայց ամօթխած Դիանան նորանցից չէր ծածկվում ամպերի քամակում, — մնքուր և անմեղ էին նոցա գրկերը։ «Երբ դու,» — ասումէր Եղիսաբէթը Էրաստին, — «երբ դու ասումես ինձ սիրումեմ քեզ· իմ ընկեր, երբ սեղմումես ինձ քո սըրտին և նայումես իմ վերայ քո հիանալի աչքերով· ախ· այն ժամանակ ինձ այնպէս քաղցր է, այնպէս քաղցր, որ ինքս ինձ մոռանումեմ, մոռանումեմ բոլորը բացի ի Էրաստից։

«Հրաշալի,— հրաշալի՛ իմ ընկեր, որ ես չհմանալով, կարողանումի ապրել հանգիստ և ուրախ։ Այժմ այդ ինձ անհասկանալի է· այժմ մտածումեմ, որ առանց քեզ կեանքը, կեանք չէ, այլ տխրութիւն և ձանձրութիւն։ Առանց քո աչքերին կը խաւարի լուսինը և առանց քո ձայնին ձանձրալի է երգող սոխակի ձայնը· առանց քո ընչաոութեան անախորժ է ինձ քամին։»

Էրաստը ղուարճանումէր իւր հովուհի օրիորդով — այսպէս կոչումէր նա Եղիսաբէթին և տեսանելով, որ սա այսքան սիրումէ իրեան, Էրաստը իւրեան աւելի էր երևում։ Աշխարհի ամենայն դեղեցիկ ղուարճութիւնքը նորան չնչին էին թվում, համեմատութեամբ այն ղուարճութեանների հետ, որոնցով անմեղ հոգու կրքոտ ընկերութիւնը սնուցանումէր նորա սիրտը։ Զղուանքով մտածումէր նա արհամարհելի հեշտականութեան վերայ, որով նորա զգայմունքը լցված էին յառաջ։ «Ես կը կենամ Եղիսաբէթի հետ, իբրև եղբայր քրոջ հետ·» — կարծումէր նա,— «դէպ ի չարը չեմ դործ դնելու նորա սէրը, և կը լինիմ միշտ երջանիկ։ Անխելք երիտասարդ, դիտե՞ս արդեօք քո սիրտը։ Մի՛ թէ միշտ կարող ես պատասխանատու լինել քո շարժմունքի համար· մի՛ թէ քո բանականութիւնը թագաւոր է քո զգայմունքների վերայ։»

Եղիսաբէթը պահանջումէր, որ Էրաստը ստեպ այց առնէ իւր մօրը։ «Ես սիրումեմ նորան,» — ասումէր նա — «և կամենումեմ նորան լարի· և ինձ թվումէ թէ քեզ տեսանելը ամենի համար լաղդաւորութիւն է։» Ծերունին իսկապէս ուրախանումէր, երբ տեսանումէր նորան։ Նա սիրումէր խօսել նորա հետ հանդուցեալ ամուսնու վերայ, և պատմել թէ ի՛նչպէս նա առաջին անգամ պատահել էր իւր սիրական մարդու հետ· ի՛նչպէս նա սիրել էր նորան, և ի՛նչպէս սիրով և

միաբանութեամբ անցուցել էր նա իւր կեանքը սորա հետ։ «Ա՛խ. մեք երբեք չէինք կարող կշտանալ իրևարից մինչև այն րոպէն, երբ անյապ մահը կտրեց նորա կեանքի թելը, նա վախճանեցաւ իմ ձեռքերի վերայ։» Էրաստը լսումէր նորա պատմութիւնքը։ Նա գնումէր նորանից եղևսաբէթի աշխատութիւնը, և միշտ կամենումէր հատուցանել նորան տանապատիկ թանգ նշանակեալ գնից. բայց տիկինը երբեք աւելի չէր առնում։

Այս կերպով անցան մի քանի շաբաթներ։ Միանգամ երեկոյեան Էրաստը երկար ժամանակ սպասեց իւր եղևսաբէթին։ Վերջապես եկաւ նա, բայց այնպէս տրտում, որ Էրաստը տեսանելով վախեցաւ, նորա աչքերը արտասուքից կարմրել էին։ — «Եղևսաբէթ, եղևսաբէթ. ի՛նչ պատահեց քեզ։» — «Ա՛խ Էրաստ, ես լացի.» — «Ինչո՞ւ համար, ի՛նչ կայ։» — «Ես պէտք է ասեմ քեզ բոլորը։ Իմ հետ նշանվումէ հարուստ շինականի որդի, մեր դրացի գիւղից։ Մայրս կամենումէ, որ ես յօժարիմ հարսնանալ նորան։» — «Եւ դու համաձայնո՞ւմես։ Խնդամարդ. դեռ ես կարող ես հարցանել այս մասին։» — «Այո, ինձ ափսոս է իմ մայրը, նա լաց է լինում և ասումէ, որ ես չէի ցանկանում նորան հանգստութիւն, թէ նա մեռանելու ժամանակ չարչարվելու էր, եթէ ինձ իւր կենդանութեանը չէր ամուսնացուցած։ Ա՛խ. մայրս չգիտէ, որ ես ունիմ այսպիսի նաղելի ընկեր։» Էրաստը համբուրումէր եղևսաբէթին և ասումէր, թէ նորա բաղդը ամենաթանգ բանն է նորա համար, թէ մեր մահից յետոյ նա իւր մնդ կ՚առնու նորան, և կը կենայ նորա հետ անբաժան գիւղում և թանձր անտառների մէջ, որպէս արքայութեան մէջ։» — «Դարձեալ դու չես կարող լինել ինձ այր,» — ասաց եղևսաբէթը հանդարտ հեկեկանքով։ — «Ի՛նչ պատճառով։» — «Ես շինական եմ։» — «Դու վիրաւորումես ինձ. քո ընկերի համար ամենագլխաւորն է հոգին. քո ղգայուն և անմեղ հոգին, և եղևսաբէթը կը լինի միշտ ամենամերձը իմ սրտին։» Նա ընկաւ նորա գիրկը — և ահա այս ժամին պիտոյ է չքանար նորա անմեղութիւնը։

Էրաստը ղգաց իւր արիւնի մէջ մի անսովոր ալեկոծութիւն, — երբեք եղևսաբէթը նորան այնքան փաղաքշելի երևեցած չէր, երբեք փաղաքշանքը նորան այնքան շարժած չէին, երբեք նորա համբոյրքը այնքան բոցոտ եղած չէին։ Եղևսաբէթը ոչինչ չգիտէր, ոչնչից չէր կասկածուում, ոչնչից չէր վախենում. գիշերի խաւարը մնուցանումէր նոցա իղձը, ոչ մի աստղ չէր փայլում երկնքում, ոչինչ ճառագայթ չէր կարող լուսաւորել նոցա մոլորութիւնը։ Էրաստը դողդողէր ղգում իւր սրտի մէջ։ Եղևսաբէթը նոյնպէս, չհամանալով թէ ինչի՛ց է, չհաս-

կանալով թէ ի՛նչ է պատահում նորա հետ . . . . Ա՛խ, եղիսաբէթ, եղիսաբէթ . . . Ո՛ւր է քո պահապան հրեշտակը, և ուր քո անմեղութիւնը . . . . .

Ա՛ղօրութիւնը անցաւ մի րոպէում: Եղիսաբէթը չէր հասկանում իւր ղգացմունքը, զարմանումէր և հարցանումէր: Էրաստը լռած լսօք էր որոնում պատասխանելու, բայց չէր գտանում: — «Ախ, ես վախումեմ,» — ասումէր եղիսաբէթը. — «վախումեմ, որ մեր հետ մի բան պատահած չլինի, ինձ թվումէր թէ ես մեռանումեմ, թէ իմ հոգին . . . . Ո՛չ, չգիտեմ թէ ի՛նչպէս ասեմ այդ: Դու լռումես էրաստ, հեկեկո՞ւմես . . . . Աստուած իմ, այս ի՛նչ բան է . . . . . .

Ա՛ինչդեռ փայլատակից փայլակը և ղարկեց կայծակը եղիսաբէթը բոլորովին սարսափեցաւ: — «Էրաստ, Էրաստ.» — ասաց նա, — «ինձ երկիւղալի է, ես երկիւղ եմ կրում որ կայծակը չսպանէ ինձ, որպէս մի չարագործ:» Որոտալից մրրիկը փչումէր ամենայն կատաղութեամբ. անձրևը թափվումէր մութ ամպերից — թվումէր, թէ բնութիւնը տխրումէր եղիսաբէթի անմեղութեան վերայ:

Սորանից յետոյ եղիսաբէթը արդէն էրաստի համար չէր այն անմեղութեան հրեշտակը, որ բորբոքումէր նորա երևակայութիւնը և յնծացնումէր նորա հոգին:

Գլատոնական սէրը չտուեց տեղի այնպիսի ղգացմունքների, որոնցով նա չէր կարող հարստանալ, և որոնք նորա համար արդէն բան չէին. ինչ որ յարաբերումէ եղիսաբէթին, նա իւրեան միանգամայն նորան զոհելով, ապրումէր և շնչումէր նորանով, ամենայն բանի մէջ իրրև Աստուծու գառը խոնարհումէր նորա կամքին, և բաւականութեան մէջ կարծումէր գտանել իւր բաղդը: Նա տեսանումէր նորանում փոփոխութիւն և ստէպ ասումէր նորան: — «Յառաջ դու առաւել ուրախ էիր լինում. յառաջ մեք առաւել հանգիստ և բաղդաւոր էինք և ես յառաջ այսքան չէի վախենում քո սէրը կորուսանելուց:» Երբեմն էրաստը բարեաւ մնա առնելով նորա հետ ասումէր, — «Էգուց եղիսաբէթ, ես չեմ կարող քեզ տեսանել, ինձ պատահեց մի երևելի գործ:» Եւ ամեն անգամ եղիսաբէթը այս խօսքերը լսելով, հառաչումէր:

Ա՛յ երջանիկ հինգ օր շարունակ նա չէր տեսանում նորան, և մեծ անհանգստութեան մէջ էր: Ա՛յեւերորդ օրը եկաւ նա տրտում երեսով և ասաց նորան. — «Սիրելի՛ եղիսաբէթ, ինձ պէտք է քո հետ մի քանի օրվայ բարեաւ մնա առնել: Դու գիտես, որ մեզանում այժմ պատերազմ կայ. ես պաշտօնի մէջ եմ:» Էրաստը աշխատումէր հանգստացնել եղիսաբէթը և ճանապարհորդեց նորան մինչև նորա տնակը:

Արտասուքը թաւիվումէին նորա աչքերից, երբ նա բարեաւ մնաւ էր ասում Էրաստին։ «Ա՛ւ, Էրաստ, հաւատացուր ինձ, որ մեք դարձեալ ինչպէս յառաջ կը լինէինք երջանիկ։» — «կը լինենք Եղիսաբէթ, կը լինենք,» — ասաց նա։ «Աստուած ... ինձ չէ կարելի չհաւատալ քո խօսքերին, որովհետև ես սիրում եմ քեզ։ Մի միայն իմ սրտի մէջ... — «Բաւական է ... Մնաս բարեաւ, էդուց, էգուց կը տեսանենք միմեանց։»

Նոցա տեսութիւնները շարունակվում էին, բայց ինչպէս բոլորը միտիոխաւած էր։ Էրաստը չէր կարող բաւականանալ միայն Եղիսաբէթի անմեղ փաղաքշութեամբը, միայն նորա սիրով լցված նայեացքովը, միայն նորա ձեռքի հպաւորութեամբը, նորա համբոյրներովը, նորա գրկախառնութեամբը։ Նա ցանկանում առաւել, բայց վերջապէս... ոչինչ էէր կարող ցանկանալ։ Իսկ ով գիտէ նորա սիրտը, ով մտածել է նորա քնքուշ բաւականութիւնները նա ի հարկէ կը համաձայնի իմ հետ, թէ բոլոր ցանկութեան կատարումը ամենավսեմագաւոր միտձուութիւն է սիրու մէջ։

— «Իմ գունդը գնում պատերազմ.» — ասաց Էրաստը։ Եղիսաբէթը դունաթաւիվեցաւ և միտը մնաց, որ ուշաթաւ լինէր։ Էրաստը փաղաքշում նորան և ասում, թէ նա միշտ կը սիրէ քնքուշ Եղիսաբէթին, և յոյս ունի, որ յետ դառնալուց երբէք չբաժանվի նորանից։ Երկար ժամանակ լռում Եղիսաբէթը. յետոյ լցվեցաւ դառն արտասուքով, բռնեց նորա ձեռքից, և նայելով նորա վերայ սիրու ամենայն քնքշութեամբ հարցրեց. — «քեզ չէ՞ կարելի մնալ։» — «կարող եմ.» պատասխանեց նա, բայց վատահամբաւութիւն և մեծ արատիք իմ պատուի համար, կապակից է այդ բանի հետ։ Ամենքեան կ'արհամարհեն ինձ, ամենքեան կ'անարգեն ինձ իբրև մի վախկոտ մարդ, իբրև հայրենիքի անարժան որդի։» — «Ա՛խ, եթէ այդպէս է,» — ասաց Եղիսաբէթը. — «ուրեմն գնա, գնա ուր Աստուած հրամայում. բայց քեզ կարող են սպանել։» — «Մահը հայրենիքի համար երկիւղալի չէ, սիրելի Եղիսաբէթ։» — «Ես էս կը մեռանիմ, եթէ դու չլինիս աշխարհի երեսին.....

— «Ախայ ինչ հարկաւոր է այդպիսի մտածութիւն. ես յոյս ունիմ կենդանի մնալ, յոյս ունիմ յետ դառնալ դէպ ի քեզ, — դէպ ի իմ ընկերը։» — «Աստուած տայ, Աստուած տայ։ Ամենայն օր, ամեն ժամ աղօթք կ'առնեմ այս մասին։ Ա՛խ, ինչու՞ չդիտեմ ոչ դրել և ոչ կարդալ։ Դու իմաց կը տայիր ինձ ամենայն բանի վերայ, որ պատահելու էր քեզ։ Իսկ ես կը գրէի քեզ իմ արտասուքի վերայ։» — «Ոչ,

Եղիսաբէթ, պահպանիր քեզ· պահպանիր քո ընկերի համար։ Ես չը կամիմ, որ դու օրդ լալով անցուցանես։» — «Խի՛ստ մարդ, դու մտածումես ինձ այս բերկրութենից ևս զրկել։ Ո՛չ, բաժանվելով քեզանից, կարելի է միայն այն ժամանակ դադարում լալուց, երբ կը չորանայ իմ սիրտը։» — «Մտածի՛ր այն քաղցր րոպէի վերայ, երբ դարձեալ պիտոյ է տեսանենք։» — «Կը մտածեմ, կը մտածեմ նորա վերայ։ Ախ, եթէ նա շուտ հասանէր· սիրելի, նաղելի էրաստ։ Ցիշի՛ր քո խեղճ Եղիսաբէթը, որ սիրումէ քեզ առաւել քան թէ իւր անձը···

Ոչայց ես չեմ կարող նկարագրել բոլորը, ինչ որ նորա այս դիպուածում խօսեցան։ Միւս օրը պէտք է վերջի տեսութիւնը լինէր։ Էրաստը կամեցաւ բարեաւ մնա առնել Եղիսաբէթի մօր հետ, որ չկարողացաւ զսպել իւր արտասուքը լսելով, թէ սիրելի և հաճոյակատար պարոնը պիտոյ է պատերազմ գնայ։ Նա ստիպեց նորան արծաթ առնուլ դարձեալ իւրեանից ասելով, թէ — «Ես չկամիմ, որ Եղիսաբէթը իմ այս տեղ չեղած ժամանակիս վաճառէ իւր աշխատութիւնը, որ մեր պայմանի ջօրութեամբ ինձ է պատկանում։» Ծեր կինը անչափ օրհնեց նորան· — «Աստուած տայ,» — ասումէր նա· — «որ դեպ ի մեզ վերադառնաս ողջ և առողջ, և ես կրկին տեսանեմ քեզ այս տեղ։ Կարելի է իմ Եղիսաբէթը մինչև այն ժամանակ կը գտանէ իւրեան փեսայ, ինչպես ես շնորհակալ կը լինեի Աստուծուց, որ դու դայիր մեր հարսանիքին։ Երբ որ Եղիսաբէթը զաւակ կ'ունենայ, իմացի՛ր պարոն, որ դու պիտոյ է կնքես նորան։ Ա՛խ, ես շատ կը ցանկանայի ապրել մինչև այդ ժամանակ։» Եղիսաբէթը կանգնած մօր մօտ չէր համարձակվում նայել նորա վերայ։ Ընթերցողը հեշտ կարող է երևակայել, թէ ի՛նչ էր զգում նա այս րոպէին։ Ի՛նչ էր զգում նա այն ժամանակ, երբ Էրաստը գրկախառնելով նորան վերջին անգամ իւր սրտին, ասայ· — «Բարեաւ մնա, Եղիսաբէթ····· ի՛նչ սրտաշարժ պատկեր է։ Առաւօտեան արշալոյսը, իրրև մի կարմիր ծով, թաւիվումէր արևելեան երկնքի վերայ։ Էրաստը կանգնած բարձր կաղնու ճիւղերի տակ, բռնած իւր գրկումը դունաթաւի, տխուր և տրտմալի ընկերը, որ բարեաւ մնա ասելով նորա հետ, բարեաւ մնա էր առնումէ և հոգու հետ։ Ամբողջ բնութիւնը լռութեան մէջ էր։

Եղիսաբէթը կականումէր· Էրաստը լացեց, — Թողեց Եղիսաբէթը։ Նա ընկաւ, ծունկ չոքեց, բարձրացրեց ձեռքերը դէպ ի երկինքը և նայումէր Էրաստի վերայ, որ հեռանումէր, հեռի, հեռի և վերջապէս միանգամայն անյայտացաւ։ — Արեգակը ծագեցաւ և Եղիսաբէթը թողած միայնակ, խեղճ, զրկվեցաւ զգայութենից և մտքից։ Ուշը վերայ եկաւ և աշխարհը թուեցաւ նորան վշատ և տխուր։ Բնութեան բոլոր

ղուարճութիւնքը նորա սրտի սիրածի հետ միասին չքացան ըոլորովին։
—«Ա՛խ, —մտածումեր նա, —ինչու՛ համար ես մնացի այս անապատում։
Ո՛վ է արգելում ինձ թռչել իմ սիրած Էրաստի քամակից։ Պատերազմը ինձ երկիւղալի չէ, երկիւղալի է այն տեղ, ուր չկայ իմ ընկերը։ Նորա հետ ապրել, նորա հետ մեռանել կամենումեմ ես, կամ իմ մահովը փրկել նորա թանգագին կեանքը։ Սպասէ, սպասէ սիրելի, ես թռչումեմ դէպ ի քեզ։ • • •» Արդէն կամենումեր վազել Էրաստի քամակից, բայց միտքը, թէ ես ունիմ մայր, —կանդնեցնումեր նորան։ Եղնսաբէթը հառաչեց, և խոնարհելով դլուխը, հանդարտ քայլերով դնաց դէպ ի իւր տնակը։ Այս ժամից սկսած նորա օրերը էին տխուր և վշտալի օրեր, որ նա պիտոյ է թագուցանէր իւր քնքուշ մօրից։ Եղնսաբէթի հոգսը այն ժամանակ էր միայն թեթևանումեր, երբ առանձնանալով անտառի թանձրութեան մէջ, կարողանումեր ազատութեամբ սրտաբուխ թափել և կողկողալ սիրականից բաժանվելու համար։

Ամէն տխուր աղաւնին իւր գանդատաւոր ձայնը միաւորումեր նորա կողկողանքի հետ։ Բայց երբեմն, թէպետև շատ հազիւ այսպիսի ասկեղէն ճառագայթը, այն մխիթարական ճառագայթը փարատումեր նորա վշտի մառախուղը։ «Երբ նա յետ դառնայ դէպ ի ինձ, ի՛նչպէս ես երջանիկ կը լինիմ։ Ինչպէս բոլորը կը փոխվի։» Այս մտածութիւնը պարզումեր նորա հայեացքը։ վարդեր թափումեր նորա թշերի վերայ և Եղնսաբէթը ժպտումեր որպէս մայիսի առաւօտ, որ հետևումէ մրրկոտ դիշերից յետոյ։ Այս կերպով անց կացաւ մօտ իբր երկու ամիս։

Մի օր Եղնսաբէթը պէտք է Մոսկվա գնար վարդաջուր գնելու, որով նորա մայրը բժշկումեր իւր աչքերը։ Մեծ փողոցներից մինի մէջ պատահեցաւ նորան մի հոյակապ կառք և այս կառքի մէջ տեսաւ նա Էրաստին։ «Ա՛խ, —գանչեց Եղնսաբէթը և վազեց նորա քամակից։ բայց կառքը մօտից անցանելով դարձաւ դէպ ի դաւիթը։ Էրաստը դուրս իջաւ կառքից և կամենումեր արդէն գնալ, բայց յանկարծ գտաւ իւրեան Եղնսաբէթի գրկի մէջ։ Նա գունաթափվեցաւ, —յետոյ չպատասխանելով ոչ մի խօսք նորա բացագանչութեանը, բռնեց ձեռքից, տարաւ իւր առանձնասենեակը, փակեց դուռը և ասաց նորան։ —«Եղնսաբէթ, հանգամանքներս փոխվեցան։ ես կամենումեմ պսակվել, դու պէտք է հանդիստ թողուս ինձ և քո սեփական հանգստութեանդ համար պիտոյ է մեռանաս ինձ։ Ես սիրումեի քեզ և սիրումեմ այժմ, այսինքն ցանկանումեմ քեզ ամենայն բարութիւն։ Ահա հարիւր ռուբլի դրամ, առ (և նա դրեց արծաթը նորա գրպանը), թող ինձ համբուրեմ քեզ վերջին անգամ և գնա դէպ ի տուն։»

Յառաջ քան Եղիսաբէթի ինքն իւրեան ղգալը, նա դուրս լսեց Նորան առանձնասենեակից և ասաց ծառային, — Ճանապարհ ձգիր այս աղջիկը գաւիթից։ Իմ սիրտը արիւնով է լցվում այս րոպէիս։ Ես էրաստի մէջ մոռանում մարդութիւնը, պատրաստ եմ անիծել Նորան։ Բայց իմ լեզուս չէ շարժվում. նայում եմ երկնքի վերայ և արտասուքը թաւիվում երեսիս վերայով։ Ա՛խ, ինչու համար չէն գրում վիսպասանութիւն այլ մի տեղտլի ստոյգ պատահած իրողութիւն....

Ես այսպէս էրաստը խօսեց Եղիսաբէթին ասելով, թէ նա պատերազմ է գնում։ Ո՛չ, նա ճշմարիտ պատերազմի մէջ էր. բայց վոխանակ թշնամիների հետ կռվելու, նա թուղթ էր խաղում և տանել տուեց Համարեա թէ իւր բոլոր գոյքը։ Շուտով հաշտութիւն եղաւ, և էրաստը գարձաւ Մոսկվա պարտքերի մէջ թաղված։ Նորան մէկ հնար էր մնում իւր հանգամանքները ուղղելու. — պսակվել մի հասակաւոր հարուստ այրի կնոջ հետ, որ վաղուց սիրահարվել էր նորա վերայ։ Նա վճռեց այս բանը և գնաց Նորա տան մէջ բնակվելու. իւր մտերիմ Եղիսաբէթին մի միայն հնկնկանք նուիրելով։

Բայց մի՞ թէ այս բոլորը կարող է արգարացնել Նորան։ Եղիսաբէթը գաանվեցաւ վողոցում և այնպիսի գրութեան մէջ, որ ոչ մի գրիչ չէ կարող նկարագրել։ — «Նա, նա քշե՛ց ինձ. նա սիրում ուրիշին. ես մեռած եմ։» Ահա Նորա մտածմունքը, Նորա ղգացմունքը, որ բոլորովին ուշաթափվելուց ընդհատվեցաւ առ ժամանակ։

Մի բարի կին, որ գնում էր վողոցով, կանգնեցաւ Եղիսաբէթի մօտ, որ պարզված էր գետնի վերայ և աշխատում էր գաստացնել։ Թշուառ աղջիկը բացեց իւր աչքերը — վեր կացաւ այս բարի կնոջ օգնութեամբ, շնորհակալ եղաւ Նորանից և գնաց, ինքը ևս չհասկանալով, թէ ուր։ — «Չէ՛ կարելի ինձ մնալ աշխարհիս երեսին» — մտածում էր Եղիսաբէթը, — «չէ՛ կարելի ..... Ո՛չ. եթէ ընկնէր իմ վերայ երկինքը ... եթէ երկիրը կլանէր ինձ ... Ո՛չ, երկինքը չէ ընկնում և երկիրը չէ շարժվում ... վա՜յ ինձ։» Նա դուրս եկաւ քաղաքից, և յանկարծ գտաւ իւրեան խոր լճի ափի մօտ, հին կաղնիների շուաքի տակումը, որ քանի մի շաբաթ սորանից յառաջ, անմռունչ վկայք էին Նորա զմայլանքին։ Այս յիշատակութիւնը շարժում Նորա հոգին։ Սարսափելի սրտի տանջանք պատկերացաւ Նորա երեսի վերայ։ Բայց քանի մի րոպէից յետոյ լեռնաւորվեցաւ մի այլ մտածողութեամբ, նայեց իւր շրջակայքը, տեսաւ դրացու աղջիկը, (որ էր տասնեհինգ տարեկան), որ գնում էր ճանապարհով, — ձայն տուեց Նորան, հանեց դրպանից տասն ոսկի և տուեց Նորան ասելով. — «Սիրելի Աննա, սիրելի ընկերակից իմ, տար իմ մոր համար այս ոսկիքը, սորա գողացած

չեն, ասա նորան թէ Եղիսաբէթը նորա առաջևը մեղաւոր է. թէ ես թագուհանուհի նորանից իմ սէրը դէպ ի մի խիստ մարդ, դէպ ի՜… ի՛նչ հարկաւոր է իմանալ նորա անունը։ Ասա, որ նա թողնց ինձ, լինդրէ որ նա ինձ ներէ, Աստուած նորան օգնական կը լինի, համբուրէ նորա ձեռքերը, ինչպէս այժմ ես համբուրումեմ քո ձեռքերը,— ասա, որ Թշուառ Եղիսաբէթը հրամայեց համբուրել քո ձեռքերը,— ասա, որ ես……. Այս լոսքը կիսակատար, նա ընկաւ ջուրը։ Անանն աղաղակեց, լացնց, բայց չկարողացաւ փրկել նորան. վաղեց դէպ ի գիւղը—հաւաքվեցան մարդիկ և հանեցին Եղիսաբէթին, բայց արդէն մեռած էր նա։

Այս կերպով վերջացրուց նա իւր կեանքը գեղեցիկ հոգով և մարմնով։ Ես կը ճանաչեմ քեզ, քնքուշ Եղիսաբէթ. երբ մեք միւս կեանքումը կը տեսանենք միմեանց։

Նորա մարմինը թաղեցին լճի մօտ, մատաղատատ կաղնու տակ, և տնկեցին նորա գերեզմանի վերայ մի փայտեայ խաչ։ Այս տեղ և ես ստէպ նստումեմ մտածողութեան մէջ թիկն տալով Եղիսաբէթի թաղված տեղի հողին, աչքերումս լճանումէ արտասուքը, սօսափումեն ծառի տերևները։ Եղիսաբէթի մայրը լսումէ իւր աղջկայ սարսափելի մահը, և արիւնը սառչումէ վախենալուց—և աչքերը փակվումեն յաւիտեանս։

Նորա մէջ փչումէ հողմը, դիւրահաւատ գիւղացիք լսելով գիշեր ժամանակ այս սօսափիւնը, ասումեն.—այն տեղ հառաչումէ ննջեցեալը, այն տեղ հառաչումէ խեղճ Եղիսաբէթը։

* * *

Երբոստը մինչև իւր կեանքի վախճանը անբաղդ եղաւ։ Իմանալով Եղիսաբէթի վիճակը, նա չկարողացաւ միխիթարվիլ, և իւր անձը համարումէր մարդասպան։ Ես ծանօթացայ նորա հետ նորա մահից մի տարի յառաջ։ Նա ինքն պատմեց ինձ այս պատմութիւնը, և տարաւ ինձ Եղիսաբէթի գերեզմանի վերայ։ Այժմ նորա գուցէ հաշտված են արդէն……

Ց. Բէրբէրեան։

ԸՈՒՆՉԵՐԿՈՒԹԻՒՆ.

—

Մի շատ հարուստ անգլիացի մեծատուն,
Բնակվումէր Նեապոլիս քաղաքում.
Մինչև այժմ նա չգիտե ուր և ում
Պատճառել էր մի վիշտ կամ ցաւ իւր կեանքում։

Հայց երբ մի օր երեկոյեան ժամանակ,
Տուն դառնալուց, մտաւ նա մի մութ փողոց.
Պատահեց մի վարձով բռնած աւազակ,
Որին գիտէր անգլիացին շատ վաղուց։

Հայց, ո՛չ որպէս մարդ սպանող չարագործ,
Այլ որպէս լոկ գործակատար մարդերի.
Պատահումէր, որ այդ մարդը շատ անգամ,
Անգլիացուց ուղարկվումէր գործերի։

Նոյն տարու մէջ աշխատութեան փոխանակ,
Նա փողը արծաթ չէր ստանում նորանից.
Բրիտանացին տեսանելով այս ծառան,
Մտքից չանցուց վախենալ մի վտանգից։

Այս միջոցին ծառան գանչեց.—«Իմ պարոն,
Լսի՛ր խօսքիս, բայց տե՛ս, դու ձայն չհանես.
Ապա թէ ո՛չ, ահա սուրս .... ինձ պատուէր
Տուել են քեզ սպանանել. ի՛նչ առնես ....

«Նոյն թէպէտ ես այս րոպէիս կարող եմ,
Բայց մի երկու խափանարար պատճառ կայ.
Որ մեք բարեկամք ենք միմեանց, առաջուն,
Երկրորդ, քեզնից ես շատ անգամ շահվեցայ։

«Մինչև անգամ ես յիշումեմ շնորհը,
Որ ցո՛ւցի՛ր ինձ անցեալ ձմեռի վերջին.
Հաւատացիր ինձ փոխ արծաթ որպէս պարտք,
Մինչ ունէի անտանելի նեղութիւն։

«Ես իմ բանը վերջանալու էր բանդով,
կամ կախաղան պիտի ուտէր գլուխս.
Բայց ինչ կ'առնունք մեք անցածը յիշելով,
կիւրակէ է այսօր, ահա մեծ ցաւս։

«Ինձ հայր Վջլպին, պատուիրել է խիստ սաստիկ,
Տօն օրերում մարդ չսպանել բնաւին.
Բայց գլխիդ գինն ըստացել եմ յառաջուց,
Լսի՛ր ուրեմն այս իմ ոտաջաբխոբինէն.

«Ուրիշի հետ վտանգաւոր մի բան էր,
Ուրիշն գուցէ սուրս առնուր ինձ ըսպանէր.
Բայց դու Հոգիդ, գիտեմ, չես կորուսանում
Եւ խոստացած, խօսքիդ յետ չես դառնում։

«Մի՛ հրաժարվիր, քան թէ իմ տուները քանդես,
Աբի մորթի՛ր, դու քո ձեռքով ինքդ քեզ.
Ի՛նչ դանակ է,— ածելու պէս սուր սրած,
Մի կարճ աղօթք արա շուտով առ Աստուած։»

—Մի թէ կարելի՛ է . . .

«Այդ մեծ մեղք է, ես գիտեմ,
Բայց, եղբայր, հերետիկոս ես արդէն.
Չես հաւատում, ոչ պապին, ոչ Աստուծուն,
Քեզ մահի մէջ չկայ պանապանութիւն։

«Եթէ ուրիշը քեզ սպանէ, կամ դու քեզ,
Կամ պատահի, որ քո մահով մեռանիս.
Քո ճանապարհը պիտի տանի քեզ դժոխք.
Ուրեմն, վճռի՛ր . . . . . »

—Չկամիմ։

«Ո՛հ պարոն,
Ես կարծեցի, դու որպէս անգլեացի
Ունիս մի փոքր հպարտութիւն. կարծեցի,
Թէ դու չէիր հրաժարվելու այս բանից
Վէթ, ասումեմ, հրապուրվելով պարծանքից։

«Ուրեմն, ի՛նչ լուր էք հանել սուտ տեղը,
Թէ մի փոքր նեղացնումէր ձանձրոյթը.

Մի րոպէուայ սպանումիկը ձեր անձը,
Դեռ որպէս թէ չէր դողդոջում ձեր ձեռքը.
Բայց ա՛յժմ. . . . . .»

—Ձեմ վախեցել. այդ սուտ է,
Եւ թէ բաղդը ինձ սրիդ տակ ձգել է.
Փոյթ չէ. բայց ես ինձ չար առնել չեմ կարող,
Մորթիր ինքդ . . . . .

«Ընկե՛ղս. ինձ սուրբ հայրը պատուիրեց,
Տօն օրերում, հոգի չկորուսանել:»

—Ուրեմն լա՛ց թող, որ ես գնամ իմ տունը:

«Իրաւն ասեմ, չկամէի այդ բանը,
Բայց երևի Աստուած այդպէս վճռել էր.
Մնաս բարեաւ մինչև էգուց, իմ ընկեր,
Բայց դու այժմ մտքիս մէջ ես ամէն ժամ,
Աչընաւաբար չվարվեցար այս անգամ.
Թէ միւս անգամ մի լուր օր իմ ձեռք կ'ընկնես,
Ա՛ն ժամանակ ի՛նչ կը լինիս, գիտեմ ես:»

Կոմս Էմմանուէլ:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ:

ՓԵՐՆԱՆԴՕ ԿՈՐՏԵՑ:

(Շարունակութիւն:)

Կորտեցը մինչև այժմ լուռ տհաճութեամբ նկատած էր Մեքսիկացոց կամապաշտութիւնը, և իւր մինչև այժմ արած ձեռնարկութիւնքը յաջողապէս աւարտելուց յետոյ հաստատեց մտքումը ոչնչացնել դորան և ներս բերել քրիստոնէական հաւատը: Բայց ի զուր. Մեքսիկացիք աւելի կամակոր էին քան թէ միւսերը: Մեքսիկացիք ժողովներ արեցին Մօնտեցումայի գիտութեամբ, բայց սորան կասկածելի երևեցաւ բռնութիւն գործ դնել ընդդէմ Սպանիացոց. նա պատգամաւորք ուղարկեց նորա մօտ պահանջելու, որ այսուհետև, ըստ որում նա իւրեան տուած յանձնարարութիւնը լցուցել է, թողու Մեքսիկացոց աշ-

խարհը, ինչպէս ինդրումէին ժողովուրդը և աստուածքը։ Կորտեցը ըստ երևութին ունկն մատուց այս պահանջողութեանը, բայց յառաջ բերից թէ նախ հարկաւոր էր նորան նաւեր կառուցանել։ Այնուհետև մարդիկ գնային դէպ ի Ծովեզերը, որ Սպանիացոց վերակացութեան ներքոյ փայտ կտրեն. բայց Կորտեցը մտածումէր ժամանակ ստանալ, օրէ օր սպասումէր նա այն մարդերի վերադարձին, որ ուղարկած էր դէպ ի Սպանիա։

Նորա դրութիւնը շատ կասկածելի էր. Հին երկմտութիւնների վերայ յաւելացան և նոր տարակոյսներ, ըստ որում Մեքսիկացոց հնազանդութիւնը այնպէս, ինչպէս եղած էր մինչև այժմ, կարող չէր երկար տևել. այլև տեսանումէր նա, թէ այն պատիւը, որ մինչև այժմ ունեցած էին դէպ ի Սպանիացիք, օրէ օր փոքրանումէր և այս պատճառով սպասելի էին խռովալից հանդիպմունք։ Այս նեղեալ դրութեան մէջ լուր ստացաւ նա, թէ նաւեր եկած էին Ծովեզերի մօտ։ Նա կարծեց թէ դոքա այնպիսի նաւեր էին, որոնց վերայ դարձած էին իւր պատգամաւորքը բերելով իւրեանց հետ օգնութիւն և պաշտպանութիւն թագաւորի կողմից. բայց շուտով ստուգվեցաւ դորա ներհակը։ Այն նաւերը թուով 18, եկած էին կուբայից և ուղարկած էին Բելասկվեզից ընդդէմ նորա, և կրումէին 800 մարդ հետևակ, 80 ձիաւոր, 120 բալիստրաձիգ և 12 թնդանօթք։ Դոցա հրամանատարը էր Պամֆիլօ Նարվայեց, որ պատուէր էր ստացել Կորտեցը իւր պաշտօնակալների հետ միասին կապանքի մէջ դնել և ուղարկել դէպ ի Կուբա. այլև կատար հաստացանել Նոր-Սպանիայի տիրապետութիւնը, որի համար Բելասկվեցը գործակատար էր կարգված թագաւորից։ Ոչ մի ժամանակ Կորտեցը ցոյց տուած չէ իւր խնացական առաւելութիւնը այնքան, ինչքան վտանգաւոր դրութեանների մէջ։ Նա թողեց Մեքսիկոյի մէջ 150 մարդ պեդրօ դը Ալվարադոյի հրամանի տակ, և միւսների հետ միասին հետացաւ, ամենայն ղգուշութեամբ ծածկելով Մօնտեցումայից իւր բացագնացութեան պատճառը։ Բայց նորա բոլոր զօրքը բաղկանումէր միայն 250 մարդուց, որ արդարև ունէին նորա մէջ մի առաջնորդ որ աւելի քան թէ նոյնքան ևս մարդիկ կարող էր փոխարինել։ Թող նորա շուտափոյթ գործակատարութիւնը, նա դրեց իւր յոյսը այն նորատեսակ զինուորութեան վերայ շատ երկայն Ինդիացի նիզակներով, և վարժեց նորանց կերպաւորել մի խիտ և համակից բաղմութիւն, որ անթափանցելի էր թշնամիների ձիաւորների համար։

Որովհետև Նարվայեցը արդէն տիրապետել էր Ցեմպօալլային, ապա Կորտեցը դարձաւ դէպ ի այն տեղ, հաստատեց իւր համար մի անմատնելի կայք (յոյս-Բէձ) կանվաս գետի մօտ, և երբ որ Նար-

վայեցը սորանից յետոյ ստիպուած էր յետ գնալ, որովհետեւ նոր եկած պատերազմողքը չկամէին տանել արշաւանքի ծանրութեններին անձրեւի միջոցում, այնուհետեւ Կորտեցը յանկարծ, գիշերով յարձակվեցաւ նորա վերայ, ջարդեց նորան և դերի առաւ նորա զօրքի մեծ մասը։ Այս յաղթութիւնը արժեց նորան երկու մարդու կեանք և շատ վերաւորք. բայց Կորտեցը գերիների հետ վարվեցաւ մարդասիրութեամբ, և այդպէս առիթ տուեց նոցա մեծ մասին մնանել նորա պաշտօնի մէջ։ Մի քանի օրից յետոյ տեղեկութիւն տուեց նորան Ալվարադօն, թէ Մէքսիկացիք ամենայն կողմից յարձակվումեն նորա վերայ. թէ կերակրի շտեմարանները աւերած, մի քանիքը իւր մարդերից սպանված էին, և թէ առանց շուտափոյթ օգնութեան, կամ թշնամիների և կամ թէ սովի երեսից դառնելու է կորուստ։ Երբ որ Կորտեցը տեղեկացած էր այս անցքերին, շտապեց նա դէպ ի Մէքսիկօ 2,000 տլասկալացիներով, առանց ընդդիմութիւն գտանելու Մէքսիկացոց կողմից, որ չգիտէին օգուտ քաղել իւրեանց շահաւէտ դրութենից, քաղաքի մէջ, և վարվեցաւ այժմ Մօնտեցումայի հետ աւելի խստութեամբ, բայց և դորանով այնպէս ղայրացրեց Ինդիանացոց սիրտը, որ նոքա նոր ի նորոյ ղէնք բարձրացրեցին։ Անհնարին չանադրութեամբ միայն կարող էր Կորտեցը պահպանել իւր անձը և տեսաւ ղարմացքով, թէ ի՛նչ բանի ընդունակ էր մի անկիրթ ժողովուրդ, եթէ դա վաւելել էր կատարութեամբ։ Դորա վերայ յաւելացան այլ անախորժութիւնք։ Նարվայեցի ըներած պատերազմողքը մնածել էին, թէ յաղթութիւնը լինելու է հեշտ, և գտանելի հարստութիւնքը մեծ, բայց որովհետեւ չգտան նոքա ոչ միւնը և ոչ միւսը, սկսեցին ոմոռալ և անիծել իւրեանց թուլութիւնը, որ տեղիք էին տուել հրապուրիչ խօսքերի։ Այս հանգամանքի մէջ Կորտեցը մնածեց, կամ մի կտրողական արշաւանքով հնարաւորել Մէքսիկոյի հնազանդութիւնը, կամ թէ գոնեայ յառաջացնել մի հաշտութիւն. բայց նա հանդիպեցաւ մի անակնունելի հաստատամտութեան թշնամիների մէջ, որոնց միւը ասես թէ միշտ բաղմանութեամբ, ինչքան որ կոտորվումէին։ Թէպէտեւ Սպանիացիք բաց դաշտի վերայ յաղթող էին, բայց նոցա դրութիւնը մի անասելի կերպով դժուարանութեամբ, երբ որ համարձակվումէին ներս մնանել նեղ փողոցների մէջ։ Մի ահաւոր արիւնոտ բաղանիքից յետոյ ոչինչ օգուտ չէր ստացված, և սպանիական առաջնորդը զարհուրելով, խելամուտ եղաւ, թէ նորա կեանքը քաղաքի մէջ անպահպանելի է այլևս։ Բայց յառաջուց կամէր նա փորձել, թէ ի՛նչ տպաւորութիւն գործելու է ժողովրդի վերայ նոյն իսկ Մօնտեցումայի երևելը։ Այս անբաղդ թագաւորը, երբ որ միւս օրին նորոգվեցաւ կռիւը, պիտոյ է ցուցանէր իւր անձը ժողո-

վըղին և զգուշացներ Նորան կռուիլը։ Նորա բարբառը, որ մի մի բոպե ընդհատումեր կռիւը, լսեցին մխիթարով, և նա շուտով վայր ընկաւ, նետեր ու քարեր թափվելով նորա վերայ։ Սպանիացիք չկարողացան պաշտպանել Նորան։ Ա,յսպէս հասկացաւ Մօնտեցուման իւր անբաղդ դրութիւնը, և մի փոքր յետոյ աւարտեց իւր կեանքը պատառելով այն պատանքը, որ Սպանիացիք դրել էին Նորա վէրքի վերայ։

Մի դաշնախօսութիւն Մէքսիկացոց հետ երևումեր այժմ ամենևին անկարելի, որովհետև նոցա զայրացութիւնը չմեղմեցաւ և ոչ մի փոքր։ Թէպէտ սկսեցին Նորա պաշտպանել իւրեանց անձը մի տեսակ շրջափակութեամբ քաղաքի մէջ. բայց այս գործը այնքան վտանգաւոր էր Սպանիացոց, որ սոքա ստիպուեցան հրաժարվիլ քաղաքից մինչև գիշերը վերայ կը հասաներ։ Սկզբումը անարգել յառաջ գնաց չուն, բայց շուտով յառաջացան յարձակմունք յամաքի վերայ և ծովի կողմից։ Սորա վերայ յաւելացաւ և այն, որ ծանր պատերազմական անօթների պատճառով կամուրջը այն թումբի մօտից անցանելու միջոցին, որ ընտրած էին իւրեանց յետադարձի ճանապարհ, այնպէս վակվեցաւ, որ չէր կարելի արձակել Նորան։ Թշնամիներից շրջապատված, հասան թումբի միւս բացուածքին։ Կարգը և շէնքերի պատուականութիւնը այն խիտ նեղուածքի մէջ ոչինչ չօգտեցին. յառաջացաւ անկարգութիւն, Սպանիացիք վաստակած էին մորթելուց. դիակներով լցուեցան թումբների բացուածքը, և անհատատալի ջանքով միայն կարողացաւ կորտեցը 100 մարդով փախչել թումբի վերայից։ Այնուհետև կարգաւորելով այս փոքրիկ խումբը, անդղրդելի հոգով յառաջ գնաց նա և այսպէս, կարող էր տակաւին իւրայիններից շատերի կեանքը փրկել։ Բայց շատերը նոյնպէս սպանվեցան, խեղդվեցան ու գերի ընկան։ Փրկվածներովը, գնաց դէպ ի Տակուբա. Նորա թնդանօթները, Նորա պատերազմական կարասիքը, շատ ձիանք, և գանձերի մի մեծ մասը դէպ ի կորուստ դնացին։

Կորտեցի առաջին հոգաբարձութիւնը այն էր, որ ապահովէ զօրքը. նա անդադար շրջապատված էր Մէքսիկացիներից, և Տակուբայի մէջ երևեցան ապստամբութեան նշաններ։ Առաջին ապահով տեղը էր Տլասկալա, բայց Մէքսիկն դրած էր այս տեղի և Կորտեցի այժմեան կացութեան մէջ, և Տլասկալա հասանելու համար պիտոյ էր կատարել 16 գերմանական մղոն, ծովային ճանապարհորդութենից ալատ մնալու համար։ Բայց մի Տալասկալացի յանձն առաւ առաջնորդել զօրքին մի անապատ սահմանի վերայով, ուր կարծումէին ապահով լինելու։ Վեց օր տևեց այս ճանապարհորդութիւնը, Մէքսիկանացոց անդադար հալածանքի տակ և կերակրի մեծ պակասութեան տանելով, միայն քա-

ջուԹիւնը և անսասան մեծահոգուԹիւնը նոցա առաջնորդի, որ ամենայդ րոպէ ակնյայտնի ցուցանուէր իւր նախատեսուԹիւնը, իւր սրամտուԹիւնը, և բաժանորդ էր ամենայն վտանգների, պահպանեց Սպանիացոց մէջ մի զուարԹամտուԹիւն և ուրախ յոյս, Թէ վերջումը բաղդաւորվելու են յաջողուԹեամբ։ Այսպէս հասան նոքա Օտումբային։ բայց այս տեղ ամենայն բանից երևումէր, Թէ մեծ է մի արշաւանք նոցա վերայ։ և Սպանիացիք չմնացին երկար տարակուսանքի մէջ։ ելանելով մի բարձր տեղի վերայ, տեսան միւս կողմի հովիտի մէջ մի զօրք, որ ինչքան կարող էր հասանել աչքը, պարզվումէր նոցա առաջև։ Այժմ երկիւղ եկաւ և առաւել համարձակասիրտ մարդու վերայ։ բայց Կորտեցը իւր պատերազմողներին չԹողեց ժամանակ մտածելու իւրեանց դրուԹեան վերայ, այլ ցոյց տուեց նա, Թէ մնացել է նոցա ընտրելու կամ յաղԹուԹիւն կամ մահ։ Սկսվեցաւ յարձակումը։ Սպանիացոց երկաթի զէնքը անընդդիմանալի էին։ բայց եԹէ Թշնամիների մի մասը յետ էր քարշվում, միւսերը յառաջ էին գալիս մի այլ կողմից։ Սպանիացիք յաղԹված կը լինէին, եԹէ Կորտեցը իւր հոգու ներկայուԹեամբ չը վճռէր կռիւը։ Նա նկատեց, որ մեծ Թագաւորական դրօշակը որ Թշնամիների զօրավարի առաջից տանումէին, հետ գհետ մօտենումէր, և որովհետև լսած էր Թէ Մեքսիկացոց հաւատալովը ամենայն կռուի յաջողուԹիւն կապած է այդ դրօշակի վերայ, այս պատճառով առաւ իւր հետ իւր առաւել համարձակ պաշտօնակալները որոնց ձիանքը կարող էին դեռ ևս դիմանալ, և յառաջ դնաց դէպ ի դրօշակը այնպիսի զօրուԹեամբ, որին ոչինչ բան հակառակել կարող չէր։ Այն քաջմուԹիւնը որին յանձնած էր դրօշակի պաշտպանուԹիւնը, շուտով հալածվեցաւ և դրօշակակիրը սպանվեցաւ և դրօշակը խլվեցաւ։ Այս րոպէիս մի ընդհանուր ահ բռնեց Մեքսիկացոց սիրտը, նոքա զէնքընկէց եղան և Թողեցին Թշնամու ձեռքումը մի շատ ճոխ աւար։ Գալոց օրին Սպանիացիք հասան Տլասկալային ոչ առանց ծածուկ կասկածանքի, Թէ մի՛ գուցէ և այս տեղի բնակիչքը ընդդէմ դուրս գան նոցա։ Բայց, նոցա ատելուԹիւնը դէպ ի Մեքսիկացիք և Կորտեցի պարծանքը այնքան մեծ էր, որ եկաւորքը շատ սիրով ընդունվեցան և չքացաւ ամենայն կասկած։

Երբ որ Կորտեցը մնաց այս տեղ իւր հիւանդները դարմանելու և վաստակաւորներին հանգիստ տալու համար, իմացաւ նա, որ Մեքսիկացոց արշաւանքը ոչ Թէ միայն ուղղած էր նորա վերայ, այլ եղած էր ընդհանուր։ Մի հատուած սպանիական զինուորների, որ Ցեմպօալլայից օգնուԹիւն էր գալիս նորան, տեղ չհասաւ, որովհետև Տապէաքայի բնակիչքը կտրել էին նոցա ճանապարհը։ մի այլ հատուած որ վերա-

քրուցի մէջ մնացած պահապան զօրքին բերելու էր նոցա հասանելի բաժինը Մեքսիկոյի մէջ ստացած գանձերից, ոչնչացրած էր սարերի մէջ։

Այս հանգամանքի մէջ, Կորտեցը աշխատեց և Տլասկալացոց սիրտը առաւելագրաւելու կապել իւր հետ և հասաւ իւր նպատակին, թողտալով նոցա Օտումբայի աւարը։ Զիաւոր մարդիկ մօտ քարշեց նա վերա-քրուցից և նոյն միջոցին ուղարկեց նա դէպ ի Հայիթի և Եամայկա, գործակից մարդիկ ճարելու։

Վաղուց արդէն ուսած էր փորձից, թէ հանպիստը շատ վնասակար էր իւր պատերազմողներին. այս պատճառով որոշեց նա, որ իսկոյն պարապեցնէ նորանց։ Նոցա մի մասը տարաւ նա ընդդէմ Տապէկացոց, իւր սպանված պատերազմողների վրէժը հանելու նոցանից։ Դոքա ըստ մեծի մասին Նարվայեցի սօլդատներից էին, և այս պատճառով միւսերը մնածուէին թէ պարտական են իւրեանց եղբարցը, վրէժխնդիր լինել նոցա սպանողներից։ Նոյնպէս համոզվեցան Տլասկալացիք մանաւանդ լինել այդ գործին և Կորտեցը առաջնորդեց այդ զօրքին։ Պատերազմը սկսվեցաւ, մեծ կորուստ բերելով թշնամուն, և օգոստոսի մէջ 1520 թուականին ստիպվեցան Տապէկացիք հնազանդվիլ սպանիական տէրութեանը։

Այսու ամենայնիւ հարկաւոր էին դործի համար բուն Սպանիացիք, և բաղդը աւելի օգնեց այս տեղ, քան թէ կարելի էր ակնկալել (ըստ-ել)։ Բնլասկվեցը, որ վերոյիշեալ ձեռնարկութեան յաջողվելու մասին տարակոյս չունէր, ուղարկեց քսանկից երկու նաւ նոր պաշարով և մի փոքր զօրքով։ Երբ որ սոքա ներս վազեցին Վերա-քրուցի նաւահանգստի մէջ, Իսկալանտե հրամանակալը այն տեղ, տիրապետեց նոցա և պատճառ տուեց նոցա միանալ Կորտեցի հետ։ Նոյն բանը հանդիպեցաւ և երեք միւս նաւերի բաւական նշանաւոր մեծութեամբ։ Սոքա եկած էին Եամայկից, պատրաստված այն տեղի կուսակալի ձեռքով, որ մի նախանձընդդէմ և անյագելի արծաթասէր մարդ լինելով, ցանկացած էր մասն ստանալ այն շահաւետութենից, որ յուսալի էր Մեքսիկո աշխարհից։ Բայց դժուար չէր և այս մարդերի հաւատարմութիւնը խախտել, որովհետև Կորտեցը միայն երևումէր, թէ կարող է շնորհել նոցա, ինչ որ նոքա ցանկացած էին։ Ինչ որ պակաս էր, լրացուց մայրենի աշխարհը։ Սպանիացի վաճառականք լսելով Մեքսիկոյի հարստութիւնը, կաւուցին մի նաւ, յուսալով այն տեղ մի ճոխ վաճառահանդէս գտանել։ Բայց Կորտեցը ուրախ էր, որ կարող էր այն նաւերի բեռները գնել, որ ամիսփուռումէին իւրեանց մէջ բաւական մեծ քանակութիւն պատերազմական պիտոյքի, որ անգին էր նորա աչքումը։ Եւ

նաւերի հետ եկաւոր մարդիկը միաւորվեցան նորա հետ։ Այսպէս, ըստացած զօրութիւնը բաղկացնուէր 180 մարդ և 80 ձի, որ այնու ամենայնիւ չէիմաստրինեց նորա ունեցած կորուստը։ Բայց մի մեծ հոգի կենդանի էր զօրքի մի մասնի մէջ, մի հերոսական քաջութիւն հոգևորուէր զօրապետքը և մնացածը յաջողեց բաղդը։ Կորտեցը առաւելապէս օգնութիւն գտաւ իւր թշնամիներից. այժմ կարող էր տհաճները արձակել իւրեանից, և ունէր իւր մօտ դեռ ևս 550 հետևակ սոլդատք, (50 հրացանակիր) 40 ձիաւոր և մի փոքրիկ շտեմարան թնդանօթների։ Այս զօրքի վերայ դրեց նա իւր յաջողութեան բոլոր յոյսը, երբ որ դեկտեմբերի 28-ին միւսանգամ դուրս արշաւեց Տլասկալայից դէպ ի Մեքսիկօ, վեց ամիս յետոյ քան թէ թողել էր այս քաղաքը։

Մեքսիկոյի մէջ պատահած էին խորհրդաւոր փոփոխութիւնք։ Մօնտեցումայի մեռանելուց յետոյ նստել էր աթոռ նորա եղբայր կվետլավակա, որին ասում էին ումանք կվետլահուացին. սա անձամբ անձին հալածել էր Սպանիացիքը նոցա վերադարձի միջոցին, այլև մեծ նախատեսութեամբ և անվաստակելի գործականութեամբ կարգադրութիւններ արեց, որ պատշաճաւոր էին երևուի Սպանիացոց վերստին գալուստը անկարելի կացուցանել։ Նախ և յառաջ նորոգեց նա ինչ որ Սպանիացիք աւերել էին, հիմնարկեց պատնէշներ, հայթայթեց (ճարեց) պատերազմական հնարներ, վճնաւորեց իւր պատերազմողքը երկար նիզակներով, ժողովեց թագաւորութեան բոլոր սահմաններից չափահասակ տղամարդիկը, և պատգամաւորներ արձակեց Սպանիացոց դաշնակիցքը խրելու նոցանից, այնպէս, որ կորտեցը դժուարութեամբ միայն կարողացաւ Տլասկալացիքը հաւատարմութեան մէջ պահել։ Բայց կվետլավական չէ պիտոյ տեսանէր իւր հայրենիքի անբաղդութիւնը։ Մի սեւամորթ նեգրի ձեռքով ծաղկացաւը ներս էր լերված Մեքսիկոյի մէջ և պատճառեց այն տեղ ահագին ապականութիւնք։ Այս ցաւով մեռաւ և նա, և նորան փոխանորդեց իւր փոքր որդի, Մօնտեցումայի փեսան կվատիմոցին կամ կվահտիմոցին անուամբ, մի շնորհալի երիտասարդ։

1521 Թուականի սկզբովմը, կորտեցը միւսանգամ ոտք կոխեց Մեքսիկոյի հողի վերայ, հետևութեամբ յաղթելով այն արգելքներին որ երևեցան նորա առաջև։ Նա տիրապետեց թագաւորութեան երկրորդ քաղաքին, որ էր Տեցկուկօ, և նորա յաջողակ դրութեան պատճառով, շինեց նորան իւր գլխաւոր պատերազմական իշխան, գործ դրեց յարմարաւոր միջոցը այս տեղն հրամայող կացիկը հանել իշխանութենից և բարձրացուցանել մի այլ ոք, որին սիրուէր ժողովրդի մի բաժինը և որից հաւատարմութեան յոյս ունէր կորտեցը։ Արշաւանքը

Նոյն իսկ Մեքսիկոյի վերայ պիտոյ է տակաւին յետ պահվէր, պատճառ, Կորտեցը չկամէր ձեռնարկել դորան, մինչև պատրաստ չէին այն թեթեւաշարժ նաւերը որոնց շինուելիւնը վաղուց կարգադրած էր նա։ Շինուելեան վայրը կտրած էր Տլասկալայի մօտակայքումը և Սպանիացոց վերակացուելեան տակ պատրաստած և պիտոյ է այժմ մարդերի ձեռքով բերվէր դէպ ի ծովեզերեայքը։ Այս միջոցին անգործ չմնայ և Կորտեցը։ Նա որոնեց գրաւել միւս քաղաքները, որ կային մեքսիկեան ծովի մերձակայքումը, կամ բռնուելեամբ կամ խաղաղուելեամբ և մանաւանդ վերջին գործի մէջ ցոյց տուեց մի զարմանալի ազդակուելիւն։

Մինչև այսպիսի կերպով սպանիական առաջնորդը իւր ձեռնարկուելեան վախճանը ապահով էր կացուցանում, իւր յատուկ բանակի մէջ, հանդիպեցաւ յանկարծ մի շատ երևելի արգելքի։ Նարվայեցի առաջին սօլդատները չկամէին զուգախառնվիլ (միաւորվիլ) իւր պատերազմողների հետ և ներումէին իւրեանց շատ անգամ դատողուելիւնք գործել այն ձեռնարկուելենների վերայ, որ սկսանումէր նա։ Այժմ այնքան համարձակվեցան նոքա, որ սահմանադրեցին կոտորել Նորա նախակարգ պաշտօնակալները և ընտրել նոր հրամանակալներ, որ իբրև թէ աւելի բարւոք հոգալու էին նոցա ապահովուելեան համար։ Արդէն ժամադիր էին եղած գործը գլուխ տանելու, և ահա Կորտեցի մի հին սօլդատը որ մոլորեցուցած էին, ապաշաւելով իւր յանցանքի վերայ, յայտնեց Նորան բոլոր դաւաճանուելիւնը, այն երեկոյին որ պիտոյ է լուսանար դէպ ի արիւնհեղուելեան առաւօտը։ Կորտեցը իսկոյն դիմեց Վիլլաֆագնայի մօտ որ դարանագործների առաջնորդն էր, որ ահի ու խռովուելեան մէջ ստիպուեցաւ խոստովանել իւր մեղապարտուելիւնը։ Նոյն միջոցին գտաւ Կորտեցը մի ցուցակ, ուր գրած էին դարանագործների անուանքը. բայց նա թաքցրեց Նորան և դիտաւորուելեամբ ոչինչ հետաքննուելիւնք չարեց, եթէ ոչ Վիլլաֆագնայի վերայ, որ, Նորա վնասակարուելիւնը վկայուելեամբ հաստատվելով, դատապարտվեցաւ և կախ տրվեցաւ։ Այնուհետև Կորտեցը ժողովեց իւր զօրքը, պատմեց նոցա ինչ անցած էր, և յաւելացրեց, թէ դաւաճանուելեան կամակիցքը անյայտ էին, որովհետև Վիլլաֆագնան իւր բանտարկուելեան րոպէին մի թուղթ էր կուլ տուած։ Այսպէս խաղաղուելիւն դտան մեղապարտուելեան կամակիցքը, մինչ Կորտեցը կարող էր նկատել նոցա ընթացքը։ Սորանից յետոյ Կորտեցը ամենայն ջերմուելեամբ յառաջ տարաւ Թեթեւագնաց նաւերի շինուելիւնը, ստացաւ Հայիթի կղզուց նոր զօրուելիւն այսինքն 200 սօլդատ, 30 ձի և երկու ծանր թնդանօթ, և զօրանով լաւական էր միւսանգամ սկսել իւր արշաւանքը Մեքսիկոյի վերայ։

Տեցկուկոյի մօտ հրամայեց կորտեցը լծակցել բրիգանտինքը (ընկերոջ նաւերը), մի փոքրիկ գետ փորելով խորացուցանել որպէս ճանապարհ, ապա ապրիլի 28-ին մեծ հանդիսաւորութեամբ, իւր բոլոր զօրքը և դաշնակիցքը ներկայ լինելով, դուրս թողուլ նաւերը ջրի մէջ։ Ամեն մարդ ուշադիր էր նաւերին զարմացքով ու ուրախալից յուսով, երբ որ նոքա ցած էին սողուր դէպ ի գետը, մինչև հասան նոքա ծովին, այս տեղ պարզեցին առագաստները և հողմի առաջից վազ տուեցին։ Այսպէս կորտեցը իշխանութիւն ստացաւ ծովի վերայ, և առանց դորան Մեքսիկոն պիտոյ է ընդդիմացած լինէր նորա բոլոր արշաւանքներին։ Իւր զօրքով, որ այն ժամանակին բաղկանում էր 818 սպանիական հետևակ սօլդատներից (սոցանից 118-ը ունէին հրացան կամ բալեստր), 80 ձիաւորից, երեք ծանր, և 15 թեթև թնդանօթներով, պնդեցս կս րգադրեց գործը, որ քաղաքի վերայ մի և նոյն միջոցին յարձակվեցան երեք կողմից, և այս պատճառով կորտեցը երեք բաժին արեց զօրքը, որոնց առաջինին հրամայուեցաւ Սանդովալ, որ պիտոյ է Տալինակայից յարձակվէր հիւսիսային կողմի վերայ։ երկրորդին Պեդրօ դը Ալվարադօ, որ պիտոյ է վերայ վազէր Տակուբայից արևմըտեան կողմի վերայ, և երրորդին Քրիստովալ դը Օլիդ, որ կուիւկանից պիտոյ է արշաւէր հարաւային մասնի վերայ։

Ալվարադօն և Օլիդը մայիսի 10-ին սկսեցին իւրեանց գործակատարութիւնքը այն բանով, որ ջրմուղքը որ Մեքսիկոյին հասուցանում էին ընդհատ ջուր, աւերեցին և դորանով մայրաքաղաքի բնակիչքը մեծ վտանգի մէջ ձգեցին, որովհետև ծովի ջուրը դառնահամ ու անըմպելի էր։ Նոյն իսկ քաղաքները, ուստի պիտոյ է սկսանէին նոքա իւրեանց շարժողութիւնը, գտան նոքա բարձի թողն արած, որովհետև բնակիչքը փախած էին դէպ ի մայրաքաղաքը, ուր հաւաքված էր բոլոր Մեքսիկացոց զօրութիւնը։ Առաւելապես ահագուժիչ էին բրիգանտինքը, և այս պատճառով Մեքսիկացիք, ինչպէս նախագուշակել էր կորտեցը, դարձուցին նոցա վերայ իւրեանց բոլոր ուշադրութիւնը։ Մօտեցան նոցա մի բաղմութիւն փոքրիկ նաւակների, և արդարև Սպանիացիք ընկան մի փոքր դժուարութեան մէջ, որովհետև ծովը ամենևին անշարժ էր հողմից։ Բայց արշաւանքի րոպէին փչեց մի թարմ հողմ և փոքր միջոցում վեր ի վայր շրջվեցան Մեքսիկացոց նաւակները, խորասոյզ եղան կամ թէ դէպ ի փախուստ դարձան։ Անդուհետև կորտեցը խոստովանված էր որպէս իշխան ծովի վերայ։ Նա բաժանեց իւր նաւերը երեք բաժին, որ պիտոյ է յամնքաղօրքի գործողութիւններին ձեռնտու լինէին և պահպանէին հաղորդակցութիւնքը։ Իւր արշաւանքների մասին ցանքի վերայ ընթացաւ կորտեցը մի առանձին կերպով, որ և իւր

նկարագրութեան մէջ աշխատութէ արդարացնել։ Ամենայն առաւօտ հրամայեց նա յարձակվիլ Մէքսիկացոց ամրոցների վերայ, բայց երբ որ հակառակորդների խստապարանոցութիւնը անօգուտ էր կացուցանում արշաւանքը, նա յետ էր քարշում իւր պատերազմողը, որ սակաւաթիւ լինելով անբաւական էին պահպանել իւրեանց ձեռք բերած տեղերը։ Այնուհետև Մէքսիկացիք վերստին նորոգութէին աւերածքը և իւրաքանչիւր գիշեր ոչնչացնում էր ցերեկի մեծաշխատ կռիւների պտուղքը։ Կորտեցը երկիւղ ուներ առաւելապէս ներս մնանել նոյն իսկ քաղաքի մէջ, յիշելով իւր անցած ձախորդութիւնը, այլև կարող չէր իւր ինդիանական դաշնակիցներին հաւատալ այն տեղերի պահպանութիւնը որ ձեռք էին բերած։ Բայց Մէքսիկացիք կռվում էին անդադար դիշեր ցերեկ, և պատճառում էին Սպանիացոց ինչ ինչ կորուստ։ Որովհետև մինչև այժմ գործ դրած հնարները անպտղաբեր գտանվեցան, ապա հրամայեց Կորտեցը մի ընդհանուր արշաւանք։ Նոյն ինքը յանձն առաւ հրամանատար լինել Կուիւկանի պարսպի վերայ և պատուիրեց Խլիան դը Ալվարատէին լցուցանել դատարկութիւնքը պարսպի վերայ, երբ որ ինքը յառաջ էր խաղալու։ Նորա զօրութեանը ոչինչ չկարողացաւ ընդդիմանալ, և նա տիրապետեց քաղաքի մի մեծ մասին։ Բայց Ալվարատէն, թէև մի քաչ պատերազմող, չկատարեց նորան տուած հրամանը, այլ կամեցաւ աւելի պարծանք ձարել մնանակից լինելով կռուին։ Այս հանգամանքից իմացաւ Գվատիմոցինը օգուտ քաղել յաջողակութեամբ։ Նա իւր զօրքի միջին մասը յետ քարշեց, զորանով աւելի և աւելի յառաջ բերեց Սպանիացիքը, և երբ որ եղած էր այս բանը, ապա ներս գլորեց նոցա քամակից ահագին մարմիններ, և սկսեց ոտք ամրացնել պարսպի վերայ։ Ապա հրամայեց Գվատիմոցինը մեծ կոչատնութիւն, երբ որ նշան կը տային քուրմերին, զարկել մի մեծ, նուիրական թմբուկ, որի հնչիւնը լցուց Մէքսիկացոց սիրտը մի անհնարին քաջութեամբ։ Այնուհետև Սպանիացիք չկարողացան այս տառապանքի մէջ դէմ կենալ ահագին զօրութեամբ յառաջ դիմող բազմութեններին. նոքա տեղի տուեցին նախ փոքր առ փոքր, յետոյ աւելի արագ ու արագ, մինչև ապա մի ընդհանուր ահ ու դող և խառնակութիւն տարածվեցաւ նոցա մէջ. բոլորեքեան շտապեցին դէպ ի պարիսպը առանց ուշագիր լինելու Ինդիանացոց, և խիտ բազմութեններով յարձակվեցան պարսպի բացուածների մէջ Սպանիացիք, Տլասկալացիք, ձիաւորք ու հետևակք, մինչ Մէքսիկացիք թևերև նաւակների վերայ մնտենալով, թափեցին փախստականների վերայ մի խիտ անձրև նետերի։ Սպանիացոց դրութիւնը շատ տարակուսական էր. նոյն իսկ բրիգանտինքը կարող չէին օգնել նոցա, որովհետև ջուրը պարսպի մօտ

չէր բաւական խոր։ Բայց Կորտեսը կրկին տուեց այս տեղ այնպիսի քաջութեամբ որ արժանի էր նորան։ Երբ որ նա մի քանիսը իւր պատերազմողներից փրկել կամէր, ձեռք ձգեցին և տարան նորան վեց Մեքսիկացի աստիճանաւորք, և դերի գնացած կը լինէր նա, եթէ իւր պաշտօնակալներից երկուքը չլինէին նորան փրկած, նուիրելով իւրեանց անձը։ Խառնակութեան մէջ ստացաւ նա շատ վէրքեր, բայց Տլասկալացիք մահ գտան, աւելի քան թէ քան Սպանիացիք սպանվեցան կամ թէ խեղդվեցան, և քառասուն մարդ ընկան կենդանի Մեքսիկացոց ձեռք, ուր պիտոյ է տրտուր մահով վերջացնէին իւրեանց կեանքը։ Գալոց գիշերը ցոյց տուեց Սպանիացոց մի ահարկու տեսարան։ Բոլոր Մեքսիկօն լցվեցաւ մի բարբարոսական յաղթահանդէսի աղաղակներով. քաղաքը լուսաւորվեցաւ անհամար լապտերներով և մեծ կրքատուները մի այնպիսի լուսափայլութեամբ պայծառացաւ, որ Մեքսիկացիք մի մի կարելի էր որոշել նայեցողին սպանիական բանակից. դոցա մէջ կարծումէին Սպանիացիք տեսանել և իւրեանց դերի տարած ընկերքը, երբ որ սոքա պիտոյ է զոհվէին աստուածներին։ Մինչ Մեքսիկացիք այսպէս անձնատուր էին իւրեանց ահաւոր յաղթողական ուրախութեանը, ուղարկեցին նոքա սպանած Սպանիացոց գլուխքը դէպ ի թագաւորութեան գաւառները, որ և այս տեղ վառեն բնակիչների սիրտը նոյն կրօնական մոլեդնութեամբ։ Սոցա վերայ յաւելացուցին քուրմերը, թէ Հուիցլիլօպօխտլի, աստուածը պատերազմի, թշնամիների արիւնով հաշտեցած ասել է, թէ ուր օրի մէջ օտարականքը ընաջլինջ կը լինին։ Այս կանխատեսութիւնը ամենայն տեղ բոլորովին հաւատ գտաւ, այն և դաշնակիցներից շատերը թողեցին և գընացին Սպանիացոց բանակից։ Կորտեսը գործ դրեց ամենահեշտ հնարը ինդիանացոց կարծիքը սուտ կացուցանել. նա ընտրեց մի անառիկ կացութիւն, մնտ քարշեց և իւր բրիգանտինքը որպէս պաշտպանութիւն, դադարեցրեց բոլոր գործողութիւնքը, որ կարող էին վտանգաբեր լինել և սպասեց սահմանեալ ժամանակի վերջին։ Եւ որովհետև Մեքսիկացոց աստուածի պատգամը սուտ դուրս եկաւ այսպէս, այնուհետև հետ վշտեց վերադարձան Սպանիացոց դաշնակիցքը, և Կորտեսը նոր ի նորոյ սկսեց պաշարել քաղաքը։ Այսուհետև փոխեց նա իւր արշաւանքի եղանակը։ Նա հրամայեց իւր զօրքին ծանրաքայլ և ամենամեծ զգուշութեամբ յառաջ գնալ։ Ինդիանացիք պիտոյ է լցուցանէին պարիսպների դատարկութիւնքը. այդ միջոցին բրիգանտինքը ոչնչացրեցին Ինդիանացոց նաւակները։ Այսպէս մնտեցաւ Կորտեսը քաղաքին, որ դեռ ևս շատ սաստիկ էր ընդդիմութիւնը. հալարաւոր մարդիկ մեռան դեռ ևս, պաշտպանելով քաղաքը. բայց և բաց ի սո-

րանից շատ տառապալից էր Մեքսիկացոց դրութիւնը։ Չկար ըմպելի ջուր, պակասեցան շուտով և կենսական հնարները, որովհետև մայրաքաղաքի ահագին ժողովուրդը սպառել էր պաշարը, բրիգանտինքը խափանումէին ամենայն հաղորդակցութիւն, այլև Տլասկալացիք և միւս դաշնակիցքը լռնած էին բոլոր ելումուտքը։ Կորտեցը իւրայիններուն խիտ կարգած բաղմութիւններուն հետ, որ զինաւորել էր երկար նիզակներով, յարձակվեցաւ Թշնամիներուն վերայ։ Երբ որ նա ներս մտաւ քաղաքների մէջ, իսկոյն քանդվեցան տուները. սրէ օր աւելի հող ձեռք բերեց նա և Մեքսիկացիք միշտ աւելի և աւելի նեղ տարածութեան մէջ շրջափակվեցան, մինչև վերջումը յուլիսի 27-ին, 1521 թ. այն երեք ըօրագունդը Սպանիացոց, հանդիպեցան միմեանց մեծ հրապարակի վերայ քաղաքի մէջ տեղումը։ Քաղաքի երեք քառորդ մասը ապականված էին, և ինչ որ մնացած էր, կարող չէր երկար ընդդիմանալ։ Այն բոլոր ձախորդութիւնների մէջ Գվատիմոցինը մեծ ամուր և անյաղթելի և միշտ մերժեց ամենայն առաջարկութիւն խաղաղութեան մասին։ Վերջապես նորա մեծամեծներից մի քանիքը հաւանեցուցին նորան յետ քարշվիլ դեպ ի մի հեռաւոր գաւառ, այս տեղից վերստին նորոգելու ընդդիմութիւնը։ Այս պատճառով փորձ փորձեցին նորա մի քանի ժամանակ յետ ձգել կորտեցին հաշտութիւն խօսելով նորա հետ, մինչև Գվատիմոցինը փախած կը լինէր։ Կորտեցը շուտով խելամուտ եղաւ, թէ ի՛նչ էր նոցա դիտաւորութիւնը, և հրամայեց քաջ Սանդովալին շատ զգուշութեամբ հսկել Թշնամու ամեն մի շարժողութեան վերայ։ Սա նկատեց շուտով մի քանի, շատ մարդերով ծանրաբեռնած, թեթև նաւակներ, որ շտապումէին փախչել ծովի վերայով, և այս պատճառով հրամայեց Գարսիա Հօլգվինին, որ ուներ իւր իշխանութեան տակ առաւել արագաշարժ բրիգանտինը, շտապել փախստականների քամակից։ Երբ որ Մեքսիկանացիք տեսան թէ չէ կարելի փախչել, ցած թողեցին նաւերի թիակքը և Գվատիմոցինը անձնատուր եղաւ որպէս գերի։ Կորտեցի առաջև բերվելով, ասաց նա. «Ես արած եմ, ինչ որ արժան էր մի թագաւորի։ Ա՛ռ քո սուրը և կոխի՛ր իմ կուրծքիս մէջ և վե՛ր առ ինձանից մի կեանք, որ այսուհետև ոչինչ արժանաւորութիւն չունի։» Այնուհետև անձնատուր եղաւ և քաղաքը, որին, ինչքան որ նորանից մնացած էր թագաւորին, տիրապետեցին Սպանիացիք օգոստոսի 13-ին 1521 թուականին, երբ որ նորա պաշարումը տևած էր արդէն 75 օր անդադար վտանգների և անչափելի արիւնհեղութեան մէջ Ինչիանացոց կողմումը։ Քաղաքի կողոպտած գանձերը ամենևին անհամաձայն էին տիրապետողների ակնկալութեանը։ Գվատիմոցինը հրամայել էր իւր գանձերը թափել ծովի մէջ,

դաշնակիցքը շատ բաներ այն միջոցին, երբ Սպանիացիք պարապած էին կռուով, առել ու տարել էին, և այն բոլոր աղնիւ մետալքը որ կարողացան ժողովել, աւելի չէր քան թէ մի չափաւոր քանակութիւն 120,000 թալերի, այնպէս, որ շատերը չկամէին և ընդունել նոցա բաժին ընկած արծաթագլուխը, միւսերը մեղադրումէին Կորտեցին և աստիճանաւորներին, որպէս թէ սոքա խարդախութիւն էին արած. միւսերը դարձեալ հաստատումէին, թէ Գվատիմոցինը թագուցել է իւր գանձը: Այս անբաղդ թագաւորը պիտոյ է դեռ ևս սոսկալի չարչարանքներ կրէր Սպանիացոց ձեռքից. խնդիրք ու խոստմունք անօգուտ եղան սօղդատների առաջև, և Կորտեցը նոցա տհաճութիւնը մեղմելու համար, թոյլ տուեց մի այնպիսի գործ, որ մնալու է որպէս մի մշտնջենաւոր կեղտ նորա պարծանքի վերայ: Նա թող տուեց տանջանքի տակ ձգել այն անբաղդ իշխանը և նորա նախակարգ մինիստրները, որ այդպէս ստիպվին խոստովանել թէ ուր թագուցած էին գանձերը: Գվատիմոցինը մի դերօրինակ հաստատութեամբ հայհոյեց ամենամեծ տանջանքի, այնպէս, որ Կորտեցը շատ խոր շարժվելով սիրտը, հրամայեց արձակել նորան: Բայց նորա կեանքը լնպայեցին դեռ ևս մի քանի րոպէ միայն: Մի թեթև կասկածանքի հիման վերայ, որպէս թէ Գվատիմոցինը մի դաւաճան խորհուրդ էր արած, իւր հին հպատակքը Սպանիացոց ղէմ տակից աղատելու համար, հրամայեց Կորտեցը որպէս սոքան, նոյնպէս Տուցկուկոյի և Տակուբայի կացիկները, կախ տալ առանց օրինապատշաճ դատաստանի:

Մեքսիկեան թագաւորութիւնը, երբ որ կործանված էր մայրաքաղաքը, հեշտ հնազանդվեցաւ Սպանիացոց: Փոքրիկ դունդեր շրջելով աշխարհի մէջ, յառաջ գնային մինչև առաւել հեռաւոր սահմանները, մինչև Հանդիպակաց ծովը: Բայց նոյն իսկ Կորտեցը չագեցուցել չէր իւր պատուասիրութիւնը մի այդպիսի մեծ աշխարհի տիրապետութեամբ: Նա կարծումէր թէ նորա ձեռնարկութիւնը լիակատար չէր, եթէ իւր նորագիւտ աշխարհները և տիրապետութիւնքը չընդարձակէր մինչև Հնդկաստան, և այս պատճառով յղացաւ իւր մէջ այն խորհուրդը, որ Հարաւածովի սահմանից դուրս ճանապարհորդէ մինչև Հնդկաստան, անգիտանալով որ նոյն միջոցին Մագելհանը արդէն նաւարկելով անցել էր Խաղաղ ծովը:

Յիշատակի արժանի է Կորտեցի կեանքի մէջ այն բանը, որ նա իւր մեծամեծ ձեռնարկութիւնքը յառաջ տարաւ առանց որ և իցէ հրապարակական պատուէր հրամանի ստանալու այդ մասին: Նորա ուղարկած պատգամաւորքը չէին վերադարձած, և Փօնսեքա եպիսկոպոսը Բուրգոսի, որին յանձնած էր դերագոյն վերատեսչութիւնը Ինդիանա-

կան գործերի վերայ, այնքան սակաւ պաշտպանեց Նորան, որ Նորա բոլոր ձեռնարկութիւնը քարուքանդ օրպէս մի օրէնսընդդէմ յանդգնութիւն, և ուղարկեց Քրիստովալ դը Տապիային, որ Նորան ցած ձգէ իշխանութենից, ըմբռնէ Նորան, Նորա սեփականութիւնը առնու Նորանից օրպէս թագաւորական գանձատան պատկանելիք, քննէ Նորա գործերը և այդ մասին յայտարարութիւն մատուցանէ Ինդիանական խորհրդարանին։ Պատգամաւորը, մի քանի շաբաթ Մեքսիկոյի տիրապետութենից յետոյ, ցամաք դուրս եկաւ Վերա-Քրուցի մէջ և իսկոյն յայտնեց իւր վերայ դրած պատուէրը Կորտեցին. բայց նա չունէր այնքան զօրութիւն մի այդպիսի խորհրդաւոր գործ յառաջ տանելու, այսինքն այն տղամարդը, որ կանգնած էր իւր յաղթող զօրքերի գլխին, որ ունէին նոյն օգուտը և նոյն վնասը Կորտեցի հետ միասին, այդպիսի քաջագործութիւններից յետոյ կապանքի մէջ դնել, և այս պատճառով հարկադրված էր առանց հասանելու իւր նպատակին, վերստին հեռանալ Մեքսիկոյից։ Թէպէտ առաջին վտանգը այսպիսի յաջողութեամբ անցած էր, այնու ամենայնիւ անպատշաճ տեսաւ Կորտեցը մի նմանապիսի վտանգի տակ թողուլ իւր անձը։ Այս խորհրդով ահա, Կորտեցը իւր առաւել հաւատարիմ ընկերներից երկու մարդ, Ալֆոնսո դը Ավիլա և Անտոնիո դը Գուիոնէս ուղարկեց դէպ ի Սպանիա, կայսր Կարոլոս հինգերորդի սիրտը գրաւելու, յայտարարութիւն մատուցանելով Նորան Կորտեցի փառաւոր գործերի մասին և ոչինչ չպահանջելով կայսրից, բաց ի այն բանից, որ նա հաւան գտանվի եղած գործին, և Կորտեցին կարգէ հրամանակալ տիրապետած աշխարհների վերայ։ Այս խընդրուածքի հետ ուղարկած էր և արքայական բաժինը ստացած աւարից։ Բայց և այս պատգամաւորներին պատահեցան ինչ ինչ ձախորդութիւնք։ Անտոնիո դը Գուիոնէսը մեռաւ և Ալֆոնսո դը Ավիլան գերի ընկաւ մի ֆրանսիական ծովային աւազակի ձեռք, ուստի աղատեց Նորան յետոյ Ֆրանցիսկոս առաջինը։ Բայց Կորտեցի հաւքաւը տարածվեցաւ օրէ օր առաւել, և միւս յայտնագործողների վաստակքը այնքան ևս աննշան երևեցան, ինչքան որ նոքա յոյսեր միայն ղարթուցած էին, բայց Կորտեցը կատարումն էր տուել և այդ յոյսերին։ Այս պատճառով կայսրը յանձնեց այս գործը առանձնապէս կարգած մարդերի, որ և մերժեցին Թելասկվեցի դանգատները, Կորտեցին հաստատեցին որպէս հրամանակալ, բայց և հրամայեցին Նորան հատուցանել Թելասկվեցին Նորա արած ծախքը։

Այս միջոցին անգործ չմնաց Կորտեցը. տիրապետած աշխարհը աշխատեց նա կարգադրել. այս գործի մէջ ունէր նա ղանազան պահանջողութիւնների կատարումն տալ, մանաւանդ որ Նորա պատերազմողքը

շատ անգամ գլուխ բարձրացրեցին և ինդրումէին նորա կեանքը։ Շատերը ստացան հող որպէս սեփականութիւն. բայց որովհետև հողը լինելու էր նոցա համար մի անխորհուրդ բան, այս պատճառով և այդ հողի վերայ բնակիչքը դարձան ստացողների սեփականութիւն։ Այս է այն էնկոմիենդաս անունով կարդը, որով ինչպէս ինդիանացիք ստրուկ դարձան, նոյնպէս և այն աշխարհը զրկվեցաւ ժողովրդից։ Կառավարութիւնը թոյլ տուեց կորտեցին մի ժամանակ մնալ այնպէս, ինչպէս եղած էր մինչև այժմ, մինչև Սպանիայից այլ պատուէրք կը ստանայ. այնու ամենայնիւ սկսեց կորտեցը վերստին շինել աւերած մայրաքաղաքը։ Բայց թէև նորա կարգադրութիւնքը շատ գեղեցիկ էին, այնու ամենայնիւ չկարողացաւ նա ազատ մնալ այն մեծ վնասից, որ ծանրութիւն տուող շրջմոլիկք և սուված պաշտօնաւորք շատ եկան Մեքսիկօ, և շուտով հարստութիւնք հաւաքելով այն տեղ, կամէին յետ դառնալ դէպ ի Սպանիա։ Այս եկաւոր մարդիկը չկարողանալով հասկանալ մի նոր տիրապետած աշխարհի դրութիւն, այնպէս, ինչպէս որ դա պիտոյ է լիներ հարկաւորապէս, ղարմանումէին այն կարողութեան վերայ, որ ունէր կորտեցը և արքայական իշխանութիւնը շատ ու շատ սահմանափակված էին տեսանում նորա ընթացքի մէջ, ըստ որում կամք չունէր կապել իւր անձը այն արուեստական ձևերի հետ, որ յառաջացած էին հնուց հաստատած քաղաքական կեանքից։ Սոցա վերայ յաւելացան այլ հանգամանքներ։ Նոքա իւրեանց յոյսերը շատ խաբված տեսան, ըստ որում աղքատ ինդիանացիք կարող էին նոցա միայն տալ, և այնքան ևս տհաճ դտանվեցան, եթէ կորտեցը արգելուէր նոցա հարստահարութիւնքը։ Այդ պատճառով անտես չարեցին նոքա իւրեանց նամակների մէջ նկարագրել կորտեցին որպէս մի պատուամոլ լինաւոր, որ իրրև թէ արհամարհումէր օրէնքը և ձգտումէր դէպ ի ինքնիշխանութիւն։ Այս գանգատները տպաւորութիւն գործեցին, մանաւանդ որ մինիստրները բարեացակամ չէին դէպ ի նա։ Նոյն միջոցին, մօտ 1525 թուականին, երբ որ կորտեցը աւարտումէր մի պատերազմական ճանապարհորդութիւն մինչև Հոնդուրասի արևմտեան ծայրը, որ սանձահարէ մի ապստամբութիւն, այս միջոցին կայսրը հրաման տուեց Պոնսէ դը Լէոնին ճշդութեամբ քննել նորա ընթացքը, եթէ հարկաւոր էր, ըմբռնել նորան և ուղարկել դէպ ի Սպանիա։ Բայց Պոնսէ դը Լէոնը վերա-ձրուց գալուց մի փոքր յետոյ, մեռաւ, և այս պատճառով նորա վերայ դրած յանձնարարութիւնը մնաց անկատար։ Բայց որովհետև այս յանձնարարութիւնը յայտնվեցաւ, այնուհետև կորտեցը ղգաց իւր անձը խոր վշտաւորված, որ այսպէս էին վարձատրել նորա արդիւնաբերութիւնքը. բայց աշխատեց նա միւ-

սանգամ գտանել կայսրի վստահութիւնը։ Ամենայն պաշտօնակալ որ Սպանիայից դալիս էր Մեքսիկո, էր մի լրտես, որ պիտոյ է նկատէր նորա արարքը և յետոյ ըստ մեծի մասին ձեռնակար տեղեկութիւններ նորա մասին ուղարկէր դէպ ի հայրենի աշխարհը։ Այսպէս, կայսրի և նորա գործակալների երկմտութիւնքը ղօրացան քան թէ նուազեցան, և 1528 թուականին մի նոր յանձնարարութիւն կարգվեցաւ, կորտեցի վերայ դատաստան կատարելու համար։ Թէպէտ նորա բարեկամներից շատերը քաջալերեցին նորան ընդդիմանալ այս նոր կարգադրութեանը, բայց նա հաւատարիմ մնաց հպատակի պարտականութիւններին, բայց չհաւանեցաւ ենթարկել իւր անձը մի քննութեան ամբոխի այն աշխարհի մէջ, որ եղած էր նորա յաղթութիւնների վկայ, այլ կամեցաւ Սպանիա դնալ, և իւր անձը ենթարկել անմիջապէս իւր իշխանի դատավճռին։—Նորա երևելը Սպանիայի մէջ այնպէս փառահեղ դատնվեցաւ, ինչպէս արժան էր նորա մեծագործութիւններին, և իսկոյն փարատեց ամենայն կասկած ու տարակոյս, որ մինչև այժմ ունեցած էին նորա դիտաւորութիւնների մասին։ Կայսրը ընդունեց նորան ամենամեծ պատուով, զարդարեց նորան սուրբ Յակովբի նշանով, պարգևեց նորան պատուանունս Մարկիզ դել Վալլէ դը Գվաքսաքա, ընծայեց նորան բաւական մեծ հողաբաժիններ Նոր-Սպանիայի մէջ և երկար ժամանակ պահեց նորան իւր մօտ։ Բայց նա չհասաւ իւր բոլոր ցանկութիւններին, որովհետև կարոլոսը տարակուսելի էր տեսանում մի այնպիսի տղամարդու, որպիսի կորտեցն էր, յանձնել մի մեծ իշխանութիւն, որ հեշտ կարող էր նա, մոլորվելով իւր պատուասիրութենից, գործ դնել դէպ ի չարը։ Եւ այսպէս կորտեցը վերադարձաւ դէպ ի Մեքսիկո աւելի փոքրացուցած իշխանութեամբ, ըստ որում մնաց նորա ձեռքումը գերագոյն զինուորական իրաւունքը միայն. գերագոյն անտեսութիւնը քաղաքական գործերի յանձնվեցաւ մի դատարանի որ ասվում էր Audiencia de nueva Espanna։ Աւելի յետոյ վերաւորեցին նորան այլ ևս, փոխարքայ ուղարկելով Մեքսիկո Անտօնիօ դը Մենդոլային որ յետոյ պիտոյ է յանձն առնուր կառավարութիւնը· մի գերագոյն պատիւ որ լիակատար իրաւունքով կը պատկաներ կորտեցին։ Այս կրկին և դարձեալ ցոյց տուած անարդարութիւններից աշխատեց աղատ կացուցանել իւր անձը այն բանով, որ կամեր նորանոր աշխարհներ յայտնագործել և տիրապետել։ Նախ և յառաջ աչքը ձգեց Փլօրիդայի վերայ, ապա Հիւսիսային Ամերիկայի արևելեան ծովեզերեայքի վերայ· յետոյ նորա դիտաւորութիւնը դարձ գնալ Մեքսիկոյի արևմտեան նաւահանգիստներից յայտնագործական ճանապարհորդութիւնք գործելու, թոյլտուութիւն գտաւ արքայական սահմանապրութեամբ։ Նորան շատ պատմած

էին մի Ցիլօլա անունով քաղաքի փառաւորութեան և պատուականութեան մասին, և սորան կամեցաւ Կորտեցը որոնել և գտանել։ Պատրաստվեցան մի քանի պատերազմական նաւեր Հարաւածովի եղերքի մօտ, բայց սոքա դուրս գնալով կամ առանց յաջողութեան յետ դարձան, կամ թէ կործանվեցան։ Զանձրանալով այն բանից որ այսպիսի ձեռնարկութեննների առաջնորդութիւնը յանձնած էր օտարների, յանձն առաւ նորան ինքը և այնքան բաղդաւոր գտանվեցաւ գննեայ, որ անհաւատալի վտանգներից ու տառապանքից յետոյ, 1536 Թուականին բացեց այն մի հատ աշխարհը, Թերակղզին Կալիֆօրնիա, որ կարելի էր գտանել այսպիսի ուղևորութեան մէջ։ Նորա պարծանքը դորանով մեծացած չէ, որովհետև այս ձեռնարկութիւնը, թէև ինքն ըստ ինքեան շատ գովանի գործ էր, չէր կարելի համեմատել այն գործերի հետ, որ արդէն յաջողապէս գլուխ էր բերել նա։ Եւ ինքը այնքան բաւական չէր իւր յաջողութեամբ, բայց և կամք չունէր Մեքսիկոյում աւելի երկար մի անհաւասար կռիւ բանալ իւր հակառակորդների ընդդէմ։ Ա՛յս պատճառով կամեցաւ նա կրկին անգամ փորձ փորձել և իմանալ թէ ինչ կարող էր յառաջացնել իւր անձամբ անձին ներկայութիւնը Սպանիայի մէջ, և այսպէս պարզեց առագաստը դէպ ի այն տեղ, 1540 Թուականին։ Բայց նորա գտած ընդունելութիւնը Սպանիայի մէջ ամենևին զանազան էր առաջինից։ Նորա արդիւնաբերութիւնքը երևումէին մոռացած, կամ թէ պիզարրոյի նոր տիրապետութեններով նսեմացած. նոյն իսկ կայսրը ցոյց տուեց նորան մի սառն քաղաքավարութիւն։ Նորա դանդատները չգտան ոչինչ թեթևութիւն, նորա պահանջողութիւնքը — ոչինչ ունկնդրութիւն, և շատ տարիք անցան առանց մօտեցնելու նորան իւր նպատակին։ Ա՛յս փորձերը շատ վնասակար ազդեցութիւն ունեցան Նորա Հոգու և մարմնի վերայ. Նորա առողջութիւնը նուաղեցաւ և նա աւարտեց իւր գործունեայ և բազմաշխատ կեանքը դեկտեմբերի 2-ին 1547 Թուականին, 62 տարեք, կաստիլլեայ դը լա Կոստայումը Սեվիլլայի մօտ։ Նա ցանկացած էր, որ Նորա ոսկերքը ամփոփվէին Կուիւկանի մէջ, ուր նա հիմնարկած էր մի վանք կանանց համար. բայց Նորա ժառանգները կատարեցին Նորա կտակը կիսով չափ միայն, ըստ որում Նորա նշխարքը դրվեցան սուրբ Ֆրանցիսկոսի եկեղեցումը Մեքսիկոյի մէջ։ Աւելի յետոյ մի մատուռի մէջ որ պատկանումէ Դը լաս Նատուրալէս անուն հիւանդանոցին, կառուցվեցաւ Նորան դեղեցիկ յիշատակարան, Տօլսա քանդակագործի ձեռքով ճարտարապետված։ — Կորտեցը իւրեանից յետոյ թողեց մի որդի Դօն Մարտինօ անունով. Նորա պատուանունը և կալուածքը փոխանցել են յետոյ ժամանակում Նէապօլիտանեան դուքս Մօնտելէոնէի վերայ։

Կորտեցին հասած բաժինը այս աշխարհից այն է եղել, ինչ որ եղել է գրեթէ բոլոր Հայակապ մարդերի բաժինը և մանաւանդ թէ Ամերիկայի մէջ տիրապետող երևեցած մարդերի։ Իւրեանց կենդանութեան միջոցին հաւերեցով թշնամութեանների, իւրեանց թագաւորներից անտես ու անիոյթ արած, իւրեանց բարեստաց արդիւնքներից զրկված, կարողացել են միայն գտանել իւրեանց վարձը այն մտածութեան մէջ, որ իւրեանց հայրենիքը մշտնջենաւոր ժամանակով շնորհապարտ էին կացուցել դէպ ի իւրեանց անձը։ Ցետոյ եկած մարդիկը փոխարինել են նոցա այն, ինչ որ համաժամանակեայքը զրկել էին նոցանից, և Կորտեցը մնալու է միշտ մի արժանամեծար տղամարդ, ինչքան որ կայ աշխարհիս վերայ մի լեզու, որով արտաբերվումէր անունս ՄԷՀՒՆԷՑ։

Ս. Նալբեանց։

ԴԻՈՍԻՐԻԿՈՒԹԻՒՆ։

(Շարունակութիւն։)

ԱՒԱԶԻՆՈՒԹԵՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԱՏՆԵՐԻ ԱՂԲԻԻՐՔԸ։

—

Ընդհանուր ներգործութիւն, թէ բարոյական և թէ ֆիզիկական, պարթեցնում համակառակ ներգործութիւն։ Արատը ուղղակի ներհակն է առաքինութեան, այն ժամանակ միայն, երբ որ արատը կերպարանագործվել է, և չէ միշտ պատկերացնում պարզապէս առաքինութեան բացասութիւնը։ Արատների առաւել մեծ մասը գոյանում այնպիսի յատկութիւններից, որ իսկութեամբ բարի ու հարկաւոր են, այլև երբեմն կարող են լինել առաքինութիւնք, զոր օրինակ ժլատութիւնը և ագահութիւնը անտեսութենից, երկչոտութիւնը և փոքրոգութիւնը զգուշութիւնից և այլն։

Սկզբում իւրեանց աղբիւրի մէջ, ամենայն զգացողութիւնք բարի են, որովհետև օրինաւոր ու բնական են։ Բայց կերպարանագործվելով մինչև մի որոշեալ չափ զօրութեան, կարող է ամենայն զգացողութիւն դառնալ աթոռ, և այս տեղ սկսանում խտիրը (վնասաբերութիւնը) բարի և չար զգացողութենների մէջ, թոյլ տալի և յանցաւոր սխտերի մէջ։

Հիմնական կաղմուածքի վերաբերված պիտոյքը մարդու են անյապահպանութիւն, սեռական պրպտողութիւն և ֆիանակեցութիւն, ուստի բըղխումն բոլոր բաղմազան ախտերը և հակամիտութիւնքը։ Դոքա են նոյնպէս և պարտականութիւնք, որ գնում ընութիւնը մարդու վերայ։ Գլխաւոր և առաւել գործաւոր շարժարանքը բոլոր գործականութեան են — ախորժ ըգեցողութիւնը և անձնական օգուտը, որով նոյն ինքն ընութիւնը քաջալերում լցուցանել պարտականութիւնները, յուցանելով մի արմատական կանոն — ջֆաւորութիւն։

Ընձնապահպանութեան ղգացողութիւնը պահպանվելով ախորժ իմացութիւններով և անձնական օգտի խոստովանութեամբը, յեղափոխում ինքնամոլութիւն (եգոիզմ), և առիթ է տալիս յառաջանալու ձգտողութեանը դէպ ի բարւոքելը իւր դրութիւնը, դէպ ի շահաստացութիւն, սեպհականութեան պահպանութիւն և դէպ ի հոգացողութիւն կեանքի ապահովութեան մասին։

Սեռական դրդողութիւնն է օրգանական (ներքին օրէնքների վերայ հիմնած) սկիզբը ամուսնական սէրու, իւր բոլոր կերպարանափոխութիւնների հետ, որոնցից ոմանք կարող են բարձրացնել մարդս մինչև ամենավերին աստիճան կարելի բարոյական կատարելութեան և հաստատել նորա բաղդաւորութիւնը, բայց սորա հակառակ միւսերը կարող են ցածացնել նորան առաւել ստոր քան թէ որ և իցէ արարած, որովհետև մարդս միայն կարող է իւր ղգայականութիւնը և մարմնաւոր ախտերը հասուցանել անառակութեան։

Միանակեցութիւնը լինելով հիմք քաղաքական կարգերի, այլ բան չէ, եթէ ոչ կարօտութիւն օգնութեան և գործակցութեան, ինչքան իւր անձը պահպանելու և ձեռք բերելու նիւթական յարմարութիւնք, նոյնքան ևս վասն իմացական կրթութեան և բարոյական կատարելագործութեան։

Դաստիարակութիւնը ամենից յառաջ գործ ունի անձնամոլութեան (եսականութեան) հետ։ Բոլոր երեխայք են անձնամոլք (եսականք), որովհետև չգիտեն դեռ ևս թագուցանել իւրեանց բնական և սկզբնական դրդողութիւնքը։

Ընձնամոլական կամ եսական ձգտողութիւնը դէպ ի բարւոքել իւր դրութիւնը և վաստակել ստացուած, առաջնորդում դէպ ի գործականութիւն, աշխատասիրութիւն, հարցասիրութիւն, ճարտարութիւն, վաստակասիրութիւն, անարարութիւն, տնտեսութիւն և ծնուցանում նոյն իսկ ըմբռնողութիւնքը սեպհականութեան։ Բայց գոյն այդ եսական ձգտողութիւնը կարող է առաջնորդել դէպ ի վաստակամոլու-

թիւն, ագահութիւն, ցանկասիրութիւն, շահասիրութիւն, կաշառակերութիւն, յափշտակութիւն և գողութիւն։ Սեփականութեան ըմբռնողութիւնը լինելով, ծնանում ցանկութիւն պահպանելու նորան. սորանից յառաջանում — պահպանողութիւն և անտեսութիւն, բայց սոցանից կարող են կերպարանագործվիլ — ժլատութիւն և կծծութիւն։ Ուղղակի, անձնապահպանութեան զգացողութենից ծնանում կէս մի պատրաստութիւն դէպ ի պաշտպանութիւն և յարձակում, այրականութիւն, քաջութիւն և վըտահութիւն, որ կարող են այլանդակվիլ և դառնալ յանդգնութիւն, լրբութիւն, մոլեգնութիւն և աւազակութիւն, և կէս մի ղգուշութիւն, որ հնշտ այլանդակվում դէպ ի երկչոտութիւն, փոքրոգութիւն և վըտահատութիւն։

Ընականութենների հանդիպելովը միմեանց, ծնանում նախանձաւորութիւն, որ է յարկաւոր հիմք ամենայն յառաջադիմութեան և կատարելութեան, բայց և նոյնպէս աղբիւր նախանձու, թշնամութեան, ատելութեան և միւս շատ անարդ ախտերի, եթէ այս ախտերի ճանապարհը չէ փակվելու կամ հաւասարակշռութիւն ստանալու աւելի ալնիւ և ներհակ ախտերով։

Ընկերական կեանքովը մարդս և նորա ընականութիւնը գտանելով զանազան տեսակ յարակցութիւնք միւսների հետ, ասիթ է ծնանում համեմատելու միւսերի վարքը իւր վարքի հետ կամ թէ միմեանց հետ, յառաջանում զգացողութիւն, դրդողութիւն, խղճմտանք, ըմբռնողութիւնք իրաւունքի և պարտականութեան, և ղարթնում յարկաւորութիւն խոստովանելու օրէնքը, որպէս հիմք և ապահովութիւն քաղաքական հասարակութեան։

Արդարութեան զգացողութենից ծնանում արդարասիրութիւն, անկեղծութիւն և բարեխաւութիւն, և լաւի ու չարի ըմբռնողութենից, ախորժ տպաւորութենների տակ աճում են ու զօրանում — եւթոպա ֆէոռնէ, ընտհալոռնէ բարերարութեան համար և սէր դէպ ի բարին ու գեղեցիկը, — քարոյական և գեղեցկաբրական զգացողութիւն։

Ակը և երախտագիտութիւնը ամրացնում են կրօնասիրական զգացողութիւնը, որ սկզբնաբար տուած է Աստուածեղէն յայտնութեանն, որովհետև քննողական մտքի հետ անցանելով պատճառից դէպ ի պատճառ, յարկաւորապէս առաջնորդում դէպ ի Աստուած որպէս սկզբնապատճառ ամենայն բանի որպէս և ամենայն շնորհի։

Սիրուցը դէպ ի բարին բղխում ճանաչկութիւն օտարի ցաւին և ուրախութեան, որ է հիմք քարեկամութեան, — և ախտակցութիւն, որ է հիմք ձնողական սիրոյ, և մարդասիրութեան. իսկ երախտագիտութենից ուղղակի բղխում — էբեհոյական սէրը։

Եթէ եսականութիւնը, որ մնանում մանաւանդ թէ նիւթական հեշտութեամբ, չէ կարողացել արմատանալ, ապա հետ ջհետէ փոխանցումէ նա դէպ ի աւելի հոգեղէն յատկութիւն, անձնասիրութիւնը, որ կացուցանումէ մի նոյնքան ղօրաւոր շարժարան (շարժող պատճառ) որ պիտոյ է պէտք ածել դաստիարակութեան մէջ նոյնքան ևս ղգուշութեամբ, որովհետև սորանից գոյանումն միւս շատ որպէս դեղցիկ, նոյնպէս և շատ տգեղ յատկութիւնք։ Անձնասիրութենից բըղխումեն —նախանձաւորութիւն, աղնիւ պատուասիրութիւն և հաճոյասիրութիւն, բայց հեշտ կարող են ծնանիլ նոյնպէս — անաիաւութիւն, յանձնապաստանութիւն, պարծողութիւն, անձնամոլական պատուասիրութիւն, ամբարհաւաճութիւն և հպարտութիւն. բայց նախանձաւորութիւնը նոյնպէս հեշտ ծնանումէ — նախանձ, անբարեացակամութիւն, չարախնդութիւն, յիշաչարութիւն, վատթարութիւն, ատելութիւն և վըրիժասիրութիւն։

Նիւթական եսականութիւնը իւր բոլոր շնչական ձգտողութիւններով, պէտք է սկզբումը որպէս ֆիզիկական առողջութեան, նոյնպէս և բարոյականութեան համար զուգակշիռ կացուցանել ժուժկալութեամբ և չափաւորութեամբ։ Անձնասիրութիւնը պիտոյ է հաւասարակշռութիւն ստանայ արդարութեամբ, համեստութեամբ, յարգութեամբ դէպ ի օտարի արժանաւորութիւնը և ներողամտութեամբ դէպ ի նորա տկարութիւնը։ Անձնասիրութեան լծակցութիւնը արդարութեան և համեստութեան հետ տալիս է պատշաճաւոր և հարկաւոր խոստովանութիւն իւր յատուկ արժանաւորութեան։

Ընդ յարգութեան մէջ որ է դէպ ի օտարի արժանաւորութիւնը, պարունակվումէ ամաչանական սէրս և քաղկեդոնական բոլոր բարոյական արժանաւորութիւնը։

Ընդհանուր եսականութենից կէս մի յառաջանումէ անշահասիրութիւն, որ ախտակցութեան հետ միասին կացուցանումէ վհհանձնութիւն և կարող է բարձրանալ մինչև ինքնուրացութիւն. բայց ընկերական կցորդութեամբ ծնուցանումէ կարիք բաժանելոյ միւսերի հետ վայելչութիւնքը, մի կարիք որ և ինքը, եթէ դորա հետ միացան սէր և ախտակցութիւն, կացուցանումէ բարեհոգութիւն, եթէ մարդասիրութիւն, կացուցանումէ քաղեդոնական և ողորմութիւն։ Կէս մի չափաւորութենից բղխումն պատշաճի զգացողութիւնը և զսպողութիւնը իւր անձի, իւր ախտերի և զգայմունքի։ Վերջինս մանաւանդ պահանջումէ հաւասարակշռութիւն պաղատութեամբ և անվեղծութեամբ, որ և արդարութեան և սորանից բղխած ընդունողութեններով պարտականու-

թեան և օրինապատշաճութեան մասին, կացուցանումն քաղքենա-ընկեան ազգե-ը։ Ուր չկայ այս հաւատարակշռութիւնը, այն տեղ անձնասպանութիւնը յեղափոխվում թաքնութիւն, կեղծաւորութիւն և վերջապէս խաթերայութիւն իւր բոլոր հետևանքներով։

Համեստութիւնը լինելով չափաւանց, հեշտ փոխանցում դէպ ի երկիւղոտութիւն, երկչոտութիւն և ցածամտութիւն, որ կործանումն իւր արժանաւորութեան խոստովանութիւնը և ղեկումն միւսերը ամենայն ճանապարհից դնահատելու նորան։

Համեստութիւնը պիտոյ է կրթել մեծ զգուշութեամբ, որ կէս մի չյառաջանայ աւելորդ նրբազգացութիւն և սուտ ամօթխածութիւն, և կէս մի որ չհրապուրվի մի կանուխ հարցասիրութիւն և ուշադրութիւն այնպիսի բաներով, որոնց համար պատրաստված չէ ոչ կաղմուածքը, ոչ դատողականութիւնը։ Խարոյական մտքով, չափից դուրս նրբազգացութիւնը որ կարմրում ամենայն չնչին բանից, ամենայն ակնարկութիւնից, գոնեայ միշտ շատ կասկածելի է, որովհետև ոչ թէ միայն սոիպում մեղ ներթադրել նուրբ հասկացողութիւնը այն բաների որ համարվում դատապարտելի, այլև մի տրամադրութիւն, անգադար զբաղեցնելու նորանով երևակայութիւնը։ Այս ոլորից փախչելու համար, պիտոյ է կրթել ամօթխածութիւնը միշտ կապակցութեամբ գեղեցիկ զգայութեան հետ միասին, այսինքն ամենայն ծանօթութիւն կամ զգուշացուցիչ խրատ բացայայտել ապացուցութեամբ. այս ամօթալի է, որովհետև չէ գեղեցիկ, չէ պատուական։ Այս խնդիրը շատ խորհրդաւոր է, մանաւանդ աղջիկ մանուկի համար, որովհետև ունի մօտ յարակցութիւն անմեղութեան և առաքինութեան հետ։

Անմեղութիւնը է հոմանշան պարզութեան և անպիտութեան։ Երևելայական անմեղութիւնը ի հարկէ պիտոյ է բաղկանայ անգիտութենից։ Բայց կոյր անգիտութիւնը չափահասակ աղջկայ, վտանգաւոր է. նա կարող է շինել նորան ամենևին անպարտ ղհանկղճութեան և յանցանքի։ Սկսեալ իւր կրթութեան օրերից, պարտական է նա ճանաչել յատկութիւնքը և պիտոյքը իւր կաղմուածքի և իւր կեանքի մեծակշիռ խորհուրդը։ Գիտելով ոչ թէ միայն վտանգը, այլև աղբիւրները իւր յատուկ ձգտողութիւնների և տարութիւնների, ոչ թէ միայն աւելի հեշտ կարող է փախչել փորձութիւններից, այլև պատերազմ պատահելով, աւելի շուտով յաղթող դտանվիլ, այն պատճառով յատկապես, որ նա պատերազմելու էր ընդդէմ մի յայտնի թշնամու։ Այս ծանրախորհուրդ գիտութիւնը, ստացվելով մօրից ու դաստիարակող կնոջից, և ոչ աղախիններից կամ աւերված բարեկամուհիներից, որ վատթար կերպով յագուրդ էին տալիս վառված հարցասիրութեանը, ամենից

աւելի ապահովապէս և ամրապէս պահպանելու է ճշմարիտ անմեղութիւնը, բարոյական մաքրութիւնը և բարձրացնելու է նորան դէպ ի առաքինութեան աստիճանը: Ճշմարիտ առաքինութիւնը է պատուղ պատերազմի և յաղթութեան, փորձութեան մէջ: Ի հարկէ երեխայն պիտոյ է լինի անմեղ ամենայն բանի մէջ, ուր չկայ նորա համար փորձանք. բայց չափահաս աղջիկը չէ կարող աղատ լինել պատերազմի առիթներից, ուրեմն պահպանելով իւր պարկեշտութիւնը, լինում առաքինի և կատարեալ իւր անձը պատուելի:

Այս բոլորից հետ եզրակացուցանվումն այս

ԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Տքի կրթութենից յառաջ, ուսումից յառաջ, հարկաւոր է հոգալ ուղիղ կերպարանագործութիւնը և ամրապնդութիւնը կազմուածքի առողջութեան:

Ընդհանուր հնարքը ամրապնդելու կազմուածքը սովորեցնելով մարմինը ցրտին, շատ պատուական է երեխաների համար, որ ծնած էին ամենևին առողջ, բայց կարող է լինել կործանական թոյլերի համար: Այդպիսի ճանապարհով շատ երեխայք Անգլիայումը մեռանումեն թոքախտութենից: Ամենալաւ կանոնը զգուշացնել շուտափոյթ փոխանցութիւններից մի եղանակից դէպ ի միւսը, է առ փոքր փոքր սովորեցնել ցրտին, իսկ ամրապնդիչ վարժութիւնը զօրութենների է դիմնաստիկա (մարզութիւն մարմնի):

Օգացողութեան և բարոյականութեան դաստիարակութիւնը պիտոյ է սկսանի առաջին ըմբռնողութեններին հետ միասին: Ամենայն բարոյական զգացողութիւն պիտոյ է կերպարանագործել վարժութեամբ, օրինակով և քաջալերութեամբ, ամենևին նոյնպէս, որպէս և ֆիզիկական զօրութիւնը, որ նա ամրանայ սովորութեամբ, հսկասելով ժամանակին, մինչև կարելի կը լինէր աղդել այդ զգացողութիւնը մանուկի մէջ սրտի վկայութեամբ: Տխմարաբար են վարվում այն քնքշասիրտ ծնողքը, որ թոյլ են տալիս իւրեանց երեխաներին սովորել փոքրիկ անկարգութենների և վատ սխտիկների, ուստի կարող են յառաջանալ վատթար սխտեր և ճշմարիտ արատներ: Այդ անբաղդ երեխայքը յետոյ պիտոյ է շատ անգամ համբերեն խիստ պատիժների, նոյն իսկ բանի համար, որով նոքա զմայլեցնելով զուարճացուցել էին իւրեանց ծնողների սիրտը:

Երեխայքը զգումեն յառաջ, քան թէ հասկանումեն. այս պատճառով պիտոյ է նորանց աւելի սովորեցնել քան թէ ուսուցանել, և

սոյն այս պատճառով սովորութիւնը և օրինակը են առաւել զօրաւոր դաստիարակիչքը։

Ընտանեայն վարժութիւն որպէս ֆիզիկականը, նոյնպէս բարոյական ու մտաւորականը պիտոյ է զուգապատշաճեալ զօրութեան պաշարի հետ, և ամենայն զօրութիւն պիտոյ է կրթել անչափ զգուշաւոր հետ զննութեամբ։

Որովհետև մանուկը կարող է բնութենից ստացած լինել մի կաղմուածք շատ բաղմօրինակ ձգտողութիւններով, որ միայն ընտանի դաստիարակութիւնը կարող է հաւասարակշիռ կացուցանել, չափաւորելով կամ ճնշելով միները և քաջալերելով միւսերը. դորանից բացայայտ է ահա, որ ամենից յառաջ պիտոյ է նկատել և ուսումնասիրել այդ ձգտողութիւնքը։ Եւ ձգտողութիւնքը յառաջադէմ կացուցանելու համար, պիտոյ էր միայն կերակուր տալ նոցա, կրթել նորանց։ Բայց ճնշել և անգործ կացուցանել ախտերը, պահանջումէ մի առանձին ճարտարութիւն։ Մտաբերելով ընդհանուր օրէնքը, թէ ամենայն ներգործութիւն զարթուցանումէ մի հակառակ ներգործութիւն, չէ պիտոյ երբէք ուղղակի յարձակվիլ մանուկի որ և իցէ պակասութեան վերայ, մանաւանդ թէ սկզբումը, որովհետև սոյն այս յարձակումը տալիս է նորան մի նոր կերակուր։ Սորա հակառակ, հարկաւոր է աշխատել յառաջադէմ կացուցանել այն լաւ որպիսութիւնը, որ հակառակ է պակասութեանը, և սա ինքն ըստ ինքեան կ'անհետանայ։ Բայց եթէ պակասութիւնը կարողացել է մինչև այն աստիճան արմատանալ, որ ուղղութիւնը պահանջումէ ազդու, կոտրող հնարներ, որպիսի են, զօր օրինակ, գան ու գաւազանը, — այս տեղ մեր խօսքը է փոքրիկ տղաների մասին — այնուհետև ամենայն ճշմարտապէս բարի մայր, պարտական է այդ հնարը իսկոյն գործ դնել քաջութեամբ և ամենավճռական կերպով, որ պատիժը լինէր ահացուցիչ և անմոռանալի, այլև որ մանուկը չսովորէր կրելու այդպիսի պատիժներ։

Սկզբումը պիտոյ է սովորեցնել մանուկը ճիշդ կանոնաւոր կեցութեան, յետոյ արդէն օգտակար էր հետ ղհետէ սովորեցնել նորան երբեմն խոտորվիլ այդ կանոնաւորութիւնից, մանաւանդ թէ ժուժկալել հեշտութիւններից և յարմարութիւններից, որ յոյժ և մեծապէս ձեռնտու է կերպաւորելու մի հաստատուն բնաւորութիւն։ Բայց ժուժկալութիւնը պիտոյ է անպատճառ ծնանի այնպիսի հանգամանքներից, որ մանուկը կարող էր ինքնուրոյն դատել, այնպէս, որ նա ինքը բանականաբար ստորադրվէր հարկաւորութեանը, կամաւորապէս յաղթէր իւր ցանկութիւններին, և իւր սրտի մէջ խոստովանէր այս յաղթութիւնը։ Ապա

Թէ ոչ, այդ փորձութիւնը չէ ունենալու ոչինչ խորհուրդ, և մանուկը պիտոյ է միայն վնաս կրէ անօգուտ։

Երեխայական ինքնասիրութիւնը պիտոյ է օգտակար կացուցանել որպէս մի զարթուցիչ հնար, բայց մեծ զգուշութեամբ, որ դորանից չկերպարանագործվեր չափազանց մարդու ինքնասիրութիւն, որ կարող էր ճնշել միւս յատկութիւնքը և զգացողութիւնքը, և դորանից չյառաջանային այն բոլոր արատները, որոնց արմատը է երեխայական ինքնասիրութիւնը։

Մանուկը իւր բոլոր գործողութիւնների մէջ, շատ բնականապէս ձգտումէ դէպ ի այն կողմը մանաւանդ, ուր սպասումն նորան ախորժ տպաւորութիւնք, նախ և յառաջ շնչականք, — որկորաժէտութիւն, ապա աւելի բանականք, — փայփայանք և խաղալիք կամ թէ հաճութիւն։ Ա՛յս բոլորը, բաց ի որկորաժէտութենից, պիտոյ է գործ դնել որպէս քաջալերութեան հնարներ. բայց այնպիսի կերպով, որ վարձատրութիւնը երբէք չլիներ միայնակ խորհուրդը, այլ միայն բնական, պարզ հետևանքը բարերարութեան, ապա թէ ոչ, շատ հեշտ և ըզգալի կերպով կերպարանվումէր շահասիրութիւն։ Բայց եթէ մանուկը վարձատրումն համադամ (քաղցր) ուտելիքով, այնուհետև արագապէս զօրանումէ նորա մէջ շատակերութիւն, ագահութիւն, քաղցրասիրութիւն, և այս բոլորի հետ միասին եսականութիւնը, որ բնական և հարկաւոր շարժարանից կարող է յեղափոխվիլ մի թագաւորեալ բնաւորութիւն բարքի, որ և ոչինչ բանով այնքան աճուր չէր, ինչքան նիւթական հեշտութիւններով։

Կերակուրը երեխայի համար պիտոյ է լինի այն բանը, ինչ որ է միտ դնելով բնութեան օրէնքին, այսինքն լցուցանելը իւր կարիքը, և գլխաւոր կանոնը այդ գործադրութեան մէջ — է չափաւորութիւն։ Անուշեղէնք և համադամ բանները նոյնպէս պիտոյ է լինին նորա համար շատ սովորական պարագայքը կերակրի, որ նա չմոլվեր, չընծայեր նոցա մի առանձին յարգ և չդասեր նորանց հեշտութիւնների շարքումը։ Ծուժկալութեան կերակրից և յարմարութիւններից շատ օգտակար էր սովորեցնել երկրորդ հասակում, մի հաստատուն բնաւորութիւն կերպաւորելու համար, բայց ժուժկալութիւնը կերակրից յեղափոխել պատիժ, անպատշաճ է, որպէս և անպատշաճ է առնել նորան վարձատրութեան հնար։ Զրկանքը այնպիսի յարմարութիւններից և հեշտութիւններից որ չէին այնչափ շնչական, չէ պիտոյ լինի պատիժ, այլ մանաւանդ ուղղակի և անխախչելի հետևանքը վատթար բարքի, այնպէս, որ երեխան սովորէր ղգալ, թէ նա իւր գնայքով ինքը վարձատրումէ

և պատժումէ իւր անձը։ Այս բանը մեծապէս ձեռնտու է արդարութեան զգայողութիւնը կրթելու և յառաջադէմ առնելու, և ամրացնումէ ըմբռնողութիւնը թէ ինչ էր օրինապատշաճը։

Խարի վարքի համար իսկապէս, չէ պիտոյ վարձատրել մանուկը ոչինչ բանով, բայց միայն չափաւոր գովասանութեամբ և փայփայանքով։ Վարձատրութիւնը հեշտութեններով կարելի է և պիտոյ է գործ դնել միայն որպէս հնարք քաջալերութեան դէպ ի աշխատասիրութիւն։ բայց ի ֆիզիկաբար հարկաւոր քաջալերութենից բոլոր մարմնի գործականութեանը, պիտոյ է յառաջ տանել աշխատասիրութիւնը այնպէս, որ նա մանուկին, սկսեալ նորա առաջին ըմբռնողութեններից, երևէր և լիներ իսկապէս միայնակ աղբիւրը նորա յարմարութենների, հեշտութենների և վայելչութենների։ Եթէ այս բանի մէջ և մի քանի խաղեր յատկանումէին որպէս աշխատութիւն որ ինքն ըստ ինքեան գրաւիչ էր արդէն, այնուհետև մանուկը ևս աւելի հեշտ կը սովորէ գործականութեան և առաւել աչողակութեամբ սիրելու է ապա ստոյգ և ծանր աշխատութիւնը։

Մանուկին հասկանալի բարոյական կանոններից առաջինը, որ հետևումէ աւետարանական ուսմունից և կարող է սպասաւորել որպէս հիմք միւսերի համար, է այս։ Արա միւսերին այն բոլորը, ինչ որ կամենումես, որ նոքա առնեն քեզ։

ՈՒՍՈՒՄՆ։

Որովհետև ուսումը կախ է ուսումնական գրքերի յատկութենից, ուսուցանելու ձանապարհից և նոյն իսկ պիտութենների դրութեններից, ապա պիտոյ է որոշել նորան մեր դաստիարակութենից։ Մեր դաստիարակութիւնը պիտոյ է սկսանվի երեխայի առաջին ըմբռնողութենից։ Երբէք հարկաւոր չէ ստիպանքով կապել նորա վերայ այնպիսի ըմբռնողութիւն, որի համար, միտ դնելով նորա հասակին և հարկաւոր նախընթաց ըմբռնողութեններին, չէ նա դեռ ևս պատրաստված։ Ամենայն ըմբռնողութիւն, որ պատշաճ էր նորա մտաւորական կարողութեան և հասակին, պիտոյ է տալ նորան ոչ այլապէս, քան թէ լիակատար և ապացուցիչ բացայայտութեամբ։ Ամենից լաւ էր պէտ ըմբռնողութիւնը այնպէս առաջարկել նորան, որ նա ինքը գտանէր բացայայտութիւնը, այսինքն հարկաւոր է, որ ինքը մանուկը կշռադատէր ամենայն առարկայ որին կամէր ծանօթանալ, և իւրացուցանէր ամենայն նոր ըմբռնողութիւն որպէս հետևութիւն իւր յատուկ գիտողութենից, որպէս եզրակացութիւն հաւաքաբանութեան, որպէս հետևանք ապա-

ցուցուԹեան, որպէս իւր ստոյգ սեփական գիտուԹիւն. մի բանով ասեմ, Հարկաւոր է երեխայի մէջ կերպարանագործել նորա յատուկ դատողական կարողուԹիւնը, որ նա յետոյ ստուգապէս Հասկանար ամենայն բան, որ գիտէր: Անփոյթ առնելով այս ղգուշուԹիւնը, շատ անգամ պատահումէ մեր ասածի ներՀակը. այսինքն, երեխայք սովրած լինելով ընդունել իւրեանց գլխի մէջ մուԹ ու մսայլ ըմբռնողուԹիւնք, որ անխորՀուրդ և անկարգ կերպով Թափած էին որպէս մի Համբարանոցի մէջ, դառնումեն չափաՀասակ մարդիկ որ շատ բան գիտէին և յիշումէին, բայց փոքր բան Հասկանումէին նորանից, ինչ որ գիտէին: Մարդս դառնումէ ԹուԹակ որ կրկնումէ օտարի բառերը: Այդպիսի դիտուԹիւնը չէ կարող պիտառական լինել գործի մէջ, ուրեմն և բոլոր պաշարը ուսման բռնումէ գլխի մէջ դատարկ տեղ: Երեխայք ի բնէ Հարցասէր են, որովՀետև ընդունակ են տպաւորուԹիւնների: Ամենայն տպաւորուԹիւն ջարԹուցանումէ ցանկուԹիւն գիտենալու և այսպիսի Հարցուած. ի՞նչ բան է սա: Հարկաւոր է այս ՀարցասիրուԹիւնը անուցանել և պաՀպանել Հետևելով վերոյիշեալ կանոնին, այնպէս, որ նա Հետ չՀետե դառնար մի ճշմարիտ իմաստասիրուԹիւն, և ամենայն նոր գիտուԹիւն ընդունվեր որպէս մի ախորժ ստացուած: Այն ժամանակ միայն ուսումը լինելով ոչ Թէ ստիպական, այլ Թոյլ տուած, կարող է լաւ պտուղներ բերել:

Ուսումը իսկապէս կարող է և պարտ է սկսանվիլ այն ժամանակ միայն, երբ որ մարմնի կազմուածքը այնքան ամրացած էր, որ ուղեղն աշխատուԹիւնքը կարող չէին մաշել նորան: Սովորական Հասակը սորա Համար է եօԹնամեայ Հասակը:

Ուսումը կարօտ է յիշողուԹեան, որ այս խորՀրդով Հարկաւոր է պատրաստել վարժուԹեամբ: Այս վարժուԹիւնը կարելի է սկսանել բաւական կանուխ, բայց ոչ վաղ քան Թէ Հինգ տարուց և այնպէս, որ երեխան երբէք չսերտեր անգիր ոչ մի բառ որ Հասկացած չէր, ոչ մի ըմբռնողուԹիւն, որ չէր Հասկացած կատարելապէս: Հարկաւոր չէ ուսուցանել մանուկին այնպիսի առարկայք, որոնց մասին նոցա իմաստասիրուԹիւնը պատրաստված չէ, կամ Թէ նորա մէջ ամենևին երևումի չէ տրամադրուԹիւն: Ինչքան ևս Հարկաւոր լիներ այդ առարկան, դորան պիտոյ է յետ դնել մինչև մի աւելի յարմարաւոր ժամանակ, որ չխափանվի ուսման յառաջադիմուԹիւնը այն առարկաների մէջ, որ պրաւումեն և քարշումեն մանուկի սիրտը, ուրեմն և ճշմարտապէս ճոխացնումեն նորան տեղեկուԹիւններով, չբեռացնելով նորա միտքը, չծանրաբեռնելով նորա յիշողուԹիւնը. մի խօսքով անօգուտ կերպով ղբաղեցնելով ուղեղը, որի Հետևանքը է միշտ տաղտկուԹիւն ուսումից:

Խնդիր, Թէ ի՛նչպէս էր զանազանվում տղայի դաստիարակութիւնը աղջկայ դաստիարակութենից։

—

Մինչև եօթն տարին չկայ ոչինչ զանազանութիւն տղայի և աղջկայ դաստիարակութեան մէջ։ Եօթնամեայ հասակից, այսինքն այն ժամանակից, երբ որ հետ պիտէ սկսանվում իսկական ուսումը, պիտոյ է միտ դնել առանձին կանացի կաղմուածքին, նորա աւելի զգայուն, աւելի գրգռական ջիղային համակարգութեանը և պահպանել նորան չափից դուրս սաստիկ աշխատութենից, որ կարող էր ժամանակից յառաջ մաշել կազմուածքը։ Աղջկայ ուղեղը չէ պիտոյ այնքան աշխատացնել, ինչքան տղայի ուղեղը։ Տղային հարկաւոր է վերլուծական մանրամասն գիտութիւն, իսկ աղջկան առարկաների աւելի մեծ մասի մէջ բաւական է բաղադրականը, ընդհանուրը։

Նոյն իսկ գաղափարների մէջ, որ միջամուխ էին լինում և շրջթայականում էին բոլոր ուսանելիքը, սկսեալ այս հասակից արդէն պիտոյ է դրվի մի որոշակի զանազանութիւն։ Տղային արժան է սովորել հասկանալ, Թէ նա պարտական է լինել օգտակար անդամ հասարակութեան, քաղաքացի և հաւատարիմ պաշտօնեայ Թագաւորի և հայրենիքի։ այս գաղափարը բաւական է նորա համար իւր բոլոր կեանքի միջոցը։ բոլոր մնացածը կը կերպարանվի ինքն ըստ ինքեան։ Աղջիկը պարտական է պատրաստել իւր անձը լինելու օգտակար անդամ դերդաստանի, բարի տանտիկին։ Այս տեղից հետ գնում է, մինչև վաճառականական կերպարանագործութիւնը կազմուածքի, պիտոյ է յառաջանայ պարզ ըմբռնողութիւն իւր կեանքի խորհրդի մասին, որ է լինել մայր և դաստիարակիչ։ ասենք այլ բառերով, երբ որ աղջիկը առել է իւր չափ ու հասակը, այնուհետև առաւել հարկաւոր և առաւել օգտակար գիտելի բանը նորա համար, է նոյն ինքը։

Ծարուխեան Համազասպ։

ԲԸՐՈՑԿՈՒՆ։

(Թարգմանուած իւն Ռուսերէնից.)

ԹԷ Ո՛Վ Է ՃՇՄԱՐՏԱՊԷՍ ԲԱՐԻ ԵՒ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ։

—

Կ՚ասի միայն որ կարող է վայելել ընտանեկան կեանք, է անշուշտ բարի, ուրեմն և անշուշտ երջանիկ մարդը։

Աշխարհը ասումեն թէատրոն. ամենայն մարդ է միանգամայն և հանդիսադիր և հանդիսական։ Հանդիսադիրքը աշխատումեն պանծալ իւրեանց ճարտարութեամբ, հանդիսականքը ծափ են զարկում, ձայն տալով. ի՛նչ մեծ խելք, ի՛նչ հրաշալի շնորհք է այդ։ Բայց միայնակ փայլուն յաջողութիւնքը աշխարհի թէատրոնի մէջ հերիք չեն ստանալու աղնիւ անունս քեզի, հերիք չեն իրաւունք ունենալու անուանել իւր անձը երջանիկ։

Դու պարծանքով ծառայումես հայրենիքին. դու արդար դատաւոր ես, քո բոլոր դատավճիռքը համեմատ են օրէնքի և խղճմտանքի դատավճիռներին. դու քաջասիրտ, խոհական զօրապետ ես, ոչ ոք տեսած չէ, որ դու գունաթափուէիր տեսանելով թշնամին, որ դու կորուսանէիր քո հոգու ներկայութիւնը ձախորդութեան կամ խառնակութեան րոպէին։ Հասարակութեան մէջ ասումեն քեզ ախորժելի, քաղցըր, ղուարճաբարոյ. չէր կարելի չզմայլուիլ քո խօսակցութեամբը. քո բոլոր շրջակայքը պայծառացած է քո ճարտարամտութեամբ, քո խօսքերով, հայեացքով, ժպիտով։ Ասեմ համարձակ, դու խելացի, գործունեայ, սիրելի, գերօրինակ մարդ ես. բայց մի՛ թէ ասելու եմ, բարի և երջանիկ մարդ։

Ո՛չ. ես տեսանումեմ քեզ թէատրոնական բեմի վերայ, զարդարանքի մէջ այն րոպէին երբ հրապարակով պիտոյ է երևէիր դու, հանդիսի րոպէին. խաբվումեմ քո արտաքին, ժամանակաւոր պարծանքովը միայն։ Դու ներդործումես ոչ թէ քո սեփական ղօրութեամբ, այլ շրջապատած ես անհամար նեցուկներով. հասարակայ կարծիքը է պահպանողը քո առաքինութենների. դուրսէ թէ նոցա աղբիւրը է միայն քո պատուասիրութիւնը։ Բայց եթէ կամիր ես կատարելապէս իմանալ

քո լինաւորութիւնը· պիտոյ է ինձ գալ քո հետևից և մտանել քո գերդաստանի մէջ։ Գերդաստանը է մի խաղաղ, մարդերից ծածուկ աստպարէզ, որի մէջ կատարվումեն առաւել ալնիւ, առաւել անշահախնդիր վաստակքը առաքինի մարդու։ Ա՛յս տեղ միայնակ է մարդը, չքացած են բոլոր ցնորքը· նա գործ է կատարում առանց վկաների, շատ մօտ ծանօթների ընկերութեան մէջ, ուրեմն այնպիսի ծանօթների, որ երկիւղալի չէին նորան· նա կարող չէ ոչ ոքի աչքը կուրացնել սուտ փայլողութեամբ· նա չէ լսում գովասանական ծափահարութիւնք· նա կարող է միայն վայելել մի համեստ, միւսերին աննկատելի, բայց մի քաղցր և անյափշտակելի երջանկութիւն։ Ա՛յս տեղ նա իւր վերայից հանում է այն փոխառած ծածկոցները, և ազատապէս անձնատուր է լինում իւր բնական ձգտողութիւններին. ոչ ոքի բաց ի իւրեանից հաշիւ ու համար չէ տալիս· եթէ ես տեսանում եմ նորան հանդարտ, ուրախ, անփոփոխելի իւր սիրելիների նեղ շրջանակի մէջ· երբ որ նորա դալուստը իւր ամուսնու և երեխաների մօտ է մի քաղցր բոպէ հասարակաց խնդութեան· երբ որ նորա հայեացքից պայծառանում են ընտանիքի երեսները· երբ որ նա ճանապարհորդութենից վերադառնալով, բերում է իւր տունը նոր կեանք, նոր աշխատասիրութիւն, նոր բաղդաւորութիւն· երբ որ ես նորա շրջակայքում նկատում եմ կարգ, խաղաղութիւն, վստահութիւն, սէր, — այնուհետև կարող եմ ասել հաստատապէս·—նա բարի է, նա բաղդաւոր է։

Ա՛նծագործութիւններ որոնց ներկայ են բազմաթիւ վկայք, շատ անգամ լինում են միայն անսովոր ստիպողին աշխատութիւն։ Շատ անգամ մարդս, որի գործականութիւնը և ընդարձակ իմացականութիւնը տերութենական գործերի մէջ, որի ախորժելի բարքը և զուարթ հոգին փայլուն աշխարհային ժողովի մէջ զարմացք է բերում մեր վերայ, լինում ծանրամիտ և տաղտկալի իւր ընտանիքի մէջ, ուր նա ազատ է, ուր պիտոյ է գործ կատարել առանց որ և իցէ արտաքին դրդողութեան, ուր ամենայն ինչ բղխում է սրտի խորքից, ուր կարող էիր դու լինել ուրախ, երբ որ քո սիրտը լցուած էր մաքուր, կենդանի, կեանքի բոլոր հանգամանքների մէջ անփոփոխելի զգացողութիւններով։

Ներջանիկ լինելը է քաղցրութիւն գտանել ինքը իւր մէջ· բայց ուր է այս երջանկութիւնը, եթէ ոչ գերդաստանի մէջ, և ի՛նչ է դորա աղբիւրը, եթէ ոչ խաղաղ, անմեղ, բարի սիրտը։ Քաղաքացի մարդը վայելելով հասարակութեան հովանաւորութիւնը, իւր աշխատանքով գնում է նորանից պատիւ և փառք· բայց բարի մարդը ստանում է այդ փառք ու պատիւը չար մարդերի հետ միասին, որ ունէին նոյն ճարտարութիւնը, գործականութիւնը, այո և նոյն բնատուր քանքարը։

Բայց ի՛նչ լանի մէջ է բարի մարդու նախապատուհիրը, որ նորան միայն սեփական էր և չէր մասնաւորելի միւսին. բարի սրտի երջանկութեան մէջ, այն քաղցրութենների մէջ, որ վայելումէ նա՛ իւր ընտանիքի մէջ— մի պատուղ, որ արգելված էր արտաւոր մարդու համար։

Ունենալով բարի սիրտ, կարելի է որ և իցէ մասնով լինել բարի քաղաքացի. ունիս ընտուր ձիրք, ապա կարող ես գործ կատարել այն հանդիսի մէջ, ուր ներկայ է անհամար բազմութիւն հարցասէր և խիստ դատաւորների։ Պատուասիրութիւնը կը փոխարինէ քո համար ներքին բարեսրտութեան պակասութիւնը. և այդ և միւս պատճառը կը յառաջացնեն միակերպ տեսանելի ներգործութիւն։ Բայց լինել լաւ տանուտէր ամենայն մասամբ, — բարի ամուսին այր, հայր, պաշտպան իւր ընտանիքի, ասումեմ առանց բացառութեան, անկարելի է, եթէ չունիս դու մի բարի, քնքուշ, ղդացող սիրտ։ Գերդաստանը է մի փոքր աշխարհ, որի մէջ մեք պարտական ենք վճարել փոքրիկ չափով, այն բոլոր տեսակ տեսակ հարկերը, որ դնումէ մեր վերայ մեծ աշխարհը, բայց այն վանաղանութեամբ, որ այս տեղ ոչ մի սուտ արժանաւորութիւն կարող չէ պսակվիլ պատշաճաւոր վարձատրութեամբ. այս տեղ տեսանումեն քեզ այնպէս, ինչպէս դու իսկութեամբ ես, և այս է ահա այն տխուր միայնակեցութեան պատճառը, որի մէջ ապրումեն շատ, ինչպէս ասվումէին, բաղդաւորներ այս աշխարհիս, անմահն ընտանեկան խաղաղ, առանձնական ուրախութենների։ Նորա վախենումեն ներս մտանել այս ընկերութեան մէջ։ Ինչ բան ունէին նորա բերելու իրենց հետ. մի մեռած կամ ապականված սիրտ, որի համար օտար էին անմեղ վայելչութիւնք, մի պղտոր սիրտ խաղաղութեան և կարգի մէջ, մի անհաստատ սիրտ միատեսակ ուրախութենների մէջ, որ այնու ամենայնիւ միշտ դիւր և քաղցր էին մի պարզ, ղուարթ և անարատ հոգու համար։

Դու որոնումես մի հաստատուն երջանկութիւն։ Պարտականութիւն համարիր քո վերայ լինել գործունեայ հայրենիքի օգտի համար. բայց քո առաւել պատուական վայելչութիւնքը, քո առաւել թանգագին վարձերը, թող լինին ամփոփված քո գերդաստանի ծոցումը։ Եթէ քո հոգին անմեղ է, եթէ նորա մէջ վառվումէ բարութեան հանգարտ կրակը, այնուհետև խաղաղ գերդաստանի մէջ գտանելու ես մի անխորոված, հաստատուն երջանկութիւն։ Ո՛ւր կարող ես դու սիրել այնպիսի լիակատար լրութեամբ, այնպիսի փոխադարձութեամբ, այնպիսի անձնամոռացութեամբ։ Ո՛ւր կարող ես դու լինել այնքան առաքինի և իսկոյն ստանալ փոխարէնը քո առաքինութենների։ Ո՛ւր գտանելու ես այդպիսի հաւատարիմ սրտակից ընկերք ուրախութեան ու տրտմու-

թեան մէջ։ Նկարագրէ՛ր մտքով այս երանութիւնը, մինչդեռ չունիս սորան. պատրաստիր քո սիրտը դորա համար, միտք բեր, որ դա կայ միայն անմեղ, ազնիւ, վսեմ ղգացողութիւններով լցուած սրտի համար. այդ քաղցր, կենագործող երաշը թող լինի քո մանուկ տարիների ճանապարհակիցը։ Կատարելագործելով քո անձը գերդաստանի խաղաղ օթեանի համար, դու մնալու ես ապատ անառակութեան վտանգաւոր ախտից. մի՛ թէ ղմայլվելու էիր դու արատի փայլուն տգեղութեամբը, ունելով աչքիդ առաջև այն մաքուր վայելչութիւնքը, այն ազնիւ գործունէութիւնը, որ անմեկնելի լծակից են ընտանեկան կեանքի հետ։ Եւ եթէ արդէն ընտրել ես, եթէ քո հոգին նկատել է մի էակ որ հարկաւոր էր նորան, ապա շրջապատիր քո անձը նորա յիշատակովը. նորա յիշատակը կը լինի քո առաքինութիւնը, քո խղճմտանքը։ Ուրեմն եթէ նախանձաւորութիւնը սահմանել է քեզ վայելել այս բարին, որ սակաւագիւտ է, սակաւագիւտ նորա համար, որ հաղուագիւտ են այն մարդիկը, որ համարէին դորան իւրեանց կեանքի առաջին և առաւել ազնիւ խորհուրդը, որ բոպէական, առաւել ղգալի վայելչութիւնը, կամ մի հաստատ և աւելի փայլուն օգուտ չառնէին վերադաս քան թէ այս հանդարտ, համեստ և բոլոր առաքինութիւնների հետ անբաժանելի կապակից բաղդաւորութիւնը. եթէ նախանձաւորութիւնը, ասում՝ սահմանել է քեզ վայելել այս բարին, ապա կարող ես դու համարձակապէս սեփականել քեզ պատուանունս ԲԱՂԴԱՒՈՐ. դու այս պատուանունին կը դարձուցանես նորա կորուսած արժանաւորութիւնը. քո լեզուախօսութեան մէջ, երջանկութիւն ասած բառը կը նշանակէ առաքինութիւն, քաղցրանալը ինքը իւրեանով ուղիղ լուսաւորութիւն, իսկական իմաստութիւն։

Արդիսի հոգեպայծառ տեսարան ցուցանում մեզ բարի Հայրը գերդաստանի — ճշմարտապէս բարի և բաղդաւոր մարդը։ Ներս մտէք նորա ուրախ, համեստ տունը, ուր թագաւորում կարգ և մաքրութիւն. մի՛ թէ իսկոյն չէր շրջապատում ձեզ մի անպատմելի, անտեսանելի, սրտառուչ զմայլանք. մի՛ թէ ձեր սրտի խորքումը չէիք ղգում այն մխիթարական խաղաղութիւնը, այն ներքին քաղցրութիւնը իւր սեփականի գոյութեան, որ միշտ յառաջացնում մեր մէջ բաղդաւորութեան ներկայութիւնը։ Դուք տեսանում ձեր առաջև գոհ երեսներ, հիանում ձեզ շրջապատող լաւնկարգութեան վերայ. այս տեղ ժամանակը թռչում արագ, ամենայն րոպէի համար կայ իւր յատուկ, հարկաւոր գործը. մասնաւոր աշխատութեան րոպէքը պատրաստում միմեանց հանդիպման րոպէքը, հասարակաց ուրախութեան րոպէքը, և ամենայն աշխատութիւն լերում իւր հետ իւր վարձը։ Հետևեցէք բա-

րի տանուտիրոջ քաղաքից դէպ ի աշխարհի հրապարակը, ուր նա կատարում քաղաքացու պարտականութիւնք, և դէպ ի նորա տունը, ուր նա երևում ձեղ ամուսին մարդ, հայր, տանուտեր, և դէպ ի նորա առանձնասենեակը ուր նա միայնացած է, և դէպ ի նորա մահու անկողինը ուր նա սպասում իւր վախճանին, խաղաղ հոգով, խոստովանելով Աստուծոյ գոյութիւնը, որ անուրանալի էր մի սրտի համար որ վայելում ճշմարիտ երջանկութիւն, որ յոյս ունի անմահութեան վերայ, որ ղգալի է այն սրտի համար, որ ճաշակել էր մի պարզ սէր — ամենայն տեղ դուք գտանելու էք նորան միակերպ։ Նոյն իսկ ղգացողութեննների մէջ, որ շինում նորան երջանիկ իւր գերդաստանում, պահպանելում և նորա քաղաքացի առաքինութեննների մաքուր աղբիւրը։ Մի քանի ժամանակ հեռանալով իւր ընտանիքից, իւր պարտականութիւնը աշխարհի մէջ լցուցանելու համար, նա միաւորված է իւր սիրելիների հետ նոցա քնքուշ, անմոռանալի յիշատակովը. նոցա իմանալի ներկայութիւնը պահպանում նորան կեանքի ամենայն ծանր դիպուածների մէջ։ Ի՛նչպէս կարող էր նա անփոյթ առնել իւր անունի անարատութիւնը, ըստ որում նորա պարծանքը էր իւր սիրելիների պարծանքը։ Ի՛նչպէս կարող էր նա չխորշել չարիցը, եթէ պարտական էր նա անմեղ սրտով գալ և յանդիման լինել մի արդար, սիրելի և սուրբ գատաստանի առաջև, իմացիր դու իւր գերդաստանի դատարանը ուր բնակում նորա հարազատ ընկերը, որ նորա հետ միասին, մի ճանապարհով ձգտում դէպ ի մի և նոյն նպատակը, դէպ ի երջանկութիւն որ հիմնած էր բարոյական կատարելութեան վերայ — որ չէ տեսանում նորան արատաւորած, որի գոհ և քաջալերական հայեացքը է առաւել մխիթարական վարձը նորա համար։ Բայց նա բոլոր պարտականութիւնքը, բոլոր քաղցրութիւնքը աշխարհի համարում երկրորդական միայն. նորա գլխաւոր գործականութիւնը գտանվում գերդաստանի ներսումը, մի խաղաղ երջանիկ գործականութիւն, որ կենագործում նորա հոգին, հեռացնում նորանից վհատութիւն և տաղտկութիւն, պայծառացնում նորան, ջերմացնում և բժշկում։ Նա ուրախ է, հանգիստ է կարգի ու խաղաղութեան մէջ, որ թագաւորում նորա շրջակայքում։ Մտաւորապէս փոխադրեցէք ձեր անձը միաշունչ ամուսինների օթևանի մէջ, որ համաձայն էին իւրեանց ըմբռնողութեամբը կեանքի մասին, համաձայն էին միմեանց հետ այն հնարների մասին որով պիտոյ էր վայելել կեանքը. այս տեղ հոգսերի բոպեքը չունին այն անհանգստութիւնը, որ տանջում մեզ, երբ որ աշխատում ենք մեր համար միայն. նոքա քաղցրանում են այն սրտառուչ յիշատակովը, թէ այդ հոգսերը լինում էին մեր սրտին սիրելի էակների համար, որոնց մեք նուիրել ենք

մեր բոլոր կեանքը։ Այս տեղ հոդու աղնիւ ամեն մի ղգայողութիւնը լինում է աւելի կենդանի, աւելի վերհամբարձ, աւելի անարատ. բարեգործութիւնը չէ վարձատրվում միայն ծածուկ հաւանութեամբ սրտի, այլև քնքուշ մասնակցութեամբ մի քաղցր էակի, որ քո աչքումը է բոլոր առաքինութենների օրինակ. դա ուղեկից է քեզ դեպ ի խրճիթը տխուր ու տնանկ մարդու. դու ներգործումես ոչ թէ միայն անտեսանելի ներկայութեամբը նախանձամութեան, այլ տեսանումես քո առաջև նորա ուղարկած հրեշտակը քո ընկերակցի մէջ, որին ընծայումես դու ամենայն բարի բան, ամենայն լարի ղգայողութիւն։ Ի՛նչ բան կարող էր լինել այնքան սիրտ շարժող, այնքան ջերմեռանդ, ինչպէս այն աղօթքը որ կատարած էիր դու մի քաղցր ամուսին կնոջ ներկայութեամբ, նորա հետ միասին, քո լիամասն բաղդաւորութեան մէջ։ Որի՛ համար այնքան ղգալի էր նախանձամութիւնը, որի՛ համար աւելի հեշտ էր սիրել իւր Արարիչը, եթէ ոչ քնքուշ սիրով սիրող ամուսին տղամարդի և հօր համար, որ շրջապատած էր նորա ողորմութեան թանգագին գրաւականներով։ Միայնակ մարդու աղօթքը է խնդրուածք, բայց ամուսին տղամարդի աղօթքը է շնորհակալութիւն։

Խայց պատկերացնելով իւրեան ընտանեկան բաղդաւորութիւնը, պիտոյ է պատկերացնել մտքով և յաւելի ղգականքները։ Ամուսին այրը շատ անգամ և շատ կանուխ ղգվում իւր ամուսին կնոջից. հայրը տեսանում իւր պաւակների մահը — անմոռանալի ղգականք, որովհետև դրա քայքայումն կեանքի գլխաւոր երջանկութիւնը, որին վերաբերութիւնք մեք բոլոր միւս բանները։ Խայց մի՛ թէ ղգվելով իւր սիրելիներից, կորչում մեր համար նոցա յիշատակը. մի՛ թէ նորա համար, որ վայելել էր ներկան, չէ մնում մի տխրամիտ քաղցրացուցիչ խորհրդածութիւն անցած ու գնացածի վերայ։ Դու ապրել ես նոցա համար, դու ապրել ես նոցա հետ միասին. դու ուրախութեամբ վաղումիր դեպ ի քո նպատակը, ունենալով քո հետ քաղցր ճանապարհորդակիցներ. քո ճանապարհակիցքը չքացան .... բայց դու ինքդ փոխված չես. քո ասպարէզը անապատացել է ..... բայց նա մի և նոյն է, և նոյն նպատակը երևում քո աչքին հեռաւորութեան մէջ։ Ուղղի՛ր քո ընթացքը դեպ ի այն տեղ, շրջապատված ծանօթ բարեկամական ստուերներից։ Ուր որ միանգամ ճաշակել է ընտանեկան ուրախութիւններ, այնուհետև չէ ղգալու նա միայնութիւն. աղետքը գրեթէ լինելու է նորա համար սէր։

Պ. Նահապետեանց։

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ·

(Թարգմանուելիւն Գրանսիականից·)

—

Վերապահած կիրք, զգացողութի՛ւն հոյակապ հոգիների, երջանկութի՛ւն աշխարհի, որի առաջև չքանում են կամ թէ թուլանում են բոլոր ցաւերը, և բոլոր բարութիւնքը գեղեցկանում են և ամում են, ով աստուածեղէն բարեկամութիւն· քո անունը միայն յիշեցնում է ինձ իմ կեանքի բոլոր քաղցրութիւնքը· քաջալերական կիրք, որի միշտ մաքուր կրակը վառվում է զգացողութեամբը և կենդանանում իմացականութեամբը· մխիթարի՛չ առաքինութիւն, որ գերագոյն էակը պարգեւել է մարդուն վասն փոխարինելու մի մոլորված բանականութեան ողբալի ընտաներ· բարերար զգայողութիւն, առանց որի չէ կարող լինել ոչինչ բարի բան մեր համար· պատճառ, ի՞նչ է այն բարի բանը, որի վերայ չէ կարելի խօսել իւր բարեկամի հետ· Երկնային առաքինութիւն դու, որի անունը այնքան յաճախ անարգված է, որի պատկերը այնքան յաճախ այլանդակվել է, որ և անհկանացուքը պաշտում են, թէև այո՛ չգիտէին նորան· վեհանձն ու վերհամբարձ զգայողութիւն դու, որ աղնուացուցանում ես մեր բոլոր գոյութիւնը, որ և տալիս ես մեզ ապրել այն բարեկամի համար որ ընտրել էր մեր սիրտը· Քնել, ով բարեկամութիւն, կամիմ այժմ նուիրել իմ խօսքը·

Ահա, որի սիրտը վառված է սուրբ բարեկամութեան խաղաղ լոյսերովը, երբէք զգալու չէ այնպիսի կենդանի շարժողութիւն, ինչպես այն րոպէին, երբ իւր սիրելի բարեկամը առաւել կարօտ էր նորա օգնութեանը· Նա հետևում է նորա քամակից շատ դառն ձախորդութեանների մէջ, նա կապվում է նորա հետ անբաժանելի կապով· Նոյն իսկ սառնութիւնքը նորա կողմից որ ընտրել էր նա, կարող չեն շիջուցանել այն երկնային կրակը, որով բորբոքվել է նա· Նա սիրում է նորան թէև ապերախտ, թէև անհատատարիմ բարեկամութեան սուրբ օրէնքներին· Նա արտասվում է նորան, նա ներում է նորան այն բոլոր ցաւերը որ ստանում էր նորանից, նա անմխիթար է այդ բանի վերայ, բայց այնու ամենայնիւ սիրում է նորան նոյնքան ևս, ինչպես յառաջ· Նա ոչնչ է բերում իւր բոլոր բաղդաւորութիւնը նորա բաղդաւորութեան համար· Նա կամի մեռանիլ իւր Օրեստէսի համար, և խոստովանում է թէ չգիտէ նորան· Նորա հոգին խառնվում է իւր բարեկամի հոգու հետ· Նա չունի

ոչինչ, եթէ ոչ նոյն ցանկութիւնքը, նոյն ղգացողութիւնքը, նոյն ախտերը. և երբ որ մահը, որ սովոր է ամենայն բան քակել և բաժանել, խլումէ նորանից իւր քաղցր սիրու և մշտնջենաւոր յիշատակի առարկան, նա առանց յուսահատութեան ուղեկից է լինում նորան մինչև գերեզմանի դուռը. նա ծածկումէ նորանից իւր լալընքը, նա ղարդարումէ մի քանի ծաղիկներով այս տրտում րոպէքը. նա մխիթարումէ նորան այն րոպէին, երբ բոլորը պիտոյ է անգամնալի յափշտակվի նորանից. և երբ որ փակվել է օրհասական դուռը դերեզմանի, նա անմխիթար, յուսահատ, յետ չէ պահում իւր արտասուքը. բայց նա թանձրը և անապատ անտառների լռութեան մէջ գալիս է արտասուելու նորան, որին կորուսել էր նա, մնուցանելու իւր հոգին իւր ցաւերով և իւր բարեկամի պատկերով, այլև հալել ու մաշել տրտմութեամբ մի սիրտ, որի ղգացողութիւնքը այլևս չէին կարող թափվել և ղեղանիլ, մի կեանք, որ այլևս չէր նորա համար, որ և դարձած էր նորա համար անօգուտ:

Երբեմն, երբ որ երեկոյան ստուերքը թագաւորումէին երկրի վրայ, նա կարծումէր թէ որոշումէ իւր բարեկամը մի թոյլ լուսաւորութեան մէջ. նա խօսումէ նորա հետ, վայ, որպէս թէ կարող էր լսել նորա ձայնը. նա քաղցրացնումէ իւր ցաւը այս մեղմ ու խիստ պատրանքովը. նա վաղումէ գրկախառնելու այս սիրելի ստուերը, նա հանդիպումէ միայն անդգալի խաւարի և ինչ որ միւսանգամ գտանումէ իւր սրտի մէջ, էին միայն այրող վշտեր: Նա յետ է պահանջում իւր հանգուցեալ բարեկամը դիշերից, յետ է պահանջում ցերեկից. և չկարողանալով այլևս տանել իւր ցաւերի ծանրութեանը, նա ճնշվումէ իւր վշտի տակ և մեռանումէ ձայնելով իւր բարեկամի անունը: Ո՛վ երկնային բարեկամութիւն, ինչու քո մաքուր լոցերը չենուտում, մաշում բոլոր սրտերը. ինչու այդքան փոքր մնկանացուք ունեին քեղ իւրեանց սրտի մէջ, մինչ բոլորեքեան կրումեն քեղ իւրեանց շրթունքի վերայ: Եւ ինչու համար քո անունը, որ պիտոյ է միայն արտասաներ առաքինութիւնը, այնքան յաճախ գործ է դրվել վարագուրելու սև մտանողութիւնք և վնասակար դարանագործութիւնք:

ՁԱՓԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ.

«Ֆիզիկական ճարտարութեան միակ և ամենախորին գաղտնիքը,» այսպէս ահա մակագրած էր մի ամրակազմ և կնքված գիրք, որ մեծանուն բժշկապետ Բոյերհավէի, մահուց յետոյ մնացած գրքի մէջ,

Նորա մատենադարանը վաճառելու միջոցին ծախվումէր և 10,000 դուկատենով վաճառվեցաւ։ Գնողը կարծումէր ունել մի գանձ, գրքի կնիքը բացեց իսկոյն, չգտաւ ոչինչ բաց ի գատարկ թերթերից և միայն առաջին երեսի վերայ խոշոր տառերով գրած էր այսպէս. «Գլուխդ սառն պահիր, փորդ բաց և ոտերդ չերմ, և կարող ես արհամարհել բոլոր բժիշկները։» Այս խրատը վաղուց արդէն ունինք մեք առանց օգուտ քաղելու նորանից. բայց քանի՛ քանի մարդիկ պիտոյ է ցաւով ու շատ արծաթով տուգանք հատուցանեն, ըստ որում կրկին և կրկին մոռանումեն այդ խրատը։ Շատ չուր խմել և շատ մարմնաւոր շարժողութիւն գործել նոյնպէս մի թեթևագին, թանգ բեկեսներից պաշտպանող հնարք է. բայց այժմուս քաղաքագործութիւնը (ցիվիլիզացիան) պահանջումէ որ գեղն ու չափից դուրս համեմած հացկերութիւնք բարդվէին միմեանց վերայ, խարդախութեամբ ապականած ըմպելիներով, որ միայն թուլացնումէին։ Խօսենք միայն գինու վերայ. դա, ինչպէս ասումեն և նկատած են, արձակումէ մարդու լեզուն, բայց ցաւելի է որ ինքը լեզու չունի, ապա թէ ոչ, նա ղարմանալի բաներ պիտոյ է պատմէր մեզ իւր գլխին եկած անցքերի մասին, սկսեալ այն արևային սարերից ուր ապրումէր նա, մինչև որ ճանապարհ կը կատարէր մարդու փորի ներսը։ Երբ որ սա լցվելով լարվել էր, այնուհետև կամքին մարդիկ անուաւոր սայլերի վերայ կրել տալ իւրեանց քան թէ թոյլ տալ ոտերին կատարել իւրեանց պարտական պաշտօնը, որի համար տուած էին նոքա մարդուն։ Այսպէս ահա ստոյգ հիւանդութիւնների վերայ յաւելանումեն երևակայական, երբեմն վարակիչ նորասիրութիւնից յառաջացած հիւանդութիւնք, որոնցից աղատ լինելու համար, պիտոյ էր միայն զօրաւոր կամք։

Շատ ժամանակ չէ, որ մի հարուստ մարդ լինելով մինչև այն աստիճան անդամազօս, որ իւր մահճից դեպ ի սոփան և այս տեղից կրկին այն տեղ պիտոյ է կրվեր ուրիշների ձեռքով, մի հրայրեացքի միջոցում այնպիսի հրաշալի արագաշարժութեամբ ոտք շարժեց, որ ասես թէ ծնած էր լարախաղաց լինելու համար, և յիշեալ անուանի Բօյերհավէն միանգամ բժշկել է անբժշկելի համարված կուսանք, որ ամենեքեան դեպ ի երեկոյ ստանումէին ջղացաւութիւն, այն հնարքով որ նա մի կարմրացրած երկաթի գաւազան ցոյց տալով նոցա ասել է, թէ նոցա ցաւի համար ոչինչ դեղ չկար, բայց ի պրելուց նոցա սրտի փոսը. այս բանը լսելով կուսանքը առողջացան բոլորովին, այնպէս, որ միւս այլ դեղ հարկաւոր չեղաւ նոցա։ Եթէ հարկաւորութիւնը և մի վճռական կամք կարող են երբեմն հետի պահել մի հիւանդութիւն, այնու ամենայնիւ տևողապես առողջ լինելու համար, որ անտարակոյս

մի շատ պատուական յատկութիւն է, պատուիրելի է Ձափաւորութիւն ամենայն բանի մէջ որ ունէր մաշողական զօրութիւն: Բայց որովհետև Ձափաւորութիւնը շատ հասարակաց լաւութիւն չէ, անիրաւ չէր Փրանսիայի բժիշկ Հօրկվետի արածը, եթէ նա յաճախ գնումէր կերակրատունքը և գրկախառնումէր կերակրեփեացքը, ասելով նոցա· «Բարեկամներ, շատ շնորհակալութեան տեղիք ունիմ ձեզանից ձեր մեծ պատուերութեան մասին բժիշկներիս· առանց ձեր քաղցր արուեստական փորախանգարութեանը, մեր բժշկական ֆակուլտետը շուտով լըցուցանելու էր աղբատանոցքը·»

Ս· Նալբեանց·

ԻՆԴԻՏԱԿՆԵՐ·

ԹԷ ԻՆՉՊԻՍ Է ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ·

Ա·

Մարդը, որ անուանումէ իւրեան երկրագունդի տէր, դեռ ևս չէ ձգել իշխանութեան տակ իւր կարծիքական թագաւորութիւնը: Ինչպէս ասումէ Հոմերոսը, մարդը շնչումէ սողալով երկրի մակերևութի վերայ· նա փակված է ատմոսփերայի ստորին բաժիններում, և եթէ ցանկանումէ մի փոքր բարձրանալ, այն ժամանակ, օդի պակասութիւնը և յուրտը արգելումեն նորա ճանապարհը· Բայց սահմանափակվելով և այնքանով, որքան հասանումէ մարդը, նա չէ տիրել և միևչև անգամ չէ քննել այն բոլոր աշխարհները, ուր մարդկային ազգը կարող էր բազմանալ, օգուտ քաղելով կենդանական և բուսական թագաւորութեան բերքերից, որ այնքան առատապէս բաշխումեն նորան Հողը և Ծովը· Աշխարհագրութիւնը, որի ծորհուրդը էր նկարագրել մեր երկիրը, դեռ ևս շատ անկատար է· Օդերևութաբանութիւնը գնումէ վերև, նորա թագաւորութիւնը է օդերէն ովկիանոսը, Ատմոսփերա անուանված, որ իւր անհոդ ալիքներովը շրջապատումէ երկրագունդը վաթսուն վերստ բարձրութեամբ· Աստեղաբաշխը, թողնելով երկիրը, բարձրանումէ առաւել հեռի և, ինչպէս ասումէ Արիստոտէլը, նկատելով և մտաւորական աչքով մտանումէ համարեա մինչև անտեսանելի աշխարհի

սահմանքը։ Բայց մարդը, իւր քննութեամբը և մտածելովը բարձրանալով աստղերից վեր գտանված աշխարհները, երևում է թէ անհոգ է մնացած իւր սեփական մոլորակը ուսանելու մասին, երկրագունդը, որի վերայ կարելի է ասել թէ կապված է երկաթի շղթայով յաւիտեանս. պատճառ, հաղիւ երբեմն ձիւնապատ սարերի գլուխը բարձրանալը և առաւել հաղիւ, օդապարիկներով նաւագնացութիւնը մի և նոյն է վերաբերութեամբ դէպ ի միւս մարդիկը, ինչպէս է մի վայրկեան միայն ծովի երեսին թռչող ձուկը դէպ ի ծովի բոլոր բնակիչքը։ Դեռ ևս նոր ժամանակներում ծագկած գիտութիւնը հաւաքեց հարցասիրութեան արժանի ծանօթութիւնքը երկրագունդի ներքին կազմակերպութեան մասին, քննելով սարերը և երկրագունդի կեղևակարգը, որ բարձրացած էին մեր երկրագունդի վերայ պատահած յեղափոխութենից, որ նոյնպէս մեծ աղդեցութիւն ունէին առ հասարակ նորա կերպարանքի և եղանակաբանութեան վերայ։

Մարդը, թաղելով իւր անձը երկրի արգանդում, և փորելով հանելով այն տեղից թանգագին քարեր և մետաղներ, կատարեց մի հարցասիրութեան արժանի նկատողութիւն, աստիճան առ աստիճան ջերմութեան սաստկանալու մասին որքան խոր մտանում նա երկրի ծոցը, և երկրակեղևի կարգ առ կարգ դասաւորութեան մասին։ Դոյն այդ ժամանակում գիտութիւնը դեռևի մէջ մի քանի ամիսղջ մնացած մասներից ստեղծագործեց հսկայամարմին չորքոտանիք, թռչուններ, ձուկներ, խեցեմորթեր, ծառեր և բուսականներ, որ այժմ չկային։ Բայց ինչ կայ մարդուս մտածելի կեղևակարգի տակ. յատկապէս ինչ նիւթերից բաղկացած է երկրագունդը. ունինք արդեօք մի որպիսի և իցէ հաղորդակցութիւն մեր մոլորակի ներսի հետ։ Ջուրը, սարերը, ծովերի յատակը հասանում են արդեօք պինդ միաւորութեամբ մինչև երկրագունդի կենտրոնը, թէ այս ամուր հողակեղևի տակում գտանվող հրեղէն հեղանուտը կրում իւր վերայ այս յամաքահողերը և ծովերի յատակը, բևեռային ծովերի նման, որ կրում են իւրեանց վերայ սառցաշէն անապատներ և կղզիներ։ Այո, յառաջ գնանք, մեր մոլորակի կենտրոնական ներսի կողմը արդեօք բաղկացած չէ ձգական և շատ ճնշված գազանման նիւթից, որ ցածից դէպ ի վեր ներգործութեամբ հաստատ մարմինների միութեան վերայ, որ բաղկացնում են նորա կեղևը, և որ կարող էր դուրս արձակվիլ եթէ հողակեղևի վերայ բացվեր մի ծակ կամ ճեղքուած։

Ո՛չ այն խնդիրները որ Երկրաբանութիւնը, այս մատաղահաս գիտութիւնը, բարձրացուցել է արդէն յիսուն տարի սորանից յառաջ, վաղ քան թէ յաջողապէս սկսել էր որոնել, մարդկային խելքը խլե-

դիր է մէջ բերում, թէ ի՛նչ բան յատկապէս պիտոյ էր որոնել։ Փորձը հաստատումէ, թէ մի պարզ կերպով առաջարկված իւնդիր, այս կերպով արդէն կիսով չափ լուծանալումէ։ Գիտութեան համար այն ևս յառաջադիմութիւն է, եթէ նա ճիշդ կարողանայ ասել, թէ ի՛նչ բան չգիտէր և ի՛նչ բան պիտոյ էր նորան որոնել։ Ողջից յառաջ պիտոյ է միտք բերել որ բնութեան մէջ գտանված բոլոր մարմինքը երեք կերպով են երևում, հաւասար, հեղուկ և գազանման։ Առաջին երկուքը բոլորին յայտնի են, իսկ երրորդի կարգում կարող ենք ցոյց տալ օդը, որ ամենայն րոպէ ներս ենք շնչում. գազը, որով լուսաւորումեն փողոցները և տները, այն գազը, որով լցնումեն օդի մէջ ման եկող գունդեր և այլ զանազան գազեր։ Ջրի շոգին պատկանումէ նոյնպէս գազանման հեղուկի, որի լայնացող ըօրութիւնը յառաջացնումէ այն զարմանալի արագ շարժողութիւնը։ Ա՛յս բոլոր ձգական հեղուկները և գազերը ունեն զարմանալի թեթևութիւն և, տակվելով մեծամեծ ամանների մէջ համարեա թէ չեն առաւելայնում նոցա ծանրութիւնը. այդպէս աննշան է նոցա յատուկ ծանրութիւնը։ Բայց չէ կարելի առանց սահմանափակութեան ընծայել մի անպայման թեթևութիւն իւրաքանչիւր գազանման մարմինների։ Պ. Կանիեար Դը լա Տուրը փորձի ենթարկեց այդպիսի գազերը երկաթեայ ամանների մէջ կամ հաստ, ապակեղէն փողովակների մէջ և ձգելով նորանց սաստիկ ջերմութեան տակ, կարողացաւ տալ նորանց մեծ պնդութիւն և ձգականութիւն։ Ջուրը, ալքօհօլը և եթերը ստացան այնպիսի զարմանալի յատկութիւնք, և եթէ երևակայենք մեզ, թէ երկրագունդի նիւթը, ներսի կրակի ներգործելով, գտանվումէ նոյնպէս ճնշված գազանման դրութեան մէջ, այն ժամանակ, ի՛նչ պատճառով չէ պիտոյ թոյլ տալ, որ այդ թանձրացած ձգական գազը կրէր իւր վերայ հողի գաստակարգերը, որ բաղկացնումէին երկրագունդի կեղևը։

Լապլասի տեսութեամբ, երկիրը և մոլորակները գոյացած են ձգական, գազանման, արեգակնային նիւթից և ստացած են գունդի ձևեր, որոնց միջակէտումը գտանվումէր արեգակից ստացած կրակը։ Բիւֆֆոնը նոյնպես կարծումէր, թէ երկիրը բաղկացել է մի հրեղէն հեղանիւթից, որ բաժանվել էր արեգակից, մի այլ մոլորակի զարկվելուց. բայց նա թոյլ էր տալիս, թէ հազարաւոր տարիներ անցանելուց յետոյ, պետի հալած հեղանիւթը կարողացել է պաղիլ և ամրանալ մակերևութից բռնած մինչև բուն կենտրոնը։ Նոր ժամանակների պիտութեան կարծիքը, որ գործական վկայութիւններով չէ հաստատված, համաձայն Լապլասի տեսութեանը ընդունումէ, թէ երկիրը մեծ մասնով բաղկանումէ հալած հեղանիւթից։

Նայյ երկիրը երևումէ մեզ հաստատ և անշարժ, ցուրտ և թայ և երբ փորումն ջրհորներ, գտնումէն ոչ թէ կրակ, այլ ջուր։ Ա.յս պատճառով Թափվումն մեր վերայ հետևեալ ինդիրները, 1) Մի՞թէ ապառաժները և սարերը կարող են լողալ մի որևիսի և իցէ գաղանման մարմնի վերայ։ 2) Ձեր ուսուցանելովը պիտոյ էր խոր Հոր փորել, այն տեղից ջերմութիւն ստանալու համար։ 3) Ի՞նչ պատճառով գետինը ամենայն օր չէ շարժվում, եթէ լող է տալիս հեղանիւթի վերայ։ 4) Ի՞նչ պատճառով կենտրոնական կրակը դուրս չէ գալիս երկրի մակերևութի վերայ, ինչպէս դուրս է գալիս ջուրը սառուցի երևսին եթէ բացվել էր նորա վերայ ծակ կամ ճեղքուած։ 5) Ի՞նչ պատճառով չենք զգում մեր ոտքի տակ այգ սարսափելի ջերմութիւնը, որ կարծումէք թէ կար երկրի կենտրոնում, և ինչու համար չեն հալում նորա ներգործութենից բևեռային սառուցները և սառցաժողովքը սարերի մէջ։ 6) Ինչու համար գետնի տակի կրակի ղօրութենից եռ չեն գալիս ջրհորների ջրերը։ 7) Ի՞նչպէս պիտոյ է հասկանալ վուլկանների (հրաբուղխ սրբէք) ներգործութիւնը, եթէ Թոյլ էինք տալիս կենտրոնական կրակի լինելութիւնը։ Կ՚աշխատենք այս բոլոր հարցուածների ընդդէմ տալ ճիշդ պատասխանիք։

Ողջից յառաջ պիտոյ է ընդունել, ոչ թէ տեսական փաստերով, այլ մի ուրիշ աւելի դրական բանով, թէ երկրագունդի ներսը բաղկանումէր արդարև հեղանիւթից։ Որքան ևս մեծ լիներ Լապլասի ասածի վերայ հաստարակաց հաւատը, մեք հեռի ենք պիւթագորասի ժամանակներից, երբ հերիքանումէին խնամտուն ասած խօսքերով առանց վերկայութեան։

Որքան խոր մտանես գետնի մէջ, ներքին հողակարգերի ջերմութեան աստիճանը բարձրանումէ, այնպէս, որ ամենայն 123 ոտնաչափ խոր, Ռ. ջերմաչափը ցոյց է տալիս մի աստիճան առաւել ջերմութիւն։ Սորանից հետևումէ, թէ շատ անշշան խորութեան մէջ, եթէ համեմատէինք նորան մեր մոլորակի մեծութեանը, ամենայն բան պիտոյ է լինել հալած դրութեան մէջ, մանաւանդ, եթէ միտ առնունք, որ երկրագունդի մէջ գտանվածնիւթերը, ղոր օրինակ, լաւա, պորփիւր, տրախիտ եղջերային քարեր և բոլոր վուլկանական արտահոսութիւնքը, շուտով հալվումէին, քան թէ որձաքարը, գայլախաղը, գեղին հողը, և այլ մարմինք, որ ջրի և օդի ներգործութեամբ ալատվել էին այն տարերքից, որ ձեռնտու էին հալողութեան։

Վարիղեան ինստիտուտի անգամ Պ. Կօրդիէի գրուածներում, մէջ են բերած շատ արժանի հարցասիրութեան իրողութիւնք և վկայութիւնք ամենախոր հանքերի քննութեններից, հաստատելու համար ջերմու-

Թեան յաւելեանալը այնքան, որքան մեծանումիր հողագունդի կենտրոնին, այնպէս, որ շատ խոր տեղերում պիտոյ է պահպանէիր քեզ վերին աստիճանի ջերմուԹեան երեսից։ Կօրնվալիսի քարահանքերում և Վելիչկոյի գետնի տակի աղային պատշգամներում, եղանակը միշտ ամառնային է, ձիանքը ստանում են այն տեղ մոյդ բուրդ, որ խոպոպվում, որ և ի հարկէ պիտոյ է ջերմուԹեան աղդեցուԹեանը վերադրել։ Փարիզի մէջ գրենելեան ջրհոր փորելով ստացան 21 աստիճան ջերմ ջուր։

Ալպերդին, Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ, այս փորձերով պարապելով հաստատեց, Թէ շատացնելով խորուԹիւնը իւրաքանչիւր 123 ոտնաչափ երկայնուԹեան վերայ յաւելանում, ը. ջերմաչափով, մի աստիճան ջերմուԹիւն։ Եթէ երկրագիտուԹեան առաջնորդուԹեամբ կարելի լիներ ջուր դտանել 1,000—1,500 գրկաչափ խորուԹեան մէջ, այն ժամանակ գրենելեան հորերի միջնորդուԹեամբ կ'ստանայինք ջերմ հոսանք ջրի, և կարող էինք գործ դնել նորան ամենայն հարկաւոր տեղերում, առանց վառելիք գործ ածելու, որ ընդհանրապէս և մանաւորապէս մայրաքաղաքներում շատ թանգ է։

Այս պարզ և հասկանալի իրողուԹիւնը միւսանգամ կրկնելուց փախչելով, ասենք, որ հանքային ջերմ ջրերը յառաջանում են այն հոսանքներից, որ անցանում են խոր ճեղքուածների և փոսերի միջից, որոնց յատակը ջերմ էր, և յետոյ դուրս էին թափվում գետնի երես։

ԵրկրաշարժուԹեան ժամանակ, շատ անգամ պատահում տեսանել եռացող ջրի յորդուԹիւն, որ դուրս էին մղվում գետնի ճեղքուածքից. ահա մի նոր ապացոյց գետնի ներսումը եղած ամենամեծ ջերմուԹեան։ Բոլոր գետնի տակի ջրերը, որ երեք վերստ խորուԹեամբ դտանվում էին, պիտոյ է ջերմուԹիւն ունենան, ը. ջերմաչափով, 80—100 աստիճան, ուրեմն եռացման մէջ պիտի լինին։

Այժ նախ, քան Թէ յառաջ էինք գնացել, մեք պարտական ենք հերքել մի սխալ կարծիք։ Մի քանի երկրագէտք կարծում են, Թէ ջրային շոգիքը ձեռնտու են գործել ցամաքահողերի վերայ նկատված բարձրուԹիւնքը. որպէս Թէ, այս մեծաղօր ներդործողը, ծածկված գետնի ծոցում, ուր պակասուԹիւն չկայ ջերմուԹեան մասին, կարող է բարձրացնել հողակարգեր և ապառաժեայ սարեր, չնայելով երկրագունդի կեղևի 60 վերստ հաստուԹեանը։ Այսպիսի կարծիքը, մեծ սխալանք է ֆիլզեկայի մէջ։

Պիտոյ է միտ բերել, Թէ ջրային շոգիների ոյժը կարող է հասանել մինչև յայտնի սահմանները։ Եթէ այս բանը, նոր երևի մի քանի

ընթերցողների համար, ուրեմն խնդրումենք ուշ դարձուցանել հետեւալ բաների վերայ, դիցուք թէ ջուրը և ջրային շոգիքը փակված են մի երկաթեայ տանի մէջ, որ կարող էր դիմանալ մեծ լայնացուցիչ զօրութեան և թէ այդ տանը ենթարկած էր մի մեծ կրակի ազդեցութեան։

Որքան նոր չերմութիւն մտանումէր ջրի մէջ տանի պատերից անցանելով, այնքան բաժանվումեն ջրից նոր շոգիք և նոցա ձգականութիւնը առաւելանումէ։ Եթէ տանը տոկուն և պինդ չէ, ապա կը պատռվի նա որպէս ռումբ և կը լինի կոտոր կոտոր։ ապա եթէ տոկուն է, ահա թէ ինչ է պատահում։ Հաւաքված շոգիքը այնքան թանձրանումեն, որ նոցա մասնիկների փոխադարձ քարշողութիւնը առաւելանումէ և սորա հետ միասին պակասումէ նոցա ձգականութիւնը։ Նոյն բանը պատահումէ և թանձրացրած գազերի հետ։ Ա՛յս պատճառով ևս պիտոյ էր հրաժարվիլ Արիստոտելի տեսութենից, որ երկրաշարժութիւնը և ցամաքահողերի բարձրանալը վերագրումէր գետնի տակում գտանված գազերին և շոգիներին։ Ովիդիոսը պատմումէ, թէ Տրեօցէնի մօտ, կար մի բարձր ապառաժ, դուրս երևեցած գետնի տակի հողմերից, որ փչելով ուղղել էին գետինը փուքսերի նման։ Գետինը ամրացել էր այս նոր ձևի տակ և դարձել էր բարձր ապառաժ։

Հողունք ջրային շոգիներին նոցա սեղմական ներգործութիւնը։ Թող թոցնեն նոքա վագոնները ամենայն րոպէ մի վերստ արագութեամբ, կամ քշեն թեթև նաւերը ծովերի և ովկիանոսների ալիքների վերայով։ բայց ցամաքահողերը շարժեցնելու համար հարկաւոր են ուրիշ, աւելի զօրեղ ներգործողք։ Մի կաղքի ընթացք տալու համար չեն լծուում շներ։ վագոնով թռչելու համար չեն լծուում ձիանք, վեռստն վերստ հաստութիւն ունեցող մի մարմին շարժեցնելու համար, շոգիների զօրութիւնը նուաղ էր։

Երկրագունդի կեղևը կամ գանգը, հանդիսացնումէ այժմ մի հաստատ մակերևոյթ, բայց երկրի դուրսի պատնի վերայ յառաջացած էին մեծամեծ յեղափոխութիւնք։ Նոյն չափով, որով երկրագունդը սառեցաւ և սեղմվեցաւ նորա տարածութիւնը, ցամաքահողի շատ մասները, որ մի տևողական կապակցութիւն միմեանց հետ և հաստատուն հիմք չունէին, կործանվեցան, միւսներին այսօր ևս սպառնումէ աւերանքը։ Առաջինքը ընկան երեկ, երկրորդքը կը քանդվին էգուց, այս վերջինների կարգում պիտոյ է դասել նղերքը ծովերի և ցամաքի։

Գետնի տակի դրնդիւնը, որ այնքան շատ երկիւղ է պատճառում բնակիչներին, առաջարկումէ բնագէտներին այս սարսափելի բնութեան

երևոյթի լենգիրը։ Կարծիքը, թէ ցամաքահողերը լողումեն մի հալած նիւթերի բաղմութեան վերայ, մի թեթև մեկնութիւն է տալիս այս երևութին։

Նևադային աշխարհներում, ծովերի երեսի սառցաշէն դաշտերի տակից չէ՛ին լսում արդեօք երբեմն աներկիւղ ճանապարհորդքը մի ղարհուրելի որոտմունք, յառաջացած սառուցի բեկորների միմեանց ղարկվելուց, որ ներքին հոսանքով մտել էին մակերևութի տակ։ Այս սարսափելի ղարկողութիւնքը, նմանութիւն չունի՛ն արդեօք մեր մոլորակի ներսի աղաղակի հետ, որ պատճառվումէին սարերի և ապառաժների խորտակված կոտորներից, որ լողումէին հալած հեղանիւթի վերայ և ղարկվումէին հողակեղևի ներքին պատեանին, մինչ դուրսի պատեանի վերայ հանգիստ մնումէին քաղաքներ և գիւղեր կամ գտանվումէին ծովերի և ովկիանոսների յատակներ։

Այդ կենտրոնական կրակի բոլոր յայտնութեններից առաւել ղգալին են ներգործութիւնքը վուլկանների, որով երկիրը կտրատված է, մանաւանդ, եթէ հաշուի տակ դնենք ոչ թէ միայն ներկայումս կամ յառաջ ներգործող վուլկանքը, այլև նորանց, որոնց լինելը երևումեն վուլկանական արդիւնքներից, ղոր օրինակ, լաւաներ, բազալտախառն, վուլկանական աւազով և բոլոր կրակից յառաջացած նիւթերով։ Վուլկանների ուղղութիւնը համեմատ է երկրակեղևի ճեղքուածքի ուղղիղ կամ օձապտոյտ գծին։ Այսպես է այն հոչակաւոր վուլկանական գիծը, որ ընկած է Կորդիլիերեան սարերի վերայ Ամերիկայի արևմտեան եղերքում, Կալիֆոռնիայից մինչև Չիլի։ Ամենայն տեղ այս ճեղքուածքի երկայն գիծը գոյացուցել է մի երկայն շղթայ վուլկանական բերանների։ Հեշտ է հասկանալ, որ երբ երկրակեղևը պատռվումէ, հրեղէն հեղանիւթը չունելով այլ ևս վաթսուն վերստ հաստութեամբ ցամաքահողի ծանրութիւնը, բարձրանումէ դէպ ի այդ ճեղքուածքը, նման այն ջրին, որ վաղումէ սառցաշէն դաշտերի ճեղքուածքների միջով։

Հրեղէն նիւթը, մի փոքր բարձրանալով հողակեղևի մակերևութի վերայ և դուրս ցայտելով հեղուկ նիւթը, որ ծանր է և խիտ նորա վերայ լողացող ցամաքահողերից, մոռանումէ դարձեալ հրաբուղխի կոկորդը և մնումէ մի յայտնի բարձրութեամբ համեմատ իւր ծանրութեանը։ Շատ ճիշդ կը լինի համեմատութիւնը, եթէ թոյլ տանք, որ ինչպէս ցուրտը սառեցնումէ և կապումէ սառցաշէն դաշտերի ճեղքուածքների միջից դուրս եկած ջուրը, նոյնպէս և լաւան, բարձրանալով իւր մասնաւոր ծանրութեան համեմատ, ամրանումէ և ոչնչացնումէ հաղորդակցութիւնը երկրագունդի դուրսի մակերևութի և նորա ներսի մէջ, միաւորելով գետնի պատռված պատեանը։ Շատ վուլկաններ, որոնց

մէջ կարելի է ցոյց տալ սանդիվիճեան կղզիների Մօնա Ռուա ասացեալը, ասես թէ մի հաղորդակցութեան միջնորդ են երկրագունդի կենտրոնական կրակի և արտաքին հողակեղևի մէջ։ Հրաբուղխի ահագին բերանի հինգ վերստ բարձրութենից, կարելի է նկատել կենտրոնական հրեղէն նիւթերի ժողովը, որ յետոյ դառնում կարծրացած լաւա և միակում երկրագունդի ներքինքը, միաւորվելով նորա պատեան հետ։ Վուլկանական արտահոսութիւնքը, ամենևին բնականաբար, պիտոյ է կատարվին կապակից լինելով երկրաշարժութեան հետ։ Դժուար է կարծել, որ ճեղքվէր հողակեղևը այնպես խաղաղ և հանգիստ, որ երկրի մակերևոյթը չդողար։ Բայց ոչ ամենայն երկրաշարժութեան ժամանակ պատահում են վուլկանական արտահոսութիւնք, որովհետև երկրի հողակարգերը կարող են ստանալ մի նոր դուզակշիռ, ճանապարհ չտալով հրեղէն հեղանիւթին, որի վերայ լողում են ցամաքահողերը։ Հաւանօլը կարծում, թէ երկրագունդի կենտրոնական մասը ներգործում նորա արտաքին կեղևի վերայ, դուրս արձակելով հրեղէն հեղանիւթը պատռուածների միջից։ Այս իրողութիւնը նոյնպես հնչտ մեկնվում ցամաքահողերի, իբրեանց ծանրութեամբ, հրեղէն հեղանիւթը ճնշելով, որ և այս պատճառով մտանում դետնի ճեղքուածների մէջ։ Բայց այսպիսի ճնշողութիւնք լաւագոյն չեն պարզում պատճառը մի քանի սաստիկ արտահոսութեանների, երբ չէր երևում լաւա այլ մի բարձր հրեղէն սիւն, դուրս ընկած օդապատի մէջ մի անհասանելի ծորութեամբ, և որի ձգական, դաղանման նիւթը թափվում երկրագունդի մակերևութի վերայ, որպես վուլկանական անձրև։ Այդ դաղանման լաւա էր, դուրս պրծած ճեղքված երկրագունդի ծոցից, որ ապացուցանում մի ձգական նիւթի գոյութիւն, որ Լապլասը թոյլ էր տալիս երկրագունդի կենտրոնի մէջ, լաւային տակում, որ (լաւան) այնպիսի ծորութեամբ չէր դուրս դալիս դետնի ճեղքուածքից, որպես կենտրոնական դաղանման մարմինը։

Ուզելի լաւ պարզելու համար երեք նիւթերի կարդը, որոնցից բաղկանում երկրագունդը, մենք կը յիշենք յառաջ նորա կարծր կեղևը կամ արտաքին պատեանը, բաղկանում արդեօք նա ցամաքահողերից, որ բարձրանում էին օդի մէջ, կամ ովկիանոսների և ծովերի յատակներից։ Դատելով խորութիւններից, ուր բոլոր յայտնի նիւթերը, պիտոյ է հալված դրութեան մէջ դտանվին, երկրակեղևի հաստութիւնը չէ պիտոյ անցանէ վեցտասն վերստից։ Այս հաստութիւնը համարեա թէ հաւասարվում օդեղէն ատմոսֆերայի բարձրութեանը մինչև նորա սահմանքը, որ հասանելի էին մեր դդայարաններին, և կազմում մի հարիւրերորդ մասը երկրագունդի կենտրոնից մինչև նորա մակերևու-

Թիեն։ Եւ այսպէս երկրագունդի շատ փոքր մասը ծառած է, և գտանվումէ կարծր դրութեան մէջ, իսկ գլխաւոր մասը բաղկանումէ հրեղէն գունդից, որ ծածկած է բարակ պատեանով, նման այն մաշկին, որ ծածկումէն սալորի և խաղողի մակերևոյթները։ Համեմատաբար խօսելով, երկրագունդի պատեանը աւելի բարակ է քան թէ շատ պտուղների կաշիները, ինչպէս ղոր օրինակ նարինջը, (ապելսին) որի սեղմած ձևը, նման է երկրագունդի ձևին։

Երկրագունդի կեղևի տակ գտանվումէ հալած հեղանիւթի կարգը։ Անուանենք նորան Լաւա, որից շատ երկրագէտների կարծիքով, բաղկանումէ երկրագունդի բոլոր ներսը, այնպէս, որ այս հրեղէն ծովի վերայ որպէս թէ լողումէին ցամաքահողերը։ բայց հաղիւ թէ ճշմարիտ էր այս։ Արդեօք աւելի ուղիղ չէ՞ր կարծել Լապլասի հետ միասին, թէ երկրի կենտրոնը լցված է շատ ճնշված, ձգական, գազանման նիւթով, որ կրումէ իւր վերայ լաւան, որպէս սա հաստատ երկիրը։ Այս կերպով ճնշված գազը բաղկացնումէ մեր մոլորակի կենտրոնը, յետոյ հետևումէ լաւան և յետոյ հաստատուն հողը։

Երբէք երկնքի տարածութեաններից գնաս գէպ ի երկրի կենտրոնը, այն ժամանակ ողջից յառաջ պիտոյ է մտանել մի թեթև գազի մէջ կամ օդեղէն ատմոսֆերայի մէջ, որ պատումէ բոլոր երկրագունդը և հանգչումէ ցամաքահողերի և ովկիանոսների վերայ, Ովկիանոսքը հանգչումեն երկրակեղևի վերայ, որ հանգչումէ և լողումէ լաւայի վերայ և վերջապէս լաւան հանգչումէ ներքին գազի վերայ։

Շատ անգամ, սաստիկ վուլկանական արտահոսութեանների ժամանակ, լաւան փոխանակված է գազով, որ անհատատալի զօրութեամբ որպէս հրեղէն սիւն գուրս է յարձակված ատմոսֆերայի մէջ և սառելով թափվել է որպէս մոխրային անձրև։ Ա.Յգպիսի մի անձրև պատճառված Վեզուվի արտահոսութենից խեղդեց ուսումնական Պլինիոսին, որի ամենիւ հետաքրքրութիւնը ստիպել էր նորան նկատել և քննել այդ մեծափառ երևոյթը։ Ցունական Էմպեդոկլէս փիլիսոփոսը նոյնպէս կորաւ, շատ մօտից քննելով Էտնայի այրող արտահոսութիւնքը։ Մէջ բերենք մի այլ ապացոյց, թէ ինչ֊ու համար երկրաշարժութիւնքը չէին կարող յառաջանալ ջրային շոգիներից. գորա պատճառը շատ պարզ է—յայտնի խորութեան մէջ, բարձրաստիճան ջերմութեան պատճառով, չէ կարող ջուր լինել, ուրեմն չկան և ջրային շոգիք։ Երկրագունդի ներքին ջերմութիւնը թոյլ չէ տալիս ջրին աւելի խոր մտանել նորա կեղևի մէջ. չորս վերստ խորութեամբ գետինը պիտոյ է չոր լինի բոլորովին բարձրաստիճան ջերմութեամբ։

Մի քանիքը լուսնի ազդեցութեանը վերագրումն երկրաշարժութիւնքը։ Ցայտնի է, որ լուսնի քարշողութիւնը, որ զօրանում նորա նորելու և լրման ժամանակ, այլև արեգակի քարշողութենից, պատճառում ծովային մակընթացութիւնը և տեղատուութիւնը։ Իսկ այդ լուսաւորների ներգործութիւնը, մեր մոլորակի հաստատուն մասների վերայ, չնչին է։ Հաշիւը ցոյց է տալիս, որ լուսնի քարշողական ոյժը ազդում ցամաքահողի վերայ ոչ աւելի ներգործութիւն, քան թէ մի կանդուն հաստութեամբ հողակարգի ծանրութիւնը։ Իսկ այդպիսի ծանրութիւնը ի հարկէ չէ կարող աւերել ցամաքահողը։ Եւ այսպէս, լուսնի և արեգակի քարշողական զօրութիւնը նոյնպէս աննշան են երկրաշարժութիւն պատճառելու համար, որպէս և ջրային շոգիքը։

Լուսնի հաստատ մարմինների վերայ ունեցած ներգործութեան ոչնչութիւնը առաւել լաւ իմանալու համար, ասենք թէ մի հինգ փութ ծանրութեամբ մարմին, լուսնի ամենաշատ ազդեցութենից, պակասում իւր ծանրութենից 0,16 ցորենակշիռ։

Երջացնելով մեր մոլորակի ներքին կազմակերպութեան տեսութիւնը (teopia), այլև տեսութիւնը այդ կազմակերպութենից յառաջացած հետևանքների, մեղ դեռ ևս մնում յիշատակել այն մեծ երկիւղը մասին, որ ժամանակ առ ժամանակ տիրում երկրի բնակիչներին։

Ծոլորին յայտնի է, թէ ինչ երկիւղով սպասում էին անցեալ տարի պոչաւոր աստղի երևելուն (*), մանաւանդ վախենում էին յունիսի 13 չարագուշակ թուականից, շաբաթը մինչև անգամ հիւանդացան երկիւղից։

Երևելքում պատմումն հետևեալ առասպելը, թէ մի դերվիշ կայերայի շրջակայքում, սովորական արևամուտ աղօթքի ժամանակ, տեսանում մի ուրուական, որ գնում էր դէպ ի քաղաք։

«Դու ո՞վ ես։» հարց արեց դերվիշը։

—Ես ժանտախտն եմ։

«Ո՞ւր ես գնում։»

—Դէպ ի կայիրօ։

«Ինչո՞ւ համար։»

—Տասնևհինգ հազար մարդ սպանելու։

(*) Փառաւոր գիսաւոր աստղը, երևեցաւ 1264 և 1556 թ. որին՝ սպասում էին 1848-ին, նոր հաշուով պիտոյ է սուտգալիս երևի 1857 և 1860 թուականների մէջ, որի մասին մի պատշաճ ժամանակում կը խօսէ Հիւսիսափայլը։

«Արդեօք չէ՞ կարելի յետ դնել այդ պատուհասը։»

—Չէ կարելի, այդպէս սահմանուած է։

«Այո՛ր, չհամարձակուիս մի մարդ ևս աւելի սպանել։»

Մի քանի ժամանակ անցանելուց յետոյ, երբ կայիրոյի մէջ ընդհանուր տկարութիւնը վերջացաւ, ժանտախտը և դերվիշը դարձեալ պատահեցան միմեանց։

«Դու կայիրոյի՞ց ես գալիս.» հարց արեց դերվիշը։

—Այո՛։

«Ո՛նչ շինեցիր դու այն տեղ։»

—Տասնհինգ հազար մարդ սպանեցի։

«Այսուհետև ասում, դու երեսուն հազար մարդ սպանեցիր։»

—Ո՛չ. ես միայն տասնհինգ հազար սպանեցի. իսկ միւս տասնհինգ հազարը ինքեանք վախից մեռան։

Բ.

Արդեօք պէտք չէ՞ որ ամենայն օր երկրաշարժութիւն լինի. այս հարցման պատասխանը ստորասական է։ Արդարև բովանդակ երկրագունդի վերայ օր չէ անցանում, որ այս կամ այն տեղում չզգաստհէր երկրաշարժութիւն, պատճառուած հողագնդի պինդ մասերի դէպ ի նորա կենտրոնը ներս ընկնելուց։ Այդ թեթև շարժողութիւնքը և հողակեղևի տեղ տեղ ճեղքուիլը, շատ մանր օրինակներ են այն մեծ յեղափոխութեանն, որ մի քանի հազար տարի յառաջ, ճնշելով և ընկղմելով հին ցամաքահողերը վեր երևեցուց և չորացրեց այժմեան ցամաքահողերը, փոխեց եղանակները և դոյացուց նոր բուսականներ և նոր կենդանիք առաջին օրգանական տեսակների փոխանակ։

Յայտնի է, որ բալտիկեան ծովեղերը բարձրանումէ անդադար. Ֆրանսիայի ծովեղերքը, որ լուացվումէն արևմտեան ովկիանոսի ջրերով, նոյնպէս ամենայն դար բարձրանումէն շատ զգալի կերպով։ Շատ տեղերում ծովը, որպէս թէ հրաժարվումէ եղերքից, բայց այդ երևոյթումէ միայն այդպէս, ծովը մնումէ անփոփոխ, այլ երկիրը բարձրանումէ։ Բայց հարկաւոր է մեզ յիշել, որ մեծամեծ յեղափոխութիւնքը, որ կերպարանափոխումէին երկրի մակերևոյթը, հեռի են միմեանցից քանի հազար տարիներով։ Հանդիստ ջրհեղեղը համեմատաբար խոսելով, դեռ ևս շատ ժամանակ չէ որ պատահեցաւ, և երկրի բնակիչքը կարող են հանդիստ մնալ, որ երկար ժամանակ բան պատահելու չէ

մեր մոլորակին, բաց ի փոքրիկ կործանումնքից և արտահոսութիւններից, փոքրիկ տեղ տեղ աւերածքից, որ աննշան բաներ են համեմատելով ամբողջի հետ, թէև ինքն ըստ ինքեան երբեմն շատ նշանաւոր. օրինակը շատ հեռի չէ, որպէս Լիսաբոնը և ուրիշ քաղաքներ։

Աստեղաբաշխքը և ֆիզիկոսքը, որ զարմանալի ճիշդ և ջրեղ բնաւննական անօթների միջնորդութեամբ, վերահաստ են հաղած անվախճան մեծ և անվախճան փոքր առարկաների, դանգատումն գետնի անհաստատութեան վերայ, Եւրոպայից մինչև Ամերիկա, Հնդկաստանից մինչև Բարի յոյսի ցանաքահողը, ամենայն տեղ հեռադիտակները յայտնագործումն մեր մոլորակի մէջ դողդոջուն շարժողութիւն, ինչպէս լինում մեծ նաւերի վերին մակերևութի հաղիւ հաղ նկատելի ճօճալը, երբ նաւը կանգնած էր նաւահանգստում։ Երբեմն նկատումն, որ բևեռային աստղը դողդողում, մինչդեռ նա անշարժ էր, բայց նորա կարծեցած շարժողութիւնը յառաջանում մեր մոլորակի ստոյգ շարժողութենից։ Երբ աստեղաբաշխքը նկատումին շարժողութիւն երկնային լուսաւորների մէջ, կարելի է հաւաստի լինել, որ այն ժամանակ շարժվում մեր երկիրը։ Մեք շուտով կը տեսանենք, թէ մինչև ո՛ր աստիճան կարող են ներգործել երկրագունդի առանցքի դրութեան վերայ ամենասաստիկ երկրաշարժութիւնքը։ Ոմանք միտ բերելով, համարեա թէ մեր ոտքի տակում գտնված հրեղէն անգունդը, խնդիր են առաջարկում, ինչպես վերևում ասացինք արդէն, թէ ի՛նչ պատճառով չերմութիւն չէինք զգում եթէ մեղ այդպէս մօտ էր կրակը։ Ուրիշները կարծումեն, որ գետնի տակի կրակը ներգործումէ և բուսականների վերայ, որ ճշմարիտ չէ։ Պատահած է որ հողը վարել են, մինչ նորա յատակը սառած էր, և հացը աճել է որպէս աճումէ սովորաբար։ Հիւսիսային Սիբիրիայում, ղոր օրինակ, Եակուտսկ քաղաքում, գետինը ամառան մէջ հալվումէ միայն մի դրկաչափ, բայց չնայելով սորա վերայ, ծովը բուսականքը աճումեն արագութեամբ. ուրեմն կենտրոնական կրակը չէ, որ աղդեցութիւն ունի բուսականների վերայ, այլ արեգակը։ Ջերմութիւնը հեշտութեամբ անցանումէ բարակ մարմինների միջով, իսկ եթէ մարմինը բաւական հաստ էր, այն ժամանակ շատ դանդաղ է տարածվում, թէև մետալ լինէր այդ մարմինը։ Ձուլարաններում, մի կուպրիկեան ոտնաչափ աման մէջ հալեցրած պղինձը քանի օրերով պահումէ իւր ջերմութիւնը, այնպէս, որ ոմանք մարմինք դրվելով այդ հալած պղնձի երեսի վերայ, կարող են դեռ ևս վառվիլ։ Մէջ բերենք մի այլ օրինակ, ճանապարհորդքը մոլորվելով Էտնայի անապատ բարձրութեան վերայ, վուլկանական մոխրի մէջ ծարաւեցան, ինչպէս սովորական է այն աշխարհների համար, ուր թագաւորում

ջերմուԹիւնը և հալեցրած մարմինը։ Առաջնորդներից մինը պատահաբար կոխելով երկաԹածայր գաւազանը այրող մոխրի մէջ, նկատեց, որ գաւազանի երկաԹեայ սուր ծայրը հանդիպեցաւ մի անսովոր բանի, դոքա էին սառոյց և ձիւն, ծածկված մնացած վուլկանական մոխրի տակ։ Ահա ապացոյց, Թէ ի՛նչպէս դանդաղ կերպով տարածվումէ ջերմուԹիւնը հաստ մարմինների միջով։ Ցայտնի բան է, որ ճանապարհորդ-ը օգուտ քաղեցին այս իւրեանց հարկաւոր գիւտից, որին լնայել էր Ետնայի ներքին և արտաքին կրակը։ Ամենեքեան, որ վերադառնումէին վեղուվից պատմումն, Թէ հրեղէն գետ և կօշիկների գարշապարներ մէջ լինումէ շատ փոքր տարածուԹիւն, բայց այնու ամենայնիւ ոտ-քը մնումէ անվնաս։

Ֆուրիէ լնագէտը, հետևելով նոր լնագիտուԹեան առաջնորդուԹեանը, հաշուեց, Թէ ջերմուԹիւնը, որ կարող էր անցանել երկրագունդի ամբողջ հողակեղևի միջով (Թոյլ տալով, որ հողակեղևը ընդունվեր մետալի նման որպէս յարմարաւոր ածանցիչ) չէ կարող մեծ ներգործուԹիւն ցուցանել հողագնդի արտաքին պատևի վերայ, քան Թէ ջերմաչափի մի աստիճանի հաղարերորդ չափով։ ուրեմն կենտրոնական ջերմուԹեան աղդեցուԹիւնը հողագնդի մակերևուԹի վերայ անչափ փոքր է կամ հաւասար ոչնչի։

Ահա մի այլ աւելի պարզ ապացոյց ցանկացողների համար, Թէ և ամենափոքր կարգը միջանկեալ մարմնի, կարող էր արգելուլ ջերմուԹեան ներգործուԹիւնը։ Մի ֆրանսիացի դիտնական, յատկապէս Մեղերէ պատմարանը, նստած էր իւր առանձնարանի մէջ, անձնատուր եղած մտածուԹեններին։ Մտանումէ նորա մօտ մի փոքրիկ աղջիկ և կրակ է խնդրումէ։ Ա՛յն ժամանակներումէ այսպիսի խնդիրները շատ սովորական էին Փարիզի մէջ, և համարեա Թէ ամեն մի հասարակ գերդաստանի մէջ պահումէին մի փայտաշէն մաշիկ, որով գնումէին դրացու տուն կրակ խնդրելու համար, երբ շիջանումէր իւրեանց կրակը։ — «Շատ ուրախ եմ,» — պատասխանեց պատմա՛նը, «բայց ուր է, սիրելիս, քո փայտաշէն մաշիկը։»

— Ա՛ի միայն Թոյլ տուեցէք պարոն, ես առանց նորան էս կարող եմ կատարել իմ գործը։

«Շա՛տ լաւ։» — ասաց հետաքրքիր ուսումնականը, սպասելով բանի վերջին։

Աղջիկը նստելով հնոցի առաջև, լցրեց իւր ձախ ափի մէջ մի փոքր մոխիր և դնելով նորա վերայ մի քանի կրակոտ ածուխներ, դուրս գընաց պատմարանի սենեկից, ամենևին չվախենալով ձեռքը այրելուց։

— Թէև ես ուսումնական եմ, — մոածեց Մելերէն, — բայց երբէք իմ խելքիս գալու չէր այդպէս վարվել կրակոտ ածուխների հետ։

Ջրհեղեղից յառաջ, շատ էին թէ փոքր ցամաքահողերը կամ, ուրիշ խօսքերով, աւելի՛ թէ սակաւ տարածութիւն բռնում էին նախկին ովկիանոսը։ Կարելի է կարծել, որ երկրի նախկին յատակը, երբ աւելի բարակ էին նորա եղերքը, աւելի փոքր անհարթութիւնք ունէր. ուրեմն նորա խորասոյզ լինելը պատճառած են աւելի փոքր ծովային աւազանները։ Բայց նոր ուսումնականութեանը մնում վճռել այս խնդիրը աւելի ճիշդ կերպով, երբ որ հաւաքված լինէր այն հարկաւոր վկայութիւնքը, որ այժմ պակաս են մեզ։ Նոր ֆիզիկական ցուցակների մէջ նշանակված են ոչ թէ միայն մարդկային զանազան ցեղերի տեսակները, այլև զանազան ցեղեր չորքոտանի շնչաւորների, թռչուններ, միջատների, ցամաքային և ծովային բուսականների։ Եթէ մի այլ ժամանակամիջոցի համար ունեցած էինք մեք այս բոլոր փաստերը, այն ժամանակ մեզ հեշտ կը լինէր ցոյց տալ ցամաքի և ծովերի սահմանքը։ Երկրագէտքը ամենայն եռանդնով աշխատում է այս խնդիրը լուծանել, որոնելով հողակարկերի մէջ թաղված քարացած էակներ, կենդանական և բուսական արարածներից։

Ակնոս, որ ովկիանոսը կուլ տալով մեծ մասը նախկին ցամաքահողի, արգելարիթ է լինում մարդուն հաւաքել կատարեալ տեղեկութիւններ, առաջին ժամանակամիջոցի մասին։

Տեսանենք, թէ ի՛նչ խնդիր է մնում դեռ ևս լուծանելու։ Բիօտը ճշմարիտ ասաց, թէ ինչ որ յայտնագործած է երեկ — շատ հեշտ է թվում, ինչ որ էգուց պիտի յայտնագործվի, թվում շատ դժուար։

Ամենայն խնդիր, որ լուծվել էր, կորուսանում արդէն իւր գինը, մինչ մարդկային խելքը հալիւ հաղ կարողանում ներս տանել գիտութեանների տարեգրութեան մէջ նորանոր յայտնագործութիւնքը և անդադար հանդէպ է վազում գալոց յառաջադիմութեանների։ Առաջին հետեւանքը, որ դուրս է գալիս երկրագունդի կազմակերպութենից, է նորա ձևը։ Հեղանուտ և իւր առանցքի չորս կողմով մանելով, պարզ է, որ գունդի ձև ստանար, որպիսի և է մեր երկիրը։ Երկրագունդի սեղմված լինելը ճշդութեամբ սահմանելու համար պարապել են զանազան ազգերի ուսումնականք. բայց Ռուս ուսումնականների աշխատութիւնքը իւրեանց մեծութեամբ և ճշդութեամբ համարեա թէ անցանում են միւս ուրիշներից։ Հարկ է յիշել այս տեղ, որ նոր ժամանակներում հասարակածի մեծ կամարը, սառած ովկիանոսից մինչև սև ծովը, չափված ու աւարտված է բաց ի երկրագունդի սեղմված լինելը լևեռներում, երկրագունդի տրամագծի $^1/_{300}$ մասով,

ձիշդ չափողութիւնքը ցոյց են տալիս, որ երկիրը չունի և կանոնաւոր էլլիպսօիդի (երկայնաբոլորակի) ձև։ Միջին լայնութիւնների մէջ և Եւրոպայում երևում է մի փոքր հաստութիւն կամ որպէս թէ յաւելուածական գօտի։ Բարինեի կարծիքով, ցամաքահողը շրջանակվում է երկրի առանցքի վերայ, արևմուտքից դէպ ի արևելք առաւել արագութեամբ քան թէ կենտրոնական գաղանման մարմինը։ Այս պատճառից բոլոր մագնիտեան հասարակածը մի փոքր յետ են մնում և մի փոքր յառաջ են շարժվում դէպ ի արևմուտք։ Այս բանը պարզելու համար միտքերս բերենք, որ փարիզի մէջ 1666 թուակ. գիտութիւնների ճեմարանը սահմանելու ժամանակ մագնիտեան սլաքը ցոյց էր տալիս ուղիղ դէպ ի հիւսիս, այսինքն մագնիտեան հասարակածը ուղղակի տեղն էր ընկնում բնականի վերայ։ Մի քանի տարի անցանելուց յետոյ, մագնիտեան բևեռը հեռացաւ մի փոքր դէպ արևմուտք, և մագնիտեան սլաքը սկսեց ուղղակի դէպ ի հիւսիս ցոյց տալ արդէն Լոնդոնի մէջ. դորանից մի քանի տարի յետոյ — Հոլանդիայում, իսկ մեր ժամանակներում պիտոյ է անցանել արևմտեան ովկիանոսից և հասանել մինչև 96° արևմտեան երկայնութեան Գրինվիչից, որ կարողանաս գտանել մագնիտեան հասարակածը. որ ընկնում բուն մագնիտեան բևեռի վերայ։ Հազար հինգ հարիւր տարուց յետոյ մագնիտեան հասարակածքը կատարեալ շրջան կը կատարեն, և դրան այդ ժամանակ ցամաքահողը միանգամ աւելի կ'սկսեն շրջանակվել համեմատելով կենտրոնական գաղանման մարմնի հետ։

Յոռնելով կարծիքների աշխարհը, ասենք որ երկրագունդը, իր ներքին կազմակերպութեամբ, նմանում է մեծ էլեքտրական մեքենայի, որի մէջ երկրի հողակեղևը շօշափում է անդադար ներքին հեղանիւթը։ Եւ ահա մեք ունինք մեր ձեռքում մինչև այժմ անմեկնելի հիւսիսային և հարաւային փայլողութիւնների յառաջացուցիչ պատճառը։ Մեր բոլոր խնացածը երկնքի հրաշալի կրակների մասին, է այս, որ դոքա կապակցութիւն ունին շարժական էլեքտրականութեան հետ և, լուսաւորելով երկինքը, ներգործում են մինչև փայլողութեան վերջը, մագնիտեան սլաքի վերայ։ Արդարև, օտարոտի երևոյթ չէ՞ արդեօք որ պողովատեայ մագնիսացուցած սլաքը, կախված լինելով փարիզեան աստեղաբաշխական դիտանոցի տակ, դողդողում է և օրօրվում հիւսիսային փայլողութենից։

Մեր նկատած բոլոր աստեղաբաշխական ժամանակներից, ըղր օրինակ լուսնի ամիսը, արեգակնային տարին, արևի չորս կողմով շրջանառութիւնը — այս բոլորից ոչ մինը չէ ցոյց տալիս մի կանոնաւորութիւն։ Մի միայն երկրային օրերը անփոփոխ են և կարող են որպէս

չափ ծառայել ժամանակ չափելու մէջ, բայց այսքան պիտոյ է ասել, որ մեր տարին կարճ է մի քանի վայրկենով քան թէ այն տարիները, երբ սկսած էին տարեհաշուումը։ Լուսնի ընթացքը բաւական անկանոն է. և մեք որպէս չափ ժամանակի ընդունումենք օրը։ Բայց ըստ ոյդ է, որ գետնի շրջանառութիւնը իւր առանցքի վերայ ենթարկված չէ ոչ մի փոփոխութեան։ Այժ, եթէ հաշուի տակ ձգենք, որ երկրային մարմինքը — երկրի կտորները որ ընկնում էին երկրագունդի կենտրոնի վերայ, ամենևին ոչինչ են, համեմատելով բովանդակ երկրագունդի հետ. այլապէս շատանալու էր երկրի օրական ընթացքը և դորանով կարճվելու էր օրի երկայնութիւնը։ Իսկ մեք գիտենք և ճիշդ գիտենք, որ օրի մեծութիւնը աստղաբաշխութեան սկզբից մինչև մեր ժամանակները անփոփոխ է մնում. պատճառ, հին մարդիկը չափել են զանազան աստեղաբաշխական միջոցներ իրենց ժամանակի օրերով և հետևանքը մի և նոյն է եղած, ինչ որ լինում այժմ. նոյն բանները տասնևիններորդ դարու օրերով չափելու ժամանակ։ Խոլորին յայտնի է, որ երկրագունդը շրջանակվում է իւր առանցքի վերայ, որի ծայրերը են հիւսիսային և հարաւային բևեռները։ Շինովի երկրագունդի (глобусъ) վերայ բևեռները հաստատ են, բայց մի և նոյն բանը չէ կարելի, ճիշդ նոսելով ասել բնական բևեռների մասին։ Մարմինը կարող է շրջանակվիլ իւր առանցքի վերայ և մի և նոյն ժամանակ նորա առանցքը կարող է շրջանակվիլ մի այլ հաստատ տողի վերայ։ Եթէ մի գնդաձև մարմնի շրջադարձութեան վերայ ներգործէ մի որպիսի և իցէ ոյժ, այն ժամանակ կարող է այդ ոյժը օրօրումն պատճառել այդ մարմնի առանցքին։ Այդպիսի ներգործութիւն պատահել է մեր երկրագունդին այն մեծ յեղափոխութեան ժամանակ, որովհետև չէ կարելի թոյլ տալ որ ցամաքահողերի սուղանիլը դէպ ի կենտրոն, այնպէս կանոնաւոր եղած լինի, որ երկրի առանցքը և բևեռները չօրօրային։ Ահա այն բոլորը ինչ որ կարելի է կարծել։ Երևելի աստեղաբաշխ Պենդերսը նկատեց բևեռների շատ փոքր շարժողութիւնը, որ աւելի չէր քան թէ մի վայրկենի ութհարիւրերորդ մասը։ Այս շարժողութեան ժամանակամիջոցը կատարվում տասն ամսում կամ 304 օրի մէջ։ Այս շարժողութիւնը կամ օրօրումը երկրագունդի բևեռների, համեմատ է երկրի վերայ երկու և կէս գրկաչափի որ մի շատ փոքր մեծութիւն է։ Պ. Պենդերսի նկատողութիւնը գարձուց իւր վերայ շատ ուսումնականների ուշադրութիւն, ուրեմն և օգուտ ևս բերից։ Այս ուսումնապետի նկատողութեան ճշդութիւնը չէ ենթարկվում ոչ մի կասկածանքի։

Ներ դարումը հարկաւոր է ամենայն բանից օգուտ քաղել մինչև անգամ երկրագունդի ներքին կազմակերպութենից։ Բայց կարող են

հարցանել, թէ ի՞նչ յարաբերութիւն կայ մեր երկրի ներքին կազմակերպութեան և վաստակարարութեան մէջ, արդեօք այն, թէ կարելի էր երկրագունդի կենտրոնական կրակը բանի պիտոյացնել։ Այս հարցմանը կարելի է պատասխանել — այո։ Եւ արդարև, ինդիրը, օգուտ քաղելու համար մեր մոլորակի կրակից, չէ դիմադրում մեզ անյաղթելի դժուարութիւնք։ Աշխատենք ապացուցանել այս բանը։ Առհասարակ գործականութեան մէջ մեծ հանդէս ունի ջերմութիւնը։ Ջերմութեան միջնորդութեամբ մի սակաւ քանակութիւն ածուխի պաշտօն է կատարում մի մարդու օրական աշխատութեան տեղ։ Ջերմութիւնը մեզմում եղանակի խստութիւնը, ոչ միայն սաստկացնում բուսականների կերպարանագործութիւնը, այլև տալիս է ցուրտ աշխարհներին ընդունակութիւն յառաջացնելու ջերմ աշխարհների քնքուշ պտուղները։ Վերջապէս ջերմութեան միջնորդութեամբ բաժանում են և միաւորում զանազան նիւթեր։ Եւ այսպէս արժան է մտանել գետնի ներսը և ստանալ այն թանգագին տարրը, որ այնքան առատ գտանվում այն տեղ։ Երկրագունդի մէջ կան հանքեր. ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի, աղերի, քարեղէն ածուխի։ բայց կարելի է ասել, որ բովանդակ երկրագունդը բաղկացնում մի ահագին հանք, մի շտեմարան ջերմութեան։ Այս տեղ հարկաւոր չէ փորել այն նշանաւոր հորերը Մօպերտուի, որ կամեցած էր որպէս թէ ծակել բոլոր երկրագունդը հակոտնեայ աշխարհների հետ անմիջական յարակցութիւն բանալու համար, մեզ հերիք է չորս վերստ միայն ներս մտանել գետնի մէջ։ Արդէն երեք վերստ խորութեան մէջ մեք հանդիպում ենք եռացող ջրի հաւասար ջերմութեան աստիճանի, առաւել շատ խորութիւնը կարող էր տալ մեզ մի անվերջանալի աղբիւր սաստիկ ջերմութեան։

Մենք ապրում ենք հրաշքների դարում. ով կարող էր հաւատալ, ներկայ 19-երորդ դարու սկզբում, որ մարդիկ մի տեղից դէպ ի միւս տեղ պիտի տարվէին զարմանալի արագութեամբ կամ պիտի խօսէին միմեանց հետ հազարաւոր մղոն միմեանցից հեռի լինելով, փայլակի շուտափութեամբ։ Այս հրաշագործութիւնքը կատարեցին շոգին ու ելեքտրականութիւնը։

Վաղ ևս օրքան նոր հրաշքներ կը տեսանեն մեր զաւակները մինչև 20-երորդ դարու սկիզբը։

Ն . . . . . .

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

Օգոստոսի 23. ոչինչ արժանի ուշադրութեան նորութիւն չեմ կարող արձանագրել Ցիշատակարանիս մէջ, որովհետև չկան։ Ասացի ոչ-ամէն ուշադրութեան, ապա թէ ոչ այնպիսի չնչին գործողութիւնք, որպիսիք հրատարակվումեն Հայաստանի Մեղուի մէջ, շատ անգամ խելացնոր մարդու արժանի լօդիկայով, ես անարժան եմ համարում ներս բերել Ցիշատակարանիս մէջ, որովհետև ափսոսումեմ ժամանակիս, որ պիտի կորուսանէի, ափսոսումեմ ընթերցողներիս ուշադրութեանը, որ ըստ տեղը պիտի լարէին։ Մինչև այժմ սուտ աղգասէրների մէջ տիրած է մի ուղղութիւն, ամենայն բան որ վերաբերումէր աղգին, համարել գովելի և արժանի ուշադրութեան և այդ ճանապարհով որոշել աղգի բարեացակամութիւնը։ Դորա հակառակ, իմ ուղղութիւնը այլ է բոլորովին — ծլմաբէրդ ասել և կանգնիլ մէջ տեղումը։ Աղգը, եթէ ունի բանականութիւն և հասկացողութիւն, ուրեմն կը ճանաչէ ճշմարտութիւնը, ուրեմն և երկբայութիւն չկայ նորա դէպ ի ինձ բարեկամութեան մասին, իսկ եթէ չէ հասկանալու և առանց իւր օգուտը ճանաչելու պիտի բամբասէ մի մարդ, որ աղգի համար ճշմարտութիւն էր քարոզում և այնուհետև դառնալու էր ինձ թշնամի, այդ ևս իմ փոյթը չէ· պատճառ, այն փառք ու պատիւը և այն անարգանքն ու նախատինքը համարվումեն վաւերական և ուշադրութեան արժանի, որ հետևանք էին գիտակցութեան և ուղղախոհութեան։ Իմ համար մի և նոյն է մի յիմար մարդու ինձ պատուելը կամ անպատուելը, որովհետև նա յիմար է· և ամօթ էր ինձ սպասել նորա դատաստանին։

Նորան և նորան սուտ սուտ գովասանութիւններ և տաղեր գրելով չկամիմ պղծել իմ գրիչը և այդ անպարծանք հանդէսը թողումեմ սուտ աղգասէրների, Օբսկուրանտների, Եզուիտների և Մաքիավելլու հոգով տոգորված մարդերի գործակատարութեանը։ Թող նոքա, ինչպէս մինչև այժմ և այսուհետև ևս, աշխատեն խաբել մեր աղգը և սուտ ու չնչին գովասանութիւններով ներկելով նորա աչքը, նորա յանցանքը դնեն նորա առաջև որպէս առաքինութիւն և հեռացնեն ժո-

ղովուրդը ամենայն օր ճշմարիտ լուսաւորութենից, և մինչև անդամ սորա վերայ մտածելուց ևս, որ աւելի հեշտութեամբ և յաջողութեամբ կարողանան հաստատ պահել խաւարի դժոխային իշխանութիւնը մեր ցաւելի և արտասուելի ազգի վերայ։ Ի՞նչ է այդ մարդերի այսպիսի ուղղութեան շարժառիթը, ի՛նչ է, որ այդպէս հաստատ պահումէ դոցա իւրեանց կամակորութեան մէջ։ Բայց այս հարցմունքին ամենայն ստուգութեամբ պատասխանելով, արդեօք բորբոքելու չէ՞ինք նոցա դէպ ի մեզ ատելութեան փայլակները։ Ի՛նչ փոյթ. միանգամ ասացինք, որ յիմարի դատաստանը անվաւեր է, իսկ թէ այդ յիմարութեան հետ միաւորված էր մի կաղմուածքի մէջ և խաբեբայութիւն, տարակոյս չկայ, որ այդպիսիների խօսքը, կարծիքը, ցնորաբանութիւնքը իմ համար մի ժանգոտ կոպէկի արժանաւորութիւն չունին, ուրեմն պատասխանենք այդ հարցմունքին, որ շատ մարդ մեր ազգից կարող էր առաջարկել ինձ։

Ա՛յն շարժառիթը, որ ստիպումէ սուտ ազգասէրներին, նուիրելով իւրեանց անձը ստութեան սպասաւորութեանը, ամուր պահել խաւարի թագաւորութիւնը մեր ազգի վերայ, է դոյն այդ օբսկուրանտների անձնապահպանութիւնը, փառասիրութիւնը և շահասիրութիւնը։

Ընդհակառակն։ Եթէ այդ օբսկուրանտները մի տղայական, կամ աւելի լաւ պառաւական ցնորամտութեամբ համարումն իւրեանց անձը մի բանի կարգում մեր ողբալի ազգի մէջ, և եթէ մեր ազգը կամ գոնէ նորա մեծ մասը անդատողական երեխայի պէս կարծումէ թէ այդ սուտ ազգասէրքը, օբսկուրանտները, նղուտները և Վաքիավելու հոգով տոգորված մարդիկը, մի բան են, մի նշանակութիւն ունին որպէս մարդ, մարդկեղէն աշխարհի մէջ, դորա պատճառը է, մեր ազգի անկրթութիւնը և լուսաւորութենից զուրկ լինելը։ Ազգը մնալով այս սարսափելի դրութեան մէջ, վերևում յիշված սուտ ազգասէրքը և միւսները մնալու են նոյն յարաբերութեան մէջ դէպ ի մեր ազգը, որպիսում գտանվումեն այժմ։ Ապա եթէ ազգը լուսաւորվի, նայի յետ և յառաջ, քննէ իւր անցածը, ներկայն և գուշակէ ապագայն, այլև հոգաբարձու լինի սորան բարւոքելու համար, իսկոյն այդ րոպէին, որպէս մի էլէքտրական հարուածով վերջանալու են մարդ լինելուց նորա խարդախ, առաջնորդ ձևացած սուտ ազգասէրքը և միւսները։

Խաւարի զաւակները լաւ գիտեն իւրեանց գլխին գալիքը, այդ պատճառով, մի միայն իւրեանց անձը պահպանելու համար, ստիպվումեն որքան կարող էին թանձր ամպերով պատել ժողովրդի աչսութիւնը, չլարթեցնել նորան այն մահանման քնից, որով քնումէ նա հաղար տարիներով։ դորա հակառակ, սուտ սուտ գովասանութիւննե-

րը օրօրոցի երգի տեղ երգելով քնած ազգի ականջին, Թանձրացնել նորա սարսափելի քունը։

Փոռոնչրոնը։ Ա՛յժմ հասարակ ժողովուրդը մատով ցոյց է տալիս այդ պարոնների վերայ, որպէս մի երևելի ուսումնականների վերայ. պատճառ, զուրկ լինելով լուսաւորութենից չէ կարող զանազանել սևը և ճերմակը, իսկ եթէ վառվի ազգի առաջև Պրոմեթէոսեան լուսաւորութեան կրակը, այն ժամանակ անտարակոյս տեսանելու է ազգը թէ այն մարդիկը, որոնց վերայ նայելով զարմանում էր երեմն, ոչ այլ ինչ են, եթէ ոչ կամակոր տգէտներ, գիշերի գաւակներ և ստութեան սպասաւորք. այդպիսի դիպուածում ոչ թէ միայն ազգը ուրանալու էր նոցանից իւր յարգութիւնը, այլև անարգելու, և խայտառակելով նոցա խարդախութիւնը հալածելու ևս։ Սուտ ազգասէրքը, օբսկուրանտները, ենգուիտները և Մաքիավելու հոգով լեռնված մարդիկը լաւ վերահասու են այս բանին, ուստի և ստիպված են, իրեանց փառասիրութեան հարկը ազգից անընդհատ ստանալու համար, որքան կարելի է աշխատել հլու հպատակ պահել ազգը խաւարի բարեբեռնեան գերութեան մէջ։

Ճոռոնչրոնը։ Սուտ ազգասէրքը և միւս նոցա ընկերքը, որոնց անուննները քանի անգամ կրկնեցի, լաւ գիտեն, որ ազգը աւելի շուտով կը ստանայ մի գիրք, մի լրագիր, որ գովաբեր նորան. միտք չէ, որ այդ սուտ, խարդախ և երեխայական գովասանութիւնը մահագեղ էր ազգին. միտք չէ, որ նա լսելով այդպիսի գովասանութիւնք համարելու էր իւրեան կատարեալ և անկարօտ ազգ, և հետևաբար անհոգ մնալու վերացնել իւր թերութիւնքը և լցուցանել իւր բազմագիմի կարօտութիւնքը։ Ապա եթէ ազգը լուսաւորվի և ինքը այնուհետև սկսի քերել իւր վերայից այն թերութիւնքը որպէս դատապարտելի բաներ, որ մինչև այժմ սուտ ազգասէրքը և միւսքը դոյն այդ պակասութիւնքը գովել էին ազգին որպէս կատարելութիւնք, յանցանքը ձևացուցել էին առաքինութիւն, այն ժամանակ, առանց ամենայն տարակուսի, այդ տեսակ ստախօս գրքերը և լրագիրքը ոչ թէ միայն ընդունելութիւն գտանելու չէին ազգի կողմից, այլև դատապարտվելու, որ հրապարակում այրվէին գահճի ձեռքով, որպէս հոգևոր գործիք խաւարի բանակալութեան։

Մեր ազգը երկար ժամանակ, կամ աւելի ճիշդ և լաւ ասելով սկզբից մինչև այսօր, դաստիարակվելով սուտ ազգասէրների ուղղութեամբ, առաջնորդվելով նոցա ձեռքով, արդարև այս րոպէիս բացայայտ իւր խարդախ ազգասէրների ձայնի արձագանքը։ Նա սովորել է լսել ամենայն օր գովասանութիւն, և այդ պատճառով այժմ ևս ժա-

մանակումս, ճշմարտութեան ձայնը թիւրամ նորան որպէս մի օտար աշխարհից եկած ձայն։ Այդ ձայնը հասանելով նորա ականջին վշտացնում նորան, նա ասում, — այս ի՛նչ բան է, մեզ մինչև այժմ գովել են, պատուել են, այժմ մի քանի պարոններ բոլորովին այլ ուղղութեամբ վարվում են մեր հետ. ինչո՞ւ բացում են մեր պակասութիւնքը, ինչո՞ւ հրապարակում են մեր վէրքերը ..... մեք առողջ ենք, հիւանդ չենք, մեզ դեղ չէ հարկաւոր, «Ընկնե՛ք ջրվեժ և ջարդիքա», և կարօտ չենք այն պարոններին, որ ամենայն րոպէ ծակում են մեր սիրտը ..... Այս պատճառով, ճշմարտութիւնը հնչում Հայոց ազգի ականջին որպէս ձայն բարբառոյ յանապատի, որպէս մի քամի, որի ուստի գալը և ուր գնալը չկամ նա հասկանալ։ Միւս կողմից սուտ ազգասէրք և միւսերը, արդարացնելով ազգի դանգատը յաւելացնում են դեռ ևս, — դուք ի՛նչ զարմանալի մարդիկ էք, ինչո՞ւ ձեր արծաթով անարգանք գնում էք ձեր համար, եկէք մեր մօտ .... ձեզ հարկաւոր չէ նոցա դեղը .... թանզոգին է, մեք աւելի գիւրին գնով ամենեղ կը տանք ձեզ, այդ շատ լաւ է, և ի՛նչ հարկաւոր է ձեզ կեանք և շարժողութիւն, դուք մեր ձեռքումը պիտոյ է լինիք «ոչինչ» մի լոկ «ես»-ով, «ոչինչ» պէտք. դուք կամք չունիք ... ձեզ և հարկաւոր չէ լեզու և բանականութիւն, մտածեցէք մեր խելքով .....

Ո՛չ մեր բոլորի ներկայ դրութիւնը. այն սարսափելի խոցը, որ դարերով ճարակելով մեր ազգի հոգին և մարմինը աշխատում վերջապէս բոլորովին մեռուցանել նորան։ Եւ այդպիսի անկարգութիւնք եղել են և լինելու են միշտ անկիրթ ազգերի մէջ որպէս նաև մեր ազգի մէջ։ Ամենայն ժամանակ բանների նոր կարգը պատերազմ ունի հին կարգի հետ, լոյսը խաւարի հետ, առաքինութիւնը մոլութեան հետ, ճշմարտութիւնը ստութեան հետ. այսպէս է աշխարհի կարգը, այո՛, և նախախնամութեան կամքը, որ ընտրեալքը երևին։

Ո՛չ ճշմարիտ և ստոյգ մատենագրութիւնը մի հայելի է, որի մէջ ցոլանում ազգի կեանքը։ Եւ որպէս յարդի է այն հայելին, որ ճիշդ ցոլացնում իւր առաջև դրած առարկայի պատկերը, նոյն չափով մի մատենագրութիւն, որի մէջ ստուգապէս երևում ազգի կեանքը և պատկերը. սորա հակառակ, անպիտան է եթէ հայելին ուղիղ չէ, և չէ ցոլացնում ստուգապէս այն բանի պատկերը որ ցոյց էիր տուել, այսպէս և մատենագրութիւնը։ Այդպիսի մի մատենագրութիւն, որի մէջ այբը քէ է երևում իսկ քէն այբ, շինովի և խարդախ մի մատենագրութիւն է, ստութեան վարագուրով դիմակաւորված մի անձնաւորութիւն։ Ահա այդ մատենագրութեան մէջ վաստակումն Հայոց ազգի սուտ ազգասէրքը և միւս նոցա ընկերքը, փառք և պարծանք ղոցա։

Նոր մատենագրութիւնը, որ հարազատ մնալով ազգի կեանքին յառաջ է շարժվում այժմ մի քանի ճշմարտասէր և հեռատես պարոնների ձեռքով, հալածանքի տակ է ներկայումս. և այդ մատենագրութեան աշխատաւորների վերայ արձակվում են խաւարի զինուորների խեցգեղէն նետերը — լարակոտոր աղեղներից։ Ցուսահատութեան հետևանքը խելագարութիւն է, իսկ խելագարի համար չկայ կանոն, կամ պատշաճ, որովհետև խելք, բանականութիւն չկայ։ Այս դրութեան մէջ են այժմ սուտ ազգասէրքը տեսանելով, որ բուն ազգային հարազատ մատենագրութիւնը յառաջ է շարժվում, տեսանելով, որ նորա անխոնջ գործակատարքը արհամարհելով ամենայն արգելք և խափան, աշխատում են բանալ ազգի աչքը և դարանով հողի հետ հաւասարեցնել սուտ ազգասէրների և միւսերի անունը և անպարծանք յիշատակը։ Ցուսահատութիւնը կատաղեցնում ճշմարտութեան հակառակորդքը, որովհետև ոչինչ արգել չէ ճշմարտութեանը խորտակելու գլուխը խաւար վհիշապի, որ դարերով ծծել է մեր խղճալի ազգի արիւնը, քամել է նորա վերջին ոյժը և շինելով նորան մի մեռեալ դիակ, մի անշարժ և անկենդան էակ, զուարճանում իւր յաղթութեամբ։

Այդ խաւարատեսիլ գիշերի զաւակները, կամելով վնասել ճշմարտութեան հրապարակական քարոզիչներին, գայթակղութեան որոգայթներ լարելին ազգին. ասացին գրով և բանիւ, «Հեռի մնալ ճշմարտութեան քարոզիչներից, որպէս ազգի անարգողներից և չընդունել նոցա գիրը կամ բանը», բայց ազգի մէջ, փառք Աստուծոյ, գտանվեցան մարդիկ, որ սիրեցին ճշմարտութիւնը և ընդունեցին նորան, թէև փոքր էր այդ մարդերի թիւը, այնու ամենայնիւ ճշմարտութեան քարոզիչքը հերիքացան և իւրեանց գիրը կամ բանը չուղարկեցին այնպիսի մարդերի որ ամենևին խնդրած չէին, ճիշդ պահելով մեր Տիրոջ Քրիստոսի խրատը թէ, «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեսցեն.» և այս պատճառով ևս ազատ մնացին այն ծանր և անպատիւ աշխատութենից, որ օբսկուրանտների լրագիրը յանձնառու լինելով կատարել էր — լրագիր ուղարկել գանազան մարդերի որ խընդրած չէին, և մի քանի ամսից յետոյ հրապարակով, դոյն այդ լրագրի միջնորդութեամբ արծաթ պահանջել։ Ասացին — «ճշմարտութեան քարոզիչների լեզուն, որով խօսումեն կամ գրումեն, անպիտան է և անհասկանալի», բայց ամենայն մարդ հասկացաւ որ ընդունակութիւն և գործարան ուներ հասկանալու և մտածելու, և այդ չարախօսութիւնը արգել չեղաւ, որ մի քանի պարոններ իւրեանց լեզուն մաքրելին և կանոնի տակ դնելին հետևելով ճշմարտութեան քարոզիչների ոճին։

Խաւարասէրքը, թէև ոչինչ չեն տեսանում, բայց շօշափելով հասկացան, որ ճշմարտութեան քարոզիչքը չեն մոռացել կեսարի խօսքը age quod agis, որ դադարելու չեն ներգործելուց, մինչև որ բարձրանայ հայկական մայրաքաղաքի վերայ լուսաւորութեան արևը։

Եւ այս իրողութիւնը հեռի չէ այժմուս. սիրով բարեաւ մնա արևցէք ձեր ծնողք խաւարի հետ, մայրաքաղաքիս օբսկուրանտներ, շուտով ահա արևի ճառագայթքը նեղացնելու են ձեր աչքի լայնացած բբերը, որ ցուր տեղը բանալով մեծ մակերևոյթ, աշխատութիւն պիտի թանձր խաւարի մէջ լուսի շատ ճառագայթներ հաւաքելով բան տեսանել։ Գիտեմ, ծանր բան է զաւակի և ծնողի միմեանցից բաժանվելը, բայց ինչ պիտոյ է առնել, բնութեան կանոն է, որ զաւակները թաղեն իւրեանց ծնողքը։

Սուտ աղգասէրների սրտի մեծ ցաւի համար հարկաւոր եմ համարում ներս բերել Ցիշատակարանիս մէջ այն գրեանքը, որ տպվեցան և որ տպվումեն ժողովրդական ընտիր լեզուով.

1) Հոգեղէն կերակուր Հայոց երեխաների համար։
2) Վարդապետարան կրօնի։
3) Հանդէս նոր Հայախօսութեան, երկու մեծ հատոր։
4) Թատրոնական Հրէայ, (առաջին մեծ հատոր)։
5) Դքսուհի դը Շեվրեօզ։
6) Պաւլոս և Վիրգինիա։
7) Մինին խօսք, միւսին Հարան։
8) Ամբեներան Հայկական լեզուի։

Ամս բոլոր գրեանքը, որոնցից շատերը դուրս եկած են և միայն երկուքը (Պաւլոս և Վիրգինիա և Մինին խօսք, միւսին Հարան) գտանվումեն տպագրական մամուլի տակ, — կարող են հաւատարիմ առհաւատչեայ լինել ճշմարտութեան քարոզիչների ապագայում ևս անդուլ գործունէութեան մասին։ Եւ այսպէս յայտնումեմ ահա հրապարակով, որ ճշմարտութեան քարոզիչքը գործելու են անդադար, և չնայելով սուտ աղգասէրների, օբսկուրանտների և միւսերի դարանագործութեանը, ոչ թէ միայն շարունակելու են հիւսիսաւիայլ օրագիրը, այլև նոր նոր գրքեր ևս դուրս տալու։ Եւ այս գործունէութիւնը մի ժամանակաւոր բան չէ, այսօր մեք ենք դուրս հանդիսագիրքը, էգուց մեր աշակերտքը, ճշմարտութեան դրօշակի տակ նահատակվել յանձնառու կորիճ զինուորքը, որոնց թիւը աճումէ ու զօրանումէ օրէ օր։

Յնձայեք, սուտ աղգասէրք, օբսկուրանտներ, եզուիտներ և Մաքիավելլու հոգով խմորված պարոններ, կատաղեցէք և փրփրացէք, և ձեր պարսաւները որ գրումէք, որքան առանց լօգիկայի գրէք, այնքան

փառք ու պատիւ է ձեզ, բայց ապահովութիւն մի՛ արէք այդ պատուի մէջ, մի փոքր բաժին տուեցէք նորանից և ձեր միականի նախագահերին . . . . նոքա ևս թող մասնակից լինին այդ Հերոստրատոսեան պարծանքին, որովհետև մասնակից էին ձեր գործին, և դուք աշխատութիւնք, ամրացնելով ձեր ոտքերը նոցա ձիւթապատ ուսերի վերայ։

Իսկ մեք կը փառաւորենք ճշմարտութիւնը, մինչև ի սահ կ'աշխատինք դուրս վանել ստութեան և խաբեբայութեան դևը Հայաստանի նուիրական աւերակներից և կը հասանենք մեր հոգով չափ ցանկալի նպատակին, որ է կանգնեցնել այդ նուիրական աւերակների մէջ դրօշակ, որի վերայ ոսկեղէն տառերով գրած էր ՃՇՄՐՏՈՒԹԻՒՆ, իսկ ճշմարտութիւնը էր ինքն Յիսուս Քրիստոս, մեր փրկութեան միայնակ և անփոխանակելի միջնորդը, որի բարեխօսութիւնը անպակաս լինի ճշմարտասէրների վերայից։

ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆ.

—

Հիւսիսափայլի հրատարակողը խնդրուած օրագրի բարեմիտ մասնակիցներից, որոնց հաճոյ էր գալոց 1859 թուականին ստանալ *Հիւսիսափայլը*, նորոգել իւրեանց մանակցութիւնը, հասուցանելով հրատարակողին պատկանեալ արծաթը, որ է Մոսկվայի մէջ 8 մանէթ, իսկ միւս քաղաքների համար $9^1/_2$ մանէթ։ Տեղեկանալով հրատարակողը, թէ օրպիսի կարգադրութիւն առնելի էր նորան *Հիւսիսափայլի* տպագրելի օրինակների որքանութեան մասին, որովհետև այլապէս կարող էին ծնանիլ դժուարութիւնք, կամեցողների պահանջողութեանը կատարումն տալ, ծանուցանում նոյնպէս Հայոց պատուելի հասարակութեանը, թէ հրատարակողը գալոց տարում աշխատելու է, որքան կարելի էր, թէ առաւել վայելչացնել հայկական տպագրութիւնը և թէ առաւել ընդարձակութիւն տալ *Հիւսիսափայլի* ամսատետրակներին, միտ դնելով աղգասէր գործակիցների օգնականութեանը։

Ս. Նազարեանց։

Հիւսիսափայլի գործակատարքը գալոց 1859 թուականի համար լինելոց են այս արժանապատիւ պարոնները.

—

ՆՈՐ ՆԱԽԻՃԵՒԱՆԻ ՄԷՋ.

Առաջնի կարգի վաճառական, ժառանգական պատուաւոր քաղաքացի կարապետ Հայրապետեանց։

—Պ. Գրիգոր Սալխիեանց։

ՀԱՇՏԱՐԽԱՆԻ ՄԷՋ.

Պերայինիւ Մկրտիչ Դանիէլեան Սարգիսեանց, կօլլեժ. Ասեսոր։

ՂԱՁԱՐԻ ՄԷՋ.

Պ. Գրիգոր Սահակեանց։

Պ. Դաւսպար Մամալեանց։

ԹԻՓԼԻՃԻ ՄԷՋ.

Պ. Լէոն Էլմիրզեանց։

Պ. Գէորգ Ալիմեանց։

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ.

Գևրգվնիւ Ցարուխիւն Քալանթարենց, կօլէժ. Ասիսօր։

ՇԱՄԱԽՈՒ ՄԷՋ.

Ալինուական Մովսես Նեբոենենց։

ԱՖՈՒԼԻՍԻ ՄԷՋ.

Պ. Բաղդասար Փանչենց, կօլէժսկիյ Րեգիստրատօր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԷՋ.

Պ. Ցարուխիւն Եղենց, Արևելեան Լեզուագիտութեան կանդիդատ։

ՄՈՍԿՎԱՑԻ ՄԷՋ.

Պ. Մելքոն Գասպարեան Փանչենց և Հրատարակչէ։

ԲԵՍՍԱՐԱԲԻԱՑԻ ՄԷՋ.

Բելցի, կուրէյ և Թելենշտի քաղաքների Համար,

Պ. Գաւրիել Բալեանց։

ԿԱՐԱՍՈՒՆԴԻ ՄԷՋ.

Պ. Կարապետ Սեվինենց։

ՔԵՕԹՈՍԻԱՑԻ ՄԷՋ.

Պ. Մանուկ Ալեոնենի։

ՔԵՐՉԻ ՄԷՋ.

Պ. Պաղտոս Եբեդովենց։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻ ՄԷՋ.

Պ. Մատթէոս Եբեդովենց։

ՍՏԱՒՐՕՊՕԼԻ ՄԷՋ.

Պ. Սիմէօն Խաչերեսեան Ալպալեանց։

ԳԻՕՐԳԻԵՎՍԿՈՒ ՄԷՋ.

Պ. Բաղդասար Իսմիանուելեան Խաճայենց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիքական յայտնագործութեանների, հասարակաբոս Ատեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլոգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի ըոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդաղօդուստ գիւտերի և յայտնագործութեանների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից· այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ձանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հաստացանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի Հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Августа 21-го, 1858 года.

Цензоръ Пахаузовъ.